

ՕՐԱԳՐՔ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԶԳԱՑԻՆ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԳԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ

1861

ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԵԳՆԱՑՔ.

ԱՄՍԱԳԻՐ **11.**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

	Եր֊
ԱՄԵՆԱՑՆ ԻՆՁ ՍՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԽԱԲԷՈՒԹԻՒՆ. (Անցած ու ներկայ օրերից առած պատկերներ) Շարունակութիւն.— Ս. Նազարեանց:	331—349
ՎԵՆԵՏԿԵՑԻ ՎԱՃԱՌԱԿԱՆ. Ն. Բ.	350—365
ՍԷՐ ԵՒ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ. (Շարունակութիւն.) Ս. Նազարեանց:	366—383
ԾԱՆՈՒՑՈՒՄՆ Հին անհասկալի պատմելի ընթերցողներին. Ս. Նազարեանց:	384—391
ՆԱՄԱԿ ՈՒՐՄԻԱՑԻՑ. Մելիք Ճակոբեանց:	382—399
ԻՏԱԼԱՑԻ ԱՂՋԿԱՑ ԵՐԳ 1859 ԹՈՒԱԿԱՆԻՑ. Կ. Էմինեանց:	400—402
ՀՈՒՆԳԱՐԱՑՈՑ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵՆԻՑ ԱՌԱՆՁ. 1. Երգ մի զօրականի. 2. Դէպ ի Գարունը. Մ. Բուզաղեանց:	403—404
ՏԵՍԻԼ. ԱԶԳ. ՎԱՀՈՒՆԻ:	405—410

ՓԱՄՓԱԿԱՑ,

ВЪ ТИПОГРАФІИ ЛАЗАРЕВСКАГО ИНСТИТУТА ВОСТОЧНЫХЪ ЯЗЫКОВЪ.

1861.

ՆՈՅԵՄԲԵՐ 1861 ԹՈՒԱԿԱՆԻ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ.

ԱՄԵՆԱՑՆ ԻՆՉ ՍՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԽՐԻՒԹԻՒՆ.

ԱՆՑԱԾ ՈՒ ՆԵՐԿԱՑ ՕՐԵՐԻՑ ԱՌԱԾ ՊԱՏԿԵՐՆԵՐ.

Veritatem sequi.

(Շարունակութիւն.)

18.

Ա՛ր զմայլեցուցիչ անտառի մէջ վանականութեամբ բնակչանուն մի կաղնի, որի տերևազարդ ճիւղերը տարածուած էին բոլոր շուրջը հովանաւոր սաւառն և թարմացուցիչ զովութիւն: Այս ճիւղերից մինի վերայ նստած էին երկու աղաւնիք, վայելչապէս միչեւալ ընդդէմ միմեանց, քնքշութեամբ լի, կտուց առ կտուց համբուրելով միմեանց: Ա՛խ դնելով նոցա թևերի թեթև շարժողութեանը, նոցա պտերի արագ զարկողութեանը, նոցա հաւասքի կենդանութեանը, նոցա բոլանդակ մարմնի թեթև այս կողմ ու այն կողմ թրթռանքին, հեշտ կարելի էր նկատել այն

յիակատար քաղցրութեան կրակը որ շուտ շուտ վաղումէր նոցա երակներուն մէջ։

Ա՛յս կարգնու ոտքումը գտանվումէր մի հովանոց, փոքրահասակ թուփերուն ճիւղերով յօրինած, որ իւրեանց տերևներուն դուռնափայլութիւնը վայելչապէս զուգահատնումէին ծաղիկներուն ա՛նուշահոտութեան հետ։ Օդը, որ այս տեղ ներս էր մտել, ասես թէ կամէր մի րոպէ մնալ այս տեղ իւր անձը զովացնելու այս բալասանական անուշահոտութեամբ և յետոյ յաղեցած, դեռ ևս դուրանից մի մասը առնուլ տանել իւր թեթև թևերուն վերայ։—

Ա՛յս փոքրիկ դրախտի մէջ նստած էր մի կոյս աղջիկ երկնային կերպարանքով. նորա ոտքումը ծունր էր խոնարհեցուցել մի պատանի, սիրոյ դողութեամբ դիմելով նորան։

Ա՛յս սիրողներուն աչքերը միշտ հանդիպումէին միմեանց և նոցա հայեացքը մի կողմից միւս կողմ արձակուելով, փոխադարձաբար տալիս ու առնումէին իւրեանց հոգիքը։ Ե՛ւ նոցա ձեռները միմեանց հետ ամուր զուգահատնուած, նկատելի կերպով ցնցվումէին սիրոյ զգացողութեամբ։ Ե՛ւ նոցա շրթունքը դողումէին սիրոյ բորբոքմանից. նոքա փափադով ծծումէին միմեանցից սիրոյ աւետամաքուր շունչը։ Ե՛ւ նոցա սիրտերը լսելի կերպով զարկումէին սիրաշնչութեամբ բարձրացած կուրծքի մէջ։

Ո՛րքա չէն խօսում։ Ե՛ւ ի՛նչ լեզու կարողացած կը լինէր խօսքեր գտանել, նկարագրելու այն զգացողութիւնքը որ նոցա հոգու խորքի մէջ հանդիպումէին միմեանց։ Ե՛ւ ի՛նչ խօսուածք լինելու էր աւելի լաւ հասկանալի, քան թէ այն կենդանախօս հայեացքը, յայտնապէս մերկացնելով սրտի ամենախորին խորշերը։

Ե՛ւ անբաւբառ ու անշարժ մնալով այսպէս, աննկատելի չքաշնումէին ժամերը նոցա համար։

Ո՛չյց սիրտերը իւրեանց լեզուով անդադար երդվումէին սիրել միմեանց, անփոփոխելի հաւատարիմ լինել միմեանց յաւիտեանս յաւիտենից։

Ընդունիքը նոցա գլխի վերայ կտուց կտուցի տալով, երդմամբ հաստատումէին իւրեանց ուխտը, նոյնպէս խօսելով. և նոցա սէրը պիտի լինէր յաւիտենական։

Ե՛ւ ա՛հա մի որսորդ սպանեց մինը այդ աղաւնիքից. միւսը ցաւով և տրտմութեամբ լի, ծածկեց փոքրիկ գլուխը իւր թևերի տակ և փափաղով սպասումէր իւր վախճանին, որ շուտով հաս-

ցրեց նորան մի յաւիտական բաղէ, նորա բարձրանալուց օթևանում ձգելով նորան իւր ճանկերի մէջ, տանելով և տատակեցնելով նորան:

Ընդհէք և այն սիրողները այնպէս հաւատալիմ են, որպէս այս աղանդիքը:

Նրանց հաւատալիմ սէրը առաքինութիւն է, ապա պղտորւե նա պիտի առնայն բանից առաւել զարդարէ մարդկային սիրտը. պատճառ, որան պէտք է լինել աւելի կատարեալ քան թէ օդաբնակ թռչունների սիրտը:

Մի տարի սորա վերայ անցած, մի մանուկ աղջիկ դրած էր մի երիտասարդի գրկախառնութեան մէջ, տատիկ բորբոքուած սիրով: Յետոյ ջերմ սեղմումներին նորա շրթունք շրթունքի վերայ — նորա սիրոյ շունչը խառնվումէր մինը միւսի հետ և նորա մտքերը դողումէին հեշտախտութենից:

Երիտասարդը մի և նոյն էր, և նորա սիրոյ կրակը այն հովանոցի մէջ այրուելով շիջել էր:

Նայց մանուկ աղջիկը չէր մի և նոյն:

Պատճառ, այն կոյս աղջիկը սիրոյ հովանոցի, դատնվումէր այնուհետև մի հոյակապ ժողովի մէջ, մի, ուրուց ու ձրագներով վայելուն դահլճի մէջ, ուր մի անլսելի փառահեղութիւն հարիւրապատիկ կրկնումէին հայելիքը: Նոյն ինքն աղջիկը վայելչութեամբ, հրապուրիչ գեղեցկութեամբ լի, կուռը տուել էր մի երիտասարդի, որ ախորժելով և ցանկասիրութեամբ արդէն կանուսմէր նորան սանձ մի հայեացքով:

Նորա պարզ դալով փոթորկի պէս պտուտվումէին մի խոյտամամուռ համախոհ բաղմութեան մէջ: Եւ երբ որ ոտերը դադարել էին խաղալուց նուագածութեան չափ ու կշռով, այնուհետև երկուքը սեղմումէին միմեանց ձեռք. և մի աղաչական հայեացք բևեռելով իւր ընտրածի վերայ, փորձ է փորձում պատահնին մի սիրահաստական բառ շշնջել նորա ականջին: Մանուկ աղջկայ սիրտը դողումէ այս բառից, և նորա թուշերը կարմիր ներկվումեն ամօթուց: Այնպէս էր, որպէս թէ այս առաջին անգամն շօշափումէր նորա հոգին մի սիրոյ շունչ:

Ու լուռ ճեպով, պատահանից նա երիտասարդին իւր հայեացքով միայն:

Երիտասարդը հասկացաւ նոյնպէս այս լեզուն, նորա մէջ դող ընկաւ հետաքրքրութենից:

Երիտասարդի և կոյս աղջկայ առաջին սէրը այն սիրոյ հովանոցի մէջ տևել էր միայն 6 ամիս:

Երկրորդ սէրը չտևեց և դորա կէսը և երրորդը եղաւ ևս առաւել կարճատև. բայց վերջորդը հաղիւ թէ տևեց այնքան ժամանակ, որքան դործ էր ածել Աստուած, աշխարհը ստեղծանելու համար: Ու սրանից յետոյ հանգստանում էին սիրտերը — հոգնութենից. սիրոյ վերջին հետքը չքացել էր:

Բայց այսուհետև այնքան ևս շատախօսում էր բերանը սիրու վերայ. ամենայն օր, ամենայն ժամ կրում էր նա շղթունքի վերայ բառս «էր»:

Ու այսպէս այն երկուքը, որ մի ժամանակ սիրում էին միմեանց, սկսան այնուհետև յիմարեցնել միւսերը որ դեռ ևս միմնում էին հաւատում էին սիրուն. երիտասարդը մոլորեցնում էր այս և այն կոյս աղջիկը որի սիրտը հաղիւ թէ զարթեցրել էին մի նոր արեգակի ճառագայթները. մանուկ աղջիկը որոգայթ էր լարում երիտասարդների որ, սիրոյ մէջ անփորձ լինելով, ուրեմն դեռ ևս ուսած չէին սիրել, առանց սէր զգալու իւրեանց սրտի մէջ:

Մի՝ակ զգացողութիւնը այն երիտասարդի մէջ էր մի լոկ — կարիք հաճոյութեան:

Մի՝ակ զգացողութիւնը մանուկ աղջկայ — լոկ պիտոյք նորա փառասիրութեան և հետաքրքրութեան:

Ուրեմն նոցա սիրտերը դատարկ էին:

Այսքան երկար տևեց յաւիտենականութիւնը այն հաւատարիմ սիրոյ, որ նոցա սիրտերը այնքան յաճախ ուխտած էին միմեանց:

19.

Մի փառաւոր զարդարած սեղանի առաջև կանգնած էր քահանան, նորա առաջև մի երիտասարդ և մի կոյս աղջիկ, մի մրաւէնի պսակ նորա մազերի մէջ: Ահա մի բուռ յատաջ, որքա փոխել էին միմեանց հետ մատանիքը, և ահա, այնու ամենայնիւ

լսելը ձայնով հրատարակել էին իւրեանց, շատ անգամ ալդէն կրկնած սիրոյ ուխտը — ուխտը հաւատարիմ, մշանջենաւոր սիրոյ — նաև այս աստուածանուէր տեղւոյն:

Այս աղջկայ սիրտը դղրդուած էր հիմնովին. նորա մէջ աչքերում փայլումէին — գոհարների պէս երկու արտասուք. դոցանից մինը տուել էր ցաւը մայրական զրկանքի վերայ, միւսը ուրախութիւնը իւր ջերմ սիրած դաստը արեգակնափայլ բաղդի վերայ:

Ու բոլոր հարսնածու աղջիկները, որ ներկայ էին, զգացին իւրեանց սրտի խորքի մէջ դատարկութիւն, որ կարող էր միայն լցուցանել մի ցանկութիւն, այսինքն մանուկից լինել նորահարսի բաղդաւորութեանը:

Ու բոլոր երիտասարդները ծածկամտարար ժպտումէին և շնջումէին դէպ ի միմեանց կողմ անպարկեշտ խօսքեր:

Մ'ևք նայումենք մի դալար, քնքուշ անուշահոտութեամբք խնկաւորած, շատ փառաւոր և պատուական կահ ու կարասիքով զարդարած սենեկի ներսը, հեռի փողոցից և ամենայն աղմկի երեսից սպաշտպանուած: Յետնակողմում, կիսով չափ հովանաւորուած, գոռնովումէ մի անկողին, զեղխութեամբ կակուղ և սպիտակ որպէս նոր եկած ձիւն, ամենևին հաւատարիմ նմանատիպը կոյս աղջկայ, որ ահա մտնենումէ նորան:

Նորահարսը ներս է մտանում, աչքը ամօթխածութեամբ դէպ ի ցած թողնելով, անհաստատ քայլերով և կողքը տուած իւր մօրը:

Մայրը օգնական է լինում նորան, հանդերձը հանելու վրայից, արձակումէ մրտենի պսակը նորա մազերից և — խորին հառաչանքով հետ է քաշվումէ:

Ամենց բացվումէ հարսնարանի դուռը — մի երիտասարդ ներս է մտանում և փակումէ դուռը իւր հետևից: —

Մահճի վարագոյրները յետ են քաշվում և իսկոյն ծածկվումեն — այլ ևս ոչինչ կարելի չէ տեսանել. թէպէտ այդ լսվումէ շշնջիւն երկու ձայների որ համբոյրներով կրկնումեն միմեանց հաւատարիմ սիրոյ երդումը: —

Ու գրեթէ մի ամբողջ տարի կրկնումէին ամենայն գիշեր մի և նոյն երդումը այս մահճի մէջ, այս անկողնի վարագոյրների յետ

քում: Ասայց առնոյն դիշեր այդ երդումը կորուսանելէն մի բան իւր ազդեցութենից և խորհրդից: Ակզբում միշտ յառաջընթաց էր նորան մի սիրահարոյր, և մի այլ սիրահարոյր կնքումէր նորան. ապա չհետևեցաւ ոչ մինը աւելի, վերջումը յետ մնաց և յառաջընթաց հարթոյրը:

— Այնուհետև բերանը սովորութեամբ միայն արտասանում էր այն երդումը — բայց սիրտը չէր դորան այլ ևս մասնակից. վերջումը դադարեց և բերանը երդուելուց:—

Տասերկու լուսնամիջոցք անցել էին այն ժամանակից, երբ Հարսն ու փեսան Աստուծոյ սեղանի առաջև ուխտել էին միմեանց հաւատարիմ սիրոյ ուխտը. բայց նոքա հաշվումէին տասն լուսնամիջոցք միայն, որովհետև առաջնին երկուքը երբէք նկատած չէին, որ և նոցա համար շուտով չքացել էին սիրոյ խաղերի մէջ:

— Սօֆան չէ այնքան կակուղ. այս օթոցի (խալչայի) գոյները շատ բաց են, այլև պատուհանների վարագոյրները շատ խոշոր են, կոշտ են: Ծարպարուելու հայելին անչափ փոքր է — հազիւ թէ կարելի էր տեսանել նորա մէջ իւր դլուխը և պարանոցը:— Շուտ արա, հոգացիր աւելի փառաւոր, աւելի ճոխ կահ ու կապանիք: Պիտոյ է մանաւանդ թէ առանձնարանը շատ հրաշալի կերպով յօրինել, այնպէս, ինչպէս կարելի էր միայն պատրաստել մի սիրոյ տաճար: Էհա ձեզ ոսկի և արծաթ, դնացիք, կողոպտեցէք ամենաճոխ շահեմարանները, և հոգացէք ամենայն զեղուճութիւն և փառահեղութիւն, որ միայն գտանելի էր:—

Այսպէս խօսեց արուեստաւորի հետ տանուտէրը, որ մի փոքր յառաջ դրել էր ամուսնական հաւատարմութեան ուխտը:

Այժմ պիտոյ է հարցանել, արդեօք իսկապէս իւր ամուսնու համար պատուիրեալէր նա յօրինել այս առանձնարանը.— — —

Սիրոյ տաճարը վերջապէս յօրինած ու պատրաստ է: Մեղ ծանօթ պարոնը ներս է մտանում՝ այն տեղ, կուռը տուած աստուածուհուն որի համար այս բոլոր զեղուճութիւնը և փառահեղութիւնը սահմանել է: Տիկինը հանդստանում է սօֆայի վերայ և պարոնը նստում նորա կողքին, չերմեռանդութեամբ աղջունելով նորան և սիրաբոլբոք զննելով նորան:

Բայց սիկիլինը ունի միայն հայեացք այն դլուխի համար, որ այնուհետև համարումէ իւր սեփականը:

Կա հիանում է, զարմանում է, խելքը վերայից դնում է, տեսանելով այն բոլոր փառահեղութիւնը իւր շրջակայքում, և նորա աչքերը փայլատակումեն — սիրտը փառասիրութեամբ լցուած:

Ընդհետև միտք բերելով և այն տղամարդը, որի հզօրութիւնը կախարդողապէս հնարել է նորա համար այս հրաշները, դարձրեցնում է իւր երեսատակէտ հայեացքը նորա վերայ — և սա մեկնում է դորան իրրև սիրոյ հայեացք:

Բայց սիկիլինը դիտէ արդարութեան և պատշաճի պահանջկերքը — և որովհետև մեծ պարտք բարձել է իւր վերայ, շտապում է նա ձշդութեամբ հատուցանել դորան:

Բայց նա ունի ֆ հաթ դանձ — սէրը — և նա դանդաղում չէ դորան ընծայել այն մարդուն որ իւր ոսկին այդպիսի առատաձեռնութեամբ շնորհել է նորան:

Այս ամեն մի ծանրագին բանի փոխարէն հատուցանում է նորան սիկիլինը մի սիրոյ շնորհ:

Ոսկով տալիս է նա իւր սէրը. այդպէս, տալիս է նա սէր այն փառաւոր հայելիների, այն պատուական նկարների, այլև այն զուտ մարմնաբնութեայ անօթների համար, այն մեծաքանակ վարագոյրների և այն ճոխագործ օթոցի, բոլոր կահ ու կարասիքի համար, կարճ ասեմ, և այն վեղև փափուկ անկողնի համար:

Սէրը նորա մէջ այն անապատելի դանձն է, այն դահեկանը որ ամենայն տեղ ծանօթ է, և նա դիտէ նոյնպէս վաղուց արդէն գործ դնել դորան, բոլոր պարտքերը անյապաղ վճարելու, և ամենայն ժամանակ կատարումէ դորանով մի շատ փառաւոր վաճառականութիւն: —

— Բաշալը ճանապարհ վատաւարութեան: —

Այս արդեօք սէր է այդ, որ նա վաճառումէ այդպէս: — Ամենևին ոչ:

Սէրը ընծայումէ իւր անձը — և չէ վաճառում իւր անձը: Երբ որ նա մօտենումէ ոսկուն, իսկոյն սիրտ յաղթուէ, մեռանի, և ինչ որ նորանից յետև է մնում, է միայն նորա հոգեկէն դիակը — շուտով դառնում է մի նեխած դիակ, որին առումենք պղծութիւն: Այս կնամարդին, որ այդպէս շուտով ոսկու համար անձնատուր եղաւ աղամարդին, անուանենք — — — մի պոռնիկ կին: —

Այս տղամարդի ամուսինը նստած էր այն սենեկի մէջ, ուր մեք տեսանք նորան որպէս նորահարսն ամօթխածութեամբ ներս մտանելով։ Ի ձեռնով, սատափիկ բորբոքուած, պինդ բռնել էր նա երկու փոքրիկ նամակներ, և միւս ձեռի վերայ հաստատել էր իւր մտածմունքից ծանրացած գլուխը։

Ես թէ ինչ խորհրդաւոր մտածութիւնք պղտորութեին նորա հոգու խաղաղութիւնը, դորան վերահասու ենք լինում նորա ինքն իւր հետ ունեցած խօսակցութենից։

— Աստուած իմ, ինչ պիտոյ էր առնել ինձ։ Ինչպէս պիտոյ էր ազատուիլ այս հոգևկան տանջանքից։

Ի՞նչը դոցանից այնքան նազելի է. նորա բոլոր դոյութիւնը լի հանճարով և քնքուշ սիրով։

Ախյց նա անչափ մանուկ է — շատ անփորձ է։

Ի՞ւսը իւր մեծ հոգեվից աչքերով և իւր նուրբ ջուտա կերպարանքով ոչինչ պակաս գմայլեցուցել չէ ինձ։

Ախյց, ախոն, նա ամուսնաւոր տղամարդ է և ունի շատ ու շատ փորձառութիւն քան թէ սիրոյ պատճառով կարող էր սիրել ինձ։

Աստուած, ինչ տարակուսական, ինչ յուսահատեցուցիչ պլութիւն է այս։—

Նրբ որ նա այսպէս խօսել էր ինքը իւր հետ, սկսաւ դարձեալ կարդալ երկու նամակները և նոցա խօսքերը համեմատել միմեանց։

— Այն նամակը առանց տարակուսի գրած է աւելի լաւ ոճով։

Ախյց աա, ասես թէ, գրած է աւելի ջերմութեամբ։

Աստուած, խորհրդակից եղիր ինձ — ո՛րը պիտոյ է ինձ ընտրել։— — —

Այն րոպէին ներս մտաւ նորա ամուսին տղամարդը։

Այնու հետև երկիւղը պրոպաքսեց նորա բոլոր տարակոյսները, և շուտով յանձնեց նա պատուական նամակները երկու ապահով պահապանների, որ մի սիրալից ամուսին տղամարդի նոյն իսկ աչքը լոյս ցերեկով համարձակվում չէ փորձել։

Նորա ամուսին տղամարդը չունէր ոչինչ խօսք և ոչ իսկ մի հայեացք նորա համար։ Նա մտածումքը այն գեղեցիկ պռունկի կնոջ առանձնասրանի վերայ, ուր պակաս էր մի ծաղիկների – ոնօթի որ կամենում լրացանել իւր ամուսին կնոջ հայելու սեղանի վերայից։

Բայց և ամուսնին կինը իւր կողմից լուռ մնաց և չպժտանաց ոչինչ իւր տղամարդը ոչինչ ակնարկութեան։

Այս մտածումէր միայն իւր երկու սիրտերի վերայ — և վերջապէս խորամանկութիւնը տուաւ նորան ամենալաւ ելքը բանի։

Նրբը որ տղամարդի ամուսինը յետոյ դարձեալ իւր առանձնաբանութիւն էր, իսկոյն երևեցաւ սիրտերի միութիւնը, սիրալից երիտասարդը, որ այժմ բերանացի պատասխան ստանայ իւր բոցավառ սիրոյ գրութեան յայտարարութեանը։

Եւ այդ պատասխանը ընդհատարար հայհոյքով եղաւ այսպէս.

— Ո՛ւռ չար, դու յանդուգն տղամարդ. քո կատաղի սիրուցը պիտոյ է զարհուրել. նախ և յառաջ ուսիր սանձահարել քո անձը — ապա թէ ոչ, ես չկամիմ քեզ վերստին տեսանել։—

Փոքր ինչ յետոյ նկատ միւսը, նրբահասակ, ջլուտ կերպարանքով, որ նոյնպէս լսէ իւր դատակնիքը։ Եւ հարկաւ թէ նոյն պատասխանը նոյն կերպով տրուեցաւ նորան։

Ութ օր յետոյ երկու սիրտքն ևս — բաւական հովացած, էլին այլևս այնքան սիրաբորբոք. նոքա սիրոյ բաժակը արդէն լի չափով վայելել էին։— — —

Այ երջապէս տղամարդ ամուսինը կատարածանք առաւ ղժուժէր իւր գլուխը մի օտար կերպով ծանրացած։

Բայց ամուսնին կինը վաղուց արդէն հաւատաի էր, որ խաբվումէր նորանից։

Եւ այնուհետև լուռեցան թշնաւոր և լեզի խօսքեր փոխանակ սիրոյ խօսքերի։

Եւ գործը չմնաց մի լոկ յանդիմանութիւն, շուտով մի կատարեալ ատելութիւն ձանապարհ ստացաւ ոչ թէ միայն խօսքերով, այլև գործերով, և յառաջացան այնպիսի տգեղ տեսարանները որ պատմելու կարողութիւն չունի մեր լեզուն։

Քահանան օրհնել էր նորանց — և նոքա այժմ անիծուէին միմեանց։—

Նոցա սիրոյ կրակը վառուել էր միայն 2 ամիս և նոցա հաւատարմութիւնը տևել էր հազիւ թէ մի տարի։ Երկու ամիս յետոյ նոքա արձակեցին այն կապը որ պիտոյ է միաւորէր նորանց բոլոր կեանքի միջոցը։

Կոջա հանդիսաւոր երդումը ընկել էր մոռացութեան անդունդքի մէջ, ուր խորասոյզ են լինում մարդերից առաւել շատերի աւած երդումները։—

Ո՛վ այսուհետև կարող է ամուր հաւատալ երդումների, սիրոյ և հաւատարմութեան։—

Ես գոնեայ չեմ հաւատում դոջա։

— Դա մի գալշելի բան է, ասելու էին մարդիկ։

— Այո՛, աւելի քան թէ գալշելի — զարհուրելի է դա. բայց զարհուրելի ճշմարտութիւնը մնում է յաւիտեան ճշմարտութիւն, և ճշմարտութիւն է և մնում այս.—

Թէ մարդկային ուխտերի և մարդկային խոստմունքի մէջ շատ սակաւ գտանվում է փոքրիկ հետք ճշմարտութեան։

20.

Ինչպէս զմայլեցուցիչ այս երկու փոքրիկ երեխայքը, եղբայր ու քոյր խաղում են միմեանց հետ այգու մէջ։

Ինչպէս քաղցր է ինձ տեսանել նորանց այնպէս ուրախ վեր ի վայր շրջելով և միմեանց քամակից վազելով, այժմ զուարճութեամբ թռչելով դէպ ի այն կողմ, ապա վայր ընկնելով, դալարավայրումը մաքառելով, գլորելով միմեանց, վեր թռչելով, փախչելով այն տեղ, ըմբռնելով և գրկախառնելով միմեանց, դարձեալ արձակուրդելով միմեանց և որպէս պատիժ մի համբոյր տալով քաջութեամբ — մի համբոյր որի վերայ կարող էին նախանձել հրեշտակները երկնքում։

Կոջա երեսը ծաղկափթիթ որպէս մի բացուած վարդակոն, և պայծառ ու խաղաղ նաև ամենուրախ բորբոքման մէջ — իբրև մի բարեպաշտան ծովակի կոկ ջուրհայելի — վառվում է մի ճշմարիտ լուսակամարով որպէս ամենաակնդանի ցոլացումը շատ բաղդաւոր երեխայական հոգիների։

Այսպէս տեսանելով երեխայքը, ամէն մարդ կը փափագէր մոռանալ թէ հասակաւոր տղամարդ էր, և իսկոյն դարձեալ երեխայ դառնալ, այնպէս բաղդաւոր և անմեղութեամբ լի, ինչպէս սոքա են։

Ոչինչ պահապան չէ հսկում այն անմեղ խաղերի վերայ։— Եւ ինչ հարկաւոր էր հսկողութիւն։ Մի պահապանի մօտակա-

յուԹիւն անպատճառ աւերելու էր այն մաքուր օդը որ նոքա լի ափով ընչումեն, և կը խառնակէր նոցա տղայական ուրախուԹիւնը։

Ընդհակառակ, այն տեղ, այգու դարպասի մօտ տարածուած, պաշտպանուած նոցա մի հաւատարիմ բարեկամ — մի էակ, այնպէս անմեղ, ինչպէս նոքա, մի մեծ սև գոմէշ-արդեան շուն։

Իւր աչքերով հետեւում էր նա նոցա ամեն մի քայլափոխին, զննում էր նոցա ոտաՀունքը, խաղերը, երեսների կերպարանքը — և երեւում էր նոցա հետ բաղդաւոր և նոցա հետ ուրախալից։

Բայց զննելով դորանց, ուշադրուԹեամբ ականջ է դնում նա ամենայն ԹԷև ամենափոքր աղմուկի դուրսից. և երբ որ մօտենում էին այս սրբարանին օտար քայլեր, սկսում էր նա իսկոյն վերին Հուրթը դէպ ի վեր քարշել և մի աղօտ կաղկանձիւն ամուր փակած առամների յետքում դուրս խթել։ Իւր երկու բարեկամների Հանդէպ, Հաղար անգամ և ուրախուԹեամբ զնացել է նա դէպ ի մահ, միայն ԹէՀ ունենար նա Հաղար կեանք ընծայ բերելու։

Դորա փոխարէն ինչպէս սիրում ու փայփայումեն նորան երեխայքը։ Ոչ մի քաղցր ուտելի բան չէ դնում նոցա ձեռքից դէպ ի բերան, որից նոքա մասն չՀանէին իւրեանց հաւատարիմ բարեկամի Համար։ Թէպէտ նա չէ ընդունում այդ տուրքը, բայց և երբէք մոռանում էին այդ մատուցանել նորան։

Ընտանի խաղի, ամենայն ծնողասիրուԹեան, ամենայն զբօսանքի և ամենայն ուրախուԹեան մասնակից է լինում այդ Հաւատարիմ բարեկամը։

Նրբայրը փայփայում էր իւր քոյրիկը և սա փաղաքշում էր իւր եղբայրը — ապա երկուքը միմեանց փաղաքշելով գնում էին շան մօտ, և սա այն երկքի միջից անտարակոյս առաւել բաղդաւորն է, որով Հետև ստանում էր երկպատիկ փայփայանք։

Եւ նա իւր կողմից գործ է դնում աչքը, ականջները և առաՀները իւր սիրելի մանուկ բարեկամների Համար միայն։

Այսեղէք, ինչպէս այս — և իրաւամբ շատ անգամ — այնքան երկիւղալի անասունը ՀամբերուԹեամբ, մեղմուԹեամբ, դառնի ՀեզուԹեամբ ընկերակից է այն երեխաներին։ Կարծէր էր նոցա մայրը աւելի խնամատարուԹիւն և քնքուշ սէր ցուցանել նոցա։

Այդ շան ահալուկ երակը մի լոպէի մէջ կարող էր մի մարդ պատառել — բայց այս փոքրիկ աղջիկը բանջումէ դուրան այդքան հեշտութեամբ, այդպիսի միամտութեամբ իւր քնքուշ մատներով, ապա իւր փոքրիկ հրեշտակային դլուխը կոխում նորա երակի մէջ. բայց շունը ոչինչ ձեռս չէ տալիս նորան. նա ուրախանում այդ մաերմական խաղի վերայ և ախորժութեամբ լիզում լեզուի ծայրով, փաղաքշիչ մեղմութեամբ այն փոքրիկի թուշերը:

Ո՛վ երանելի մանուկ, որ ունիս այդպիսի զոլդաղ, բայց և այդպիսի հեզ բարեկամ:

Ես դու, նախանձելի անասուն, որ այդպիսի մաքուր երեխայական սիրտեր այդպիսի հարազատ սիրով սիրում են:

Ո՛հ, երանի՜ թէ միշտ մնայինք այդպիսի երեխայք: —

Երեխայքը ածկցին: Ես ժամանակը բերելով նոցա օրեր, հետ գհետէ առաւ տարաւ իւր հետ նոցա երեխայական ուրախութիւնքը:

Փոխանակ դոցա երևեցան այժմ հոգածութիւնք, աշխատութիւն և ախտեր — ո՛հ, աղբիւրները այնքան ցաւերի:

Ես նոքա ցաւումէին մանկական ուրախութիւնների բոլորտվին կորստի վերայ: —

Ծնողները որ այնքան խորին սիրով սիրումէին նորանց, բաժանեցին իւրեանց մէջ դաստիարակութեան հոգսը. հայրը կամէր կրթել իւր որդին, մայրը իւր դուստրը: Ես նոցա քնքուշ սէրը ամենայն հնար գործ դրեց երեխաների հոգին ճոխացնելու և նոցա սիրտերը այնիւ զգայողութեամբք լցուցանելու:

Թէպէտև դաստիարակութիւնը կատարուեցաւ ամենայն ուշադրութեամբ, սակայն ծնողները մոռացան մի բան, այսինքն բարի օրինակը:

Ես մեծ ցաւ. ըստ որում իսկ և իսկ դա էր ամենից առաւել մեծակշիռը:

Երկու անդամ օրը պարտ էր որդին աղօթել առ Աստուած. և ամենայն առաւօտ, ամենայն երեկոյ կատարումէ նա ճշդութեամբ իւր պարտականութիւնը:

Այդ հայրը աստուածուրաց մարդ էր — մի անաստուած. — ինչու՞ համարը, — չգիտեմ ես, և ոչ իսկ ինքը գիտէր դորա պատճառը:

Իւր վաճառականութեամբ զբաղուած ամենևին, պաշտուած նոյնպէս մի աստուած — մամոնան:

Ա՛յս չունէր ոչինչ հասկացողութիւն մի Աստուծոյ, Աբրահէմ և Պահպանողի մասին և չէր մտածում նորա վերայ, և վերջումը դարձաւ այնպէս, ինչպէս նորա հայրը — նա դադարեց աղօթել առ Աստուած:—

Ամենայն խօսքի և պատահի մէջ հայրը խստիւ պատուիրում նորան արդարադատացութիւն և պարկեշտութիւն:

Եւ մի քանի ժամանակ որդին արդարադատ էր, առաքինի և ծանրաբարոյ:

Սակայն մի օր տեսաւ որդին հօր առանձնարանում մի կիսով չափ պատառած փոքրիկ նամակ գետնի վերայ, որի մէջ առաջարկումէին նորան մի ձեռնարկութիւն որ իւր պղտաբերութեամբ թէպէտ շատ առատ էր, բայց անապրդար, եթէ միտ դնենք աղբիւրին, և նախատալից, եթէ քննենք հնարների ընտրութիւնը: Այս փոքրիկ նամակի եղրումը գտաւ որդին հօր ձեռով գրած այսպիսի կարճ պատասխան. Ես ընդունումեմ դորան յօժարութեամբ:

Այս առաջին անգամն էր, որ ամօթու կարմրութիւնը բարձրացաւ այս երիտասարդի մինչև ճակատը. նա վեր կացաւ այն թերթը և ամենևին խորասոյզ եղաւ մտածմունքի մէջ, և խորհումէր ինքն իւր մէջ. ինչպէս կարելի է հօրս խօսքը նորա գործերի հետ միաբանել:

Ակսեալ այս րոպէից զգումէր նա մեղմ երկրայութիւնք մարդկի խղճի և արդարադատացութեան մասին:—

Այնուհետև ծանօթացաւ նա երիտասարդների, որ աւելի քան թէ նա, յառաջադէմ էին այնպիսի աստպարէզի մէջ, որ դեպ ուղիղ ընդդէմ է արդարութեանը, և շուտով անձնատուր եղաւ թղթախաղութեան ախտին: Այդ գործի մէջ կորուսանումէր նա պծամբ, իւր սեփականը, հօրից առած արծաթը, ապա այն արծաթը որ փոխ էր առել, բայց կարող չէր յետ տալ:—

Ետրա հայրը նոյնպէս զանց չարեց երբեք թելադրել նորան առաքինութիւն և քարոզել առելութիւն անառակութեան:

— Իմ սիրելի որդի, առաքինութիւնը է ամենապատուական ստացուածք. պատճառ, առանց նորա չկայ մարդուս ոչինչ արժանաւորութիւն, ոչինչ ղօրութիւն և ոչինչ բաղդաւորութիւն:

Ընտանեկութիւնը մաշումէ մարմինը, ապա սպանումէ հոգին. նա հասուցանումէ մարդուս խղճի խայթեր միայն և կացուցանումէ նորան անարգ իբրև անասուն:

Ուրեմն զգուշութեամբ պահպանիր քո պարկեշտութիւնը. օր ու գիշեր պահպանիր քո սրտի դուռնները, որ չեկեղ թէ կիրք և հեշտախտական ցանկութիւնք ծածուկ ներս մտանեն նորա մէջ. պատճառ, նոքա կը մոլորեցնեն քեզ դէպ ի գարշելի արատների ցեխը. նոցա թոյնը կը չորացնէ քո ոսկրների ուղեղը: — — —

Նա երկար միջոց, որդին հետևումէր հօր բարեմիտ խրատներին:

Սակայն մի օր անցաւ նա այն դահլճի մօտից, ուր հայրը ծածուկ ընդունումէր իւր մօտ իւր համախոհ բարեկամքը — և լսեց այն տեղ ամենևին զարմանալի բաներ:

Դոքա էին սիրոյ երգեր, անպարկեշտ — խստակ փողոցի տաղեր, որով նոքա զուարճանումէին այս տեղ:

Նա նորա հօր ձայնը խլացնումէր բոլոր միւսերի ձայնը, և նորա բառերը էին ամենագարշելիքը: —

Այն գիշերին հայրը ծածուկ դուրս եկաւ տանից. նորան հետևեցան անպիտան տղայք և տեսան նորան այս և այն անկիւնաւոր փողոցի միջով սողալ և վերջապէս մի վատահամբաւած տեղըմ դադարիլ մի տան դրան մօտ և թակել դուռը:

Մի մանուկ աղջիկ խսկոյն բացեց դուռը — նա համբոյր տուեց աղջկան, և երկուքը ներս սողացին:

Ողոր գիշերը նա չվերադարձաւ տուն:

Այլ անպիտան տղայքը ասացին նորա որդուն, ինչ որ տեսած էին:

Ամենուց խեղդուած, սկսաւ երիտասարդը երկբայել ամենայն առաքինութեան վերայ, և շուտով դորանից յետոյ հրաժարուեցաւ դորանից իսկ:

Ուր հօր պէս այնուհետև հրաւիրումէր իւր մօտ բարեկամներ, ծածուկ կեր ու խում առնելու, և ամենախելագար անառակութեամբ իւր ճոռացած պարկեշտութիւնը և ամօթը հանեց վրայից:

Հայրը տեղեկանալով որդու վարքին, հրամայեց կոչել նորան իւր մօտ, և յանդիմանական ոճով խօսեց նորա հետ, ցոյց տալով իւր վերայ մի շատ առաքինի կերպարանք:

— Ինչպէս կարողացար դու, որդի, այդպէս ամենևին անտես առնել ամօթը և բարեբարոյութիւնը:

— Ընդ իմ պատասխանս, հայր: —

Եւ իսկոյն դուրս հանեց որդին այն գրուածը իւր առաքինի հօր ծանօթութեամբ լուսանցումը: —

— Բայց ինչպէս կարող ես դու մանդալ այդպիսի աւազակային ծակերում, ուր այնպիսի բարեստաց արծաթազրկութիւք կոխուսանուես դու խաղլ մէջ:

— Հայր իմ, այն մեծ տունը որի մէջ դու գրեթէ ամենայն օր առուտուրք ես առնում արծաթի և մուրհակների սակարկուների հետ — մի՞ թէ դա այլ բան է, քան թէ մի ժողովատուն, ուր արծաթ ու դոյք շուտով ձեռքից դնուում են խաղով:

Բայց ինչպէս կարողացար դու այդպէս անձնատուր լինել անառակութեան:

— Հայր իմ, երբ որ այն գիշերը վերայ էր հասել — — —

— Լռիր, անամօթ դու: — Ընդդէմ ես հետևում դու մի ամենալաւ հօր խրատին:

Մի լաւ որդի պիտոյ է լսէ իւր հօր խրատները և հետևի նորա օրինակին:

Ես երկար ժամանակ արել եմ, ինչպէս դու, հայր իմ, հրաժարել ես ինձ — այժմ գործում եմ ես նոյնը միայն, ինչ որ գործում ես դու, հայր իմ, ուրեմն աներկբայ լցուցանում եմ մի լաւ որդու պարտականութիւն:

Եւ քո որդիքը, թշուառական դու, եթէ դու միանգամ ծնուցանելու էիր: —

Եթէ զաւակներ պարգևելու էր ինձ Աստուած, ապա, սիրելի հայր իմ, կամքի առնել նորա նոյնը, ինչ որ դու իրրև հայր արել ես իմ համար. և իմ որդիքս աներկբայ նոյնը առնելու են, պատուելով իւրեանց հայրը, ինչ որ ես արել եմ, հետևելով իմ հօրը:

Նա մայրը իւր կողմից ջանադիր էր իւր աղջիկը շինելու միայն օրինակ ընդհանրական, խոնարհութեան, բարեսրտութեան, մի խօսքով, օրինակ մի սակաւադիւտ կանացի առաքինութեան:

— Սիրելի զաւակ, քո բոլոր խօսքի ու գործի մէջ, ամենայն քայլափոխի և ոտնակոխի մէջ մի մոռացիր երբէք ցուցանել քեզ ընդհալից: Ընդհալից բարքը նոյն է մի մանուկ աղջկայ համար, ինչ որ վարդի համար իւր գոյնն է:

Հեզամտութիւնը տալիս է կանացի բնաւորութեանը մի ճըշմարիտ քաղցրութիւն և է ապացոյց մի սիրալից հոգու: Էյս պատճառով վարուիր դու ամենայն մարդու հետ հեզութեամբ, եթէ կամիս քեզ գրաւել մի սիրտ և կապել քո հետ:

Խոնարհութիւնը, հպատակութիւնը տղամարդի մէջ է յատկութիւն միայն, — բայց կնոջ մէջ առաքինութիւն: Ուրեմն եղիր միշտ խոնարհ դէպ ի հայրդ ու մայրդ, որ մի ժամանակ կարողանաս հպատակ լինել քո ամուսնակից տղամարդին:

Բայց, բոլոր կանացի առաքինութիւնների մէջ ամենակարեւորն է պարկեշտ ամօթխածութիւն և, ցաւելի է ասել, նմանապէս ամենաժուարին պահպանելի թանկ բանը: Նա է մի կերպով, այնպիսի նուրբ և քնքուշ ծաղիկ, որ գրեթէ մի հնչեւն բան կարող էր սպականել նորան — մի հայելու սպակի, որ կարող էր պղտորուիլ ամենափոքր հնչեւից — մի պատուական, բայց հեշտ բեկանուտ (կոտրելի) անօթ, որ ամեն մի մեղմ հարուածէ իսկոյն փշրուի:

Էյս պատճառով, սիրելի զաւակ, պահիր և պահպանիր ամենից առաւել քո անմեղութիւնը:

Տես ահա, այս ծաղկաթափ ծաղիկները և այս փշրուները պատուական անօթների, որ ձգած են փողոցի ցեխի մէջ — — — Նոյն բանը հանդիպելու է քեզ, եթէ դու միանգամ կորուսած էիր քո ամօթը: Ուրեմն պահիր նորան քո սրտի խորքի մէջ և հսկիր օր ու գիշեր, որ ոչ մի ժամանակ մի անպարկեշտ մտածութիւն, խօսք կամ ցանկութիւն չպղտորէ նորա պայծառութիւնը:

Աչերատարդների առաջև, որ սուր աչքով զննում էին քեզ, կուսական համեստութեամբ ցած թող աչքերդ. երբ որ նոքա խօսում են քո հետ սիրոյ վերայ, երբէք ականջ մի դնիր դորան: Եթէ բռնում են քո ձեռը, ապա յետ քաշիր նորան, որպէս թէ մի իժ օձ կամէր խայթել քեզ: Նա եթէ համարձակվում էին մի համբոյր

կողոպտել քեզանից, ապա վախիր շուտով, փախիր ու հեռացիր, որպէս թէ պալտ էր քեզ սպանողն արից փախչել:

Ամենու և պարկեշտութեան վերայ ազդումն համբոյրը աւելի վտանգաւոր կերպով, քան թէ մի դաշնակի հարուածն կարող էր ազդել:

Դու տեսար երեկ, թէ ինչպէս թխասամայրը մեր տան գաւիթում աշխատում էր պաշտպանել իւր ձագերը, երբ որ մեր շունը մօտեցաւ նոցա: — Այդ պարկեշտութիւնը, սիրելի՛ զաւակ, պիտոյ է աւելի ծանրագին լինէր բոլոր կանանց աչքում, քան թէ այն ձագերը թխասամոր համար. և դու պարտական ես էս առաւել նախանձաւորութեամբ, քան թէ այն թխասամայրը, պահպանել քո ամօթը, քան թէ այն թխասամայրը ցուցանում էր, պաշտպանելով իւր ձագերը: — — —

Եւ աներկբայ — իրաւ էր ասում մայրը:

Դորան հաւատում էր և աղջիկը իւր կողմից, և ամբողջ տան ու հինգ տարի, էր նա օրինակ ընտրհաւատարմութեան, խոնարհութեան, քաղցրասրտութեան — օրինակ ամենայն կանացի պատուականութեան:

Այդ մի օր այս աղջիկը լսեց մի մեղմ խօսողի ձայն իւր մօր ննջարանում, և հետաքրքիր լինելով — ինչպէս սովոր են լինել մանուկ աղջիկները — մօտեցաւ փականքի ծակին, որ սեանէ և անկանջ դնէ:

Եւ ահա տեսանում նա իւր մայրը նստած մի տղամարդի գոգում, որ չէր իւր հայրը. աղջիկը լսեց նոյնպէս այդ երկուքի միմեանց հետ շշնջելը սիրոյ խօսքեր, որ և հաստատումներին նոքա համբոյրներով:

Ամօթապատառած և ամենևին խորտակուած եղած մարքերի մէջ հետացաւ աղջիկը հառաչելով և ասելով ինքն իւր մէջ. Իմ մայրը այնպէս չէ վարվում, ինչպէս մեր տան թխասամայրը: —

Եւ այնուհետև սկսաւ նա նախ երկբայել ողջախոհութեան վերայ, և շուտով դորանից յետոյ հետևեցաւ դործով իւր մօր օրինակին:

Մանուկ աղջկայ հայրը մեռաւ։

Նա հաղիւ թէ նա դրուել էր հողի տակ, և ահա նկատեցին — որ ոչ ոք դուշակել չէր — որ նորա գոյքը անչափ վատ դրութեան մէջ էին։ Կորուստ վաճառական գործերի մէջ, անյաջող ձեռնարկութիւնք և ամենայն տեսակ վնասներ որ յանձն էր առել նա իւր ամենօրեայ վայելքի համար, աննկատելի կերել ու մաշել էին նորա փառաւոր գոյքը։

Նա շուտով երևեցան նորա պարտատէրքը, բոլորը փականքի տակ դնելու համար։—

Մայրը սովորած էր ապրել զեղխութեան և վայելքի մէջ. և իւր աղքատութեան մէջ ևս չկամէր իւր անձը զրկել դոցանից։ Բայց դորանց ձեռք բերելու համար, դրեց յոյսը իւր գեղեցկութեան վերայ, բայց այս գեղեցկութիւնը թառամած էր արդէն, դորան կարելի չէր այսուհետև թանգ գնով շահեցնել։

Բայց դստեր գեղեցկութիւնը դեռ ևս դալար ու հրապուրիչ էր. դա դեռ ևս կարող էր նորան պիտանի լինել։

Ըյս խայտառակ մոռացութեան մէջ նորա արիւնը վաղեց դէպ ի գլուխը, և մի չար հոգու ձեռք, ասես թէ, ըմբռնեց նորա սիրտը — — — սակայն զեղխութեան, վայելչասիրութեան ախտը շուտով յաղթող հանդիսացաւ. նորա սրտի ձայնը պիտի լռէր։

Նա այս կինը կրկին անգամ տեսաւ իւր անձը հարստութեամբ շրջապատած. բայց այս հարստութիւնը տևեց այնքան միայն, ինչքան որ նորա դժոխային գործը ծաղկուէր։

Ծաղիկը թառամեցաւ — և դորա հետ միասին ցամաքեցաւ և հարստութեան աղբիւրը։—

Այն իսկ մայրն էր եղած, որ ամբարշտութեամբ կործանել էր իւր դստեր պարկեշտութիւնը, որ լոկ և միայն ձեռնտու էր եղած այն բանին, որ նորա պարկեշտութեան ծաղիկը շուտով թառամեցաւ — հեշտ բնականութ անօթը ջաղջախվեցաւ։

Նա նա և նորա դուստրը վերջացան այնպէս, ինչպէս մայրը մարգարէացել էր — փողոցի ցեխի մէջ, որպէս թառամած ծաղիկներ։ Ըյս էր նոցա վախճանը և նոցա վերջին տեղը։— Նա ամենեքեան, որ տեսանում էին նորանց, երկբայում էին հօրերի, մօրերի, որդիների, դուստրների առաքինութեան վերայ։

— Սակայն, մի՞ թէ ամենայն ծնողք, ամենայն զաւակներ այդպէս են։

— Երդարև ոչ: Պատճառ, դեռ ևս կան միջաստիճանները, սկսեալ մաքուր առաքինութենից մինչև ամենալերը արատը, և այդ բոլոր միջաստիճանների վերայ գտանվումեն այն, աներկբայ, որ դիք, դուստրները, հայրեր, մայրեր:

— Եայց թէ գերագոյն աստիճանների վերայ — որ աւելի մօտ են առաքինութեանը — աւելի շատերը կանգնած են, քան թէ նոցա վերայ, որ սահմանակից են ապատին. — ով կարող է պնդել այդ բանը: Ես մեծ երկբայութիւն ունիմ դորա մասին:

Ս. Նալբանդ:

ՎԵՆԵՏԿԵՑԻ ՎԱՃԱՌԱԿԱՆ

(ՈՒԻԼԻԱՄ ՇԵՔՍՊԻՐԻՑ.)

Ա՛յնեակում բնակումէր մի հրէայ Հ՛յլօք անունով։ Նա վաշխառու էր, և վաստակել էր անչափ շատ հարստութիւն, պարտք տալով քրիստոնեայ վաճառականների մեծ տոկոսիքով։ Նա խստասիրտ մարդ էր, և վայ էր դժբախտին, որ չէր կարողանում հատուցանել նորան փոխ առած արծաթը սահմանած ժամանակին. անողոքելի Հ՛յլօքը խլումէր դժբախտ պարտապանից նորա վերջին ունեցածը։ Այսպիսի վարքի համար ատելի էր Հ՛յլօքը բոլոր բարի մարդկերին, և մանաւանդ վենետկեցի երիտասարդ վաճառական Անտօնիօյին։ Հ՛յլօքին նոյնպէս ատելի էր Անտօնիօն նորա համար, որ սա պարտք էր տալիս աղքատ մարդկերի առանց տոկոսիքի, և այս պատճառով զարմանալի չէ, որ ազահ Հ՛րէայի և մեծահոգի վաճառականի մէջ կար մի տևողական թշնամութիւն։ Վերջին անգամ, երբ որ Անտօնիօն հանդիպումէր Հ՛յլօքին լոմբայախոհների հրապարակում Րիալտոյի մէջ, պախարակումէր նորան իւր անխիղճ վաշխառութեան և խստասրտութեան համար։ Նրբայեցին, ըստ երևութին, համբերութեամբ տանումէր այս պախարականքին, բայց սրտի մէջ խորհումէր վրէժխնդրու թիւն։

Անտօնիօն էր մի շատ բարի, սիրելի և հաճոյակատար մարդ, որ երբ և իցէ եղել է աշխարհումս։ Նորան սիրումէին իւր բոլոր քաղաքակիցները։ Բայց նորա մտերմագոյն բարեկամն էր ոմն Բասսանիօ, վենետկեցի, հնչակաւոր ազգատոհմից։ Բասսանիօն ստացաւ իւր հօրից և շատ փոքրիկ ժառանգութիւն, բայց և այն, հանդերձ

բոլորը, շուտով վաճառեց, որովհետև ապրումէր անչափ վեղխուռ թեամբ: Ամենայն անգամ, երբ որ Յասսանիոն կարօտութիւն ունէր արծաթի, Ընտանիօն ազատումէր նորան վաճառքից. երեսումէր թէ նոցա և սիրտը և քսակը հասարակաց էր:

Մի օր Յասսանիոն եկաւ իւր բարեկամի մօտ և ասաց, թէ մտադիր էր բարեաբեր իւր ձախորդ կեանքի պայմանքը ամուսնութեամբ մի անձին հետ, որ ինքն շատ սիրելի էր նորան, որ և հօր մահից յետոյ ժառանգել է մեծ հարստութիւն: Դեռ նորա հօր կենդանութեան ժամանակ, Յասսանիոն լինումէր նոցա գերդաստանի մէջ, և կարող էր նկատել որ, ինչպէս նորա հետ վարվումէին, նորա հարանախօսութիւնը կ'ընդունուէր բարեյօժարութեամբ. բայց այժմ արծաթի կարօտութիւն կրելով, կարող չէր նա պատշաճաւոր վայելչութեամբ դիմել մեծատուն հարսի ծնողների մօտ, առաջարկելու նորան իւր փեսայութիւնը, ուստի սկսաւ աղաչել Ընտանիօն, այս վերջին անգամ ցուցանել նորան բարեկամական շնորհ, պարտք տալով երեք հազար ոսկի:

Այս միջոցին Ընտանիօն չունէր արծաթ. բայց սպասելով իւր վաճառաբեր նաւերի շուտով գալստեանը, ասաց թէ յօժարութեամբ կամէր երթալ Հելլօքի մօտ, որ ունի միշտ պատրաստ արծաթ և փոխ առնուլ նորանից, նաւերը գրաւ դնելով:

Ընտանիօն իւր բարեկամի հետ միասին գնաց Հելլօքի մօտ և սկսաւ խնդրել նորանից երեք հազար ոսկի, որքան տոկոսիքով և կամէր տալ, խոստանալով այդ արծաթը հատուցանել լուծվին, երբ կ'վերադառնան ծովից նորա նաւերը: Այս խօսքը լսելով Շըյայլոկին, սկսաւ խորհել իւր մէջ այսպէս. «Նթէ միայն կ'յաջողի ինձ որոգայթիս մէջ ըմբռնել այս մարդս, ես կ'հանեմ վրէժը այն բոլոր անարգանքի, որ ստացել իմ նորանից: Նա ատումէ մեր ըբրայեական ազգը. նա պարտք է տալիս առանց տոկոսիքի. նա յանդիմանումէ ինձ բոլոր վաճառականների առաջև իմ շահաստացութեան համար, հրէական տոկոսիք ասելով դորան: Եթող անէծք դայ մեր բոլոր ազգի վերայ, նթէ կ'ներէի այդ անիրաւութեանը»: Ընտանիօն, տեսանելով որ Շըյայլոկին ընկղմեցաւ մտածմունքի մէջ և չէ պատասխանում նորա անհամբեր պահանջողութեանը, ասաց. — «Հելլօք, լսո՞ւմես դու ինձ. կամիս դու տալ ինձ արծաթ»: — Շըյայլոկին պատասխանեց. «Պարոն Ընտանիօ, դուք շատ անգամ ծաղր էք արել իմ վերայ և իմ շահաստացութեան վերայ,

երբ որ մեք հանդիպումեինք միմեանց Իմաստոյում. բայց ես այս բոլորիս հանդերձումեի պնդելով սիրաս, որովհետև համբերութիւնը մեր բովանդակ ազգի բաժինն է. դուք շատ անգամ կոչումեիք ինձ անհաւատ, անքրիստոնեայ, մի անթլվատ շուն, թքումեիք իմ երեսայական հանդերձի վերայ, բայց էիք միւսմ ինձ ձեր ոտով, երբ թէ սիրաւ շուն եմ ես: Իսկ այժմ, ինչպէս երեւումէ, դուք կաըօտ էք իմ օգնականութեանս. դուք եկել էք իմ մօտ և ասումէք. «Հ՚ելքօք, պարտք տուր ինձ արծաթ»: Մի թէ շունը արծաթ ունի. ով է տեսել, որ շունը կարողանալ պարտք տալ մարդուն երեք հազար ոսկի: Մի թէ պիտոյ էր ինձ խնդարհիլ ձեր առաջև և ասել. «Պատուելի պարոն, անցեալ չորեքշաբաթի օրը դուք թքեցիք երեսիս, իսկ այս օրերումս շուն կոչեցիք ինձ, ուրեմն ահա փախարէն այս բոլոր սիրալիժան խօսքերի, տացէք ինձանից երեք հազար ոսկի փոխ»: Ընտանիքն պատասխանեց, այսպէս. — Ես այժմ իսկ պատրաստ եմ ես շուն կոչել քեզ, և այժմ պատրաստ եմ թքել քո վերայ, և այժմ, եթէ կամիս, կ՚խեթիկեմ քեզ ոտով: Տուր ինձ պարտք, ոչ իբրև բարեկամի, այլ իբրև թշնամու, որ, եթէ չկարողանայի վճարել քեզ, դու ամենևին սառնասիրտ և առանց խղճի երկմտութեան դործ դնէիր խիստ հնարներ պահանջելու ինձանից իմ պարտքս»: — «Ո՜հ, դուք այդչէն զայրացաք», ասաց Հ՚ելքօքը, «Ես կամէի բարեկամանալ ձեր հետ, ստանալ ձեր սէրը: Ես տալիս եմ մոռացութեան այն անարգանքը, որ կրեցի ձեզանից. ես պարտք եմ տալիս ձեզ արծաթ և բնաւին չեմ կասկածում առնուլ տոկոսիք»:

Այս, ըստ երեւութին, բարեմիտ առաջարկութիւնը շատ զարմացրեց Ընտանիքն, և երբ որ նա, ինչպէս բնական է, յայտնեց իւր կասկածոտութիւնը, Հ՚ելքօքը կրկնեց իւր բոլոր ասածը, մի պայման միայն յաւելացնելով, այսինքն թէ Ընտանիքն երթալու էր նորա հետ միասին մի օրէնսգէտի մօտ և կ՚կապէ, կատակօրէն, ահա այսպիսի պայման: Եթէ Ընտանիքն որոշեալ ժամանակին չկարողանայ հատուցանել իւր պարտքը, Հ՚ելքօքը իրաւունք ունի որպէս փոխարէն անվճար ճնացած պարտքի կտրել մի ֆունտ միս Ընտանիքի մարմնից, որ տեղից և կամէր: — «Համաձայն եմ», պատասխանեց Ընտանիքն, — «ես կ՚ստորագրեմ պայմանագիրը և այնու ամենայնիւ մեծ բարեմտութիւն կ՚համարեմ դորան Եբրայեցու կողմից:»

Ալի ժամանակ Բասսանիոն սկսաւ դէպ ի ներհակը հանդիլ իւր բարեկամը, որ նա չտատապարէ մի այդպիսի պայմանադրութիւն. բայց Անտոնիոն ասաց վճռաբար, թէ ստորագրելու էր, որովհետև չկայ բնաւին տալարկոյս, որ սահմանած ժամանակից յառաջ ի վերադառնային իւր նաւերը, որոց մէջ եղած վաճառքը բաւական էին վճարելու հարիւրապատիկ աւելի մեծ պարտք:

— Շ՚լսէքը, լսելով բարեկամների հակաճառութիւնը, բացաձանչեց. Աբրահամ, ոմպիսի կատածոտ մարդիկ են Վենետացիք նայքը. նոցա յատուկ խստապարտութիւնը ստիպում նորանց յուսալ և միւսերից մի միայն վատթար դիտաւորութիւններ: Ասացէք ինձ, աղաչեմ, պարոն Բասսանիո, ի՞նչ օգուտ պիտի լինէր ինձ, եթէ ես պահանջէի այդպիսի հատուցումն, երբ որ դուք կարող չեիք պարտավճար լինել իւր ժամանակին. ի՞նչ խորհուրդ ունի մի ֆունտ մարդկային միս. և ի՞նչ արժէ նա, կամ ի՞նչ օգուտ ունի նա, թէև նորան համեմատէինք մի ֆունտ ոչխարի կամ տաւարի մսի հետ: Կրկնում եմ ձեզ, որ, ձեր բարեկամութիւնը ստանալու համար, առաջարկում եմ ձեզ մի բարեկամական օգնականութիւն. կամիք ընդունել, բարւոք է, ապա թէ ոչ, բարեւս մնաք»: Ոչէ պէտ Բասսանիոն չէր դադարում թախանձելով դդուշացնել իւր բարեկամը, որ յանձն չառնու նորա պատճառով այսպիսի տմարդի պարտականութիւն, բայց Անտոնիոն ստորագրից պայմանը, մտածելով թէ արդարև, ինչպէս ասում էր Գերսյեցին, կատակօրէն առաջարկած էր դա:

Ազնուութեան ժառանգաւոր աղջիկը, որոյ հետ Բասսանիոն մտադիր էր ամուսնանալ, բնակում էր ոչ հեռի Վենետիկից, Բելմոնտ ամրոցում. նորա անունն էր Պորկիա:

Բասսանիոն գնաց Բելմոնտ մեծահարկի ուղեկիցների բազմութեամբ, որոց մէջ գտանվում էր Գրատիանո անուն մի ազնուական: Նորա հարստահոսութիւնը յայտնութիւն գտաւ, և Պորկիան յանձն առաւ կարճ միջոցում դառնալ նորա ամուսին:

Բասսանիոն խոստովանեց իւր հարսին, թէ նա չունի ոչինչ հարստութիւն և թէ նորա բոլոր պարծանքն է, որ նա շառաւիղած է ականաւոր նախահարցից: Պորկիան, որին սիրելի էր Բասսանիոն իւր սրտի զեղեցիկ յատկութեամբք, լինելով ինքն այնքան հարուստ, որ կարող չէր հարուստ փեսայի, պատասխանեց նաղելի համեստութեամբ, թէ նորան ցանկալի էր հաղարապատիկ

աւելի զեղեցիկ լինել և բիւր անգամ աւելի հարուստ, որ դորա-նով ևս առաւել արժանի լինէր նորա վեհապետութեանը. թէ ինքն էր մի լոկ անկիրթ աղջիկ, սակաւ աշխարհ տեսած, սակաւ փորձառու, — նա պատրաստ էր ուսանիլ նորանից ամենայն բարի բան և ամենայն բանի մէջ հնազանդ կը լինէր իւր ամուսնուն։ — «Դու ես, և իմ բոլոր հարստութիւնս այսուհետև դնում եմ ձեր լիակատար իշխանութեան ներքոյ, ով Ասասանիօ», ասաց նա, — «Երեկ ես իշխան էի այս տան մէջ, այս բոլոր ծառաների վերայ. այսօր, այս մատանու հետ միասին յանձնում եմ ձեզ կատարեալ իշխանութիւն իմ վերայ, իմ ամրոցի և իմ ծառաների վերայ», — և նա յանձնեց Ասասանիօյին մի մեծադին մատանի։

Ասասանիօն այնպէս շնորհակալ էր Պօրկիային վասն նորա բարեկամական շնորհի առ ինքը, մի աղքատ ազնուական, որ ընդունելով մատանին, ուխտ դրեց երբէք չբաժանուիլ նորանից։

Գրատիանօ և Ներիսսա, Պօրկիայի աղախինը, երկուքն ևս գտանվումէին այն միջոցին այն տեղ, երբ Պօրկիան խոստանում էր ամենայն բանի մէջ հնազանդել իւր ամուսնուն, և Գրատիանօն մաղթելով իւր պարոնին յաջողութիւն, խնդրեց նորանից թոյլ տուութիւն պսակուելու նոյն ժամանակին, երբ կ'պսակուէր իւր պարոնը։

«Թոյլ եմ տալիս ամենայն յօժարութեամբ սրտի, պատասխանեց Ասասանիօն, եթէ ունիս դու նշանած»։

Այն ժամանակ Գրատիանօն խոստովանեց, թէ սիրում էր Պօրկիայի աղախինը, Ներիսսա, և թէ սա խոստացել էր ամուսնանալ իւր հետ, եթէ նորա տիրուհին կ'ամուսնանար իւր տիրոջ հետ։ Պօրկիան հարցրեց Ներիսսայից. արդեօք ճշմարիտ է այս։ Նա պատասխանեց. ճշմարիտ է, եթէ միայն հաճոյ է ձեզ թոյլ տալ այդ ամուսնութիւնը։ Պօրկիան յայտնեց իւր թոյլտուութիւնը, և Ասասանիօն յաւելացրեց կատակօրէն. դուք մեծ պատիւ ցոյց կ'տաք մեզ, տօնախմբելով ձեր հարսանիքը մի և նոյն օրում մեր հարսանիքի հետ։

Այս բարի մարդերի երջանկութիւնը խառնակուեցաւ սոյն վայրկենում մի լուրերի դասուսատով, որ յանձնեց Ասասանիօյին նորա բարեկամ Անտոնիօյի նամակը։

Նամակի մէջ բովանդակած էին զարհուրելի լուրեր։ Երբ որ Ասասանիօն կարդում էր նամակը, Պօրկիան զարհուրանքով նա-

յումէր նորա երեսին. այնպէս դժնաթափ էր նա: Պօրկիային թըւումէր, թէ նամակի մէջ անշուշտ յայտնուածն նորան մահը մի մարդու որ շատ սիրելի էր Խաստանիոյին: Հարցանելով նորանից, թէ այդ ինչ համբաւ է, որ կարող էր այդպէս վրդովել նորա սիրտը, լսեց նա, այս խօսքս. «Նազելի Պօրկիա, այս տեղ կան մի քանի սարսափելի բառեր, որ երբ և իցէ դիւրին թափել էր թղթի վերայ: Երբ որ ես առաջին անգամը յայտնեցի ձեզ իմ սէրը, պարզուղեղ խոստովանեցի ձեր առաջև, որ ես չունիմ ոչինչ դանձեր, բայց ի քաջատոհմական արիւնից, որ հոսում է երակներումս. բայց ինձ այն րոպէին պիտոյ էր ասել ձեզ, որ իմ հարստութիւնս տեղի փոքր է, քան թէ ոչինչ, որովհետև պարտք ունիմ ես»: Ետ-նուհետև Խաստանիոն պատմեց բոլորը, ինչ որ արդէն յայտնի է ընթերցողին Շylոքից առած պարտքի և նորա հետ դրած գարհուրելի պայմանի մասին, որ ստորագրել էր Անտոնիոն: Որպէս վերջաբան, կարդաց նա իւր հարսի առաջև նամակը: Ահա նորա պարունակութիւնը. «Իմ նազելի Խաստանիո, նաւերս կորան ծովի մէջ. այն պարտականութիւնը, որ յանձն առայ դէպ ի Երէսն, պիտի անյապաղ կատարուի, և որովհետև լցուցանելով այդ պարտքը, կարող չեմ յուսալ կենդանի մնալ, այս պատճառով կ'ցանկայի ես տեսանել քեզ մահուս րոպէին: Եվնու ամենայնիւ, արա, որպէս դիտես, և եղիր բաղդաւոր: Եթէ քո սէրը դէպ ի ինձ համոզելու չէր քեզ շտապել դէպ ի Վենետիկ, ապա անտես արա իմ նամակս»:

— «Ով իմ նազելի», ձայն տուեց Պօրկիան, «շտապիր դէպ ի Վենետիկ, և ոչ մի րոպէ չյապաղելով. եթէ Երէսն քանապատիկ աւելի արծաթ պահանջէր որպէս պարտքի վճար, ես պատրաստ եմ հատուցանել այդ արծաթը, միայն թէ քո բարեկամդ չանբաղդատուի քո պատճառով»: Որպէս զի Խաստանիոն ունենար օրինապատշաճ իշխանութիւն դործ դնելու նորա գոյքը, Պօրկիան յանձն առաւ նոյն օրին պատիւել նորա հետ: Նոյն օրին, ինչպէս պայմանադրած էր, և Գրատիանոն պատահեցաւ Ներիսսայի հետ, և երկու նորատոկերը միասին, չյապաղելով և ոչ մի րոպէ, ուղեւորվեցան դէպ ի Վենետիկ: Խաստանիոն դատ իւր բարեկամը արդէն բանտի մէջ: Որովհետև հատուցման ժամանակութիւնը անցել էր, խստասիրտ Եբրայեցին չէր կամենում արծաթ առնուլ Խաստանիոից, այլ կամակորութեամբ պահանջում էր վերոյիշեալ ամարդի պայմանի լցուցումը:

Ընտրուեցաւ օրը վճռելու այդ անսովոր վէճը. նոյն իսկ Պօղոս[1]) Վ՚ենետկի մատիկը էր ներկայ գտանուիլ դատարանում, և Յասառանիօն տրտմութեան և երկիւղի մէջ սպասում էր, թէ ինչպէս կ՚վերջանայ իւր բարեկամի գործը:

Պօրկիան բաժանուելով իւր ամուսնուց և յուսալով, որ գործը յաջողութեամբ կ՚վերջանայ, խնդրեց Յասառանիօից, որ նա բերէ իւր հետ դէպ ի Ռելմինտ ազատուած Ընտօնիօն: Միայնակ ձիաւոլով, սկսաւ երկմտել գործի յաջողութեան վերայ և սկսաւ մտածել, արդեօք կարող չէր լինքը, թէ և լինելով անփորձ իրրև կին մարդ, որով և իցէ օգտակար լինել Ընտօնիօյին, ուրեմն և Յասառանիօյին: Մնք ասասնք, թէ ինչպէս նա իւր սեռական համեստութեամբ յայտնել էր իւր ամուսնուն թէ պատրաստ էր ամենայն բանի մէջ հետևել նորա խրատներին. բայց այժմ երկբայութիւն չունէր ասելի, թէ կարող էր արդիւնակատար լինել, երբ որ գործը հայումէր վրկելու բալի անունը, դուցէ և կեանքը մի մարդու, որ այնքան անձնանուէր էր նոր ամուսնակից ազատարդին: Այս կնոջ պայծառ միտքը, աղնիւ, արդար սրտի հետ միասին, քաջութեան հոգի տուեց նորան, ինքնին ուղևորուելու դէպ ի Վ՚ենետիկ և դատաստանի առնուամ ասելու իւր խօսքը Ընտօնիօյի պաշտպանութեան համար:

Այս ունէր Վ՚ենետկում, մի ազգական, շատ ուսումնական դատաւոր, Բելլարիօ անունով: Պօրկիան նամակ գրեց նորան, որոյ մէջ պատմումէր գործի ընթացքը, խնդրումէր նորա խորհրդակցութիւնը և մանաւանդ աղաչումէր ուղարկել նորան իւր դատաւորական զգեստը: Ուղարկած մարդը վերադարձաւ շուտով և բերից մի նամակ Բելլարիօյից և բոլոր պատկանելիքը դատաւորական հանդերձի:

Պօրկիան, զգեստաւորուած իրրև դատաւոր, իսկ իւր աղախինը, Ներիսսան, իրրև դպիր, անյապաղ ուղևորուեցաւ դէպ ի Վ՚ենետիկ և հասաւ այն տեղ նոյն իսկ օրին, երբ ժամադրուած էր առեւնական հարցաքննութիւնը: Վ՚ենետկի Պօժը և բոլոր առեւնակալները նստած էին արդէն իւրեանց տեղերում, առենի դահլիճում, և ահա ներս է մտանում յանկարծ Պօրկիան և տալիս է Պօժին մի նամակ Բելլարիօյից, որոյ մէջ ծեր դատաւորը ներո-

---

[1]) Դուքս Վ՚ենետկեցոց և Գէնուացոց Հասարակապետութեան գահերեց:

զութիւն է խնդրում, որ ինքն հիւանդութեան պատճառով չէր կարող ներկայ գտանուիլ դատաստանում, բայց իւր փոխարէն ուղարկումէր մի երիտասարդ, բայց շատ հմուտ օրէնգէտ մարդ, Խաղչասալ անուն (այսպիսի անուն էր առել իւր վերայ Պօրկիան), որ խօսելու է պատուաւորուածի պաշտպանութեան համար։» Դօժը հաւան գտանուեցաւ այս բանիս, թէպէտ նորան շատ զարմացրեց նոր դատաւորի մանուկ դէմքը։

Ակսուեցաւ ստենական հարցաքննութիւնը։ Պօրկիան հայեացքի տակ առաւ բոլոր ներկայ գտանուածքը և նկատեց խստասիրտ Ենբրայեցու կերպարանքը։ Նայեցաւ և Խաստանիոյի վերայ, բայց սա չճանաչեց նորան իւր զգեստաւորութեան մէջ։ Նա կանգնած էր Ընտօնիոյի յետքում, մահանման երկիւղի և հոգածութեան մէջ իւր բարեկամի կեանքի մասին։

Յանդուգնութիւնը գործի որ յանձն էր առել մանուկ կինը, տուեց նորան վստահութիւն և նա համարձակութեամբ դարձաւ դէպ ի Շայլոքը։ Յայտնայտնելով նորան, թէ ինեանկան օրէնքով, նա իրաւունք ունի պահանջելու, որ ամենայն ճշդութեամբ լցուցանուէր յանձն առած պայմանը, սկսաւ նա խօսել դէպ ի Ենբրայեցին մարդասիրութեան վերայ, և խօսումէր այնպիսի հեզ, համոզական ոճով, որ կ'շարժուէր ամենայն մարդու դութ, միայն անգութ վաշխառուի սիրտը չշարժուեցաւ։ Պինը ասումէր, եթէ դթութիւնը իջանումէ երկնքից, ինչպէս մի մեղմ անձրև, որ պըտղաբերծումէ երկիրը, նա երկպատիկ բարի է բերում մարդերին, թէ նորան, որ ողորմումէ, և թէ նորան որ ընդունումէ ողորմութիւնը։ Նա ասումէր թէ ողորմասրտութիւնը առաւել զարդարումէ թագաւորները քան թէ նոցա արքայական թագը, որովհետև ողորմասրտութեամբ միայն թագաւորները կարող են համանմանիլ Աստուծոյ։ Նա յորդորումէր Շայլոքը յիշել որ, եթէ մեք մեր աղօթքի մէջ խնդրումենք Աստուծուց ողորմած լինել դէպ ի մեզ, ապա մեր նոյն իսկ աղօթքը պիտի ուսուցանէ մեզ ողորմած լինել դէպ ի մեր ընկերքը։

Ենբրայեցին պատասխանումէր այս բոլոր խօսքերին մի և նոյն պահանջողութեամբ, որ վաճառականը հատուցանէ, ինչպէս պրած էր պայմանը։ «Այլ մի թէ նա կարող չէ վճարել արծաթը» հարցրեց Պօրկիան։ Ընդհակառակն Խաստանիոն առաջարկեց Ենբրայեցուն ընդունել իրրև վճար այնքան արծաթ, որքան կամի։ Շայ-

լքքը հրաժարվումէր և պահանջումէր մի բան միայն, այսինքն, որ վճիռ հատանեն կտելու մի ֆունտ միս Անտոնիոյի սրտի տակից:

Բասսանիոն մեռեցաւ դատաւորին և սկսաւ խնդրել նորանից, չը կարելի արդեօք այս գործի մէջ խախտել օրէնքը, նորա ընկերի կեանքը ազատելու համար: Բայց Պօրկիան պատասխան տուեց խոժոռ երեսով, թէ միանգամ հաստատած օրէնքը պիտոյ չէ խախտել ոչ մի դիպուածումի: Շ՚ylքը լսելով այս խօսքը, և եղբայացնելով դորանից, թէ դատաւորը մտադիր է գործ կատարել նորա ցանկութեանը համեմատ, ձայն արձակից. «Ինքն Դանիէլը նստել է դատաւոր. ով իմաստուն երիտասարդ, ինչպէս մեծարումեմ քեզ. դու խելացի ես հասակիցդ վեր»:

Պօրկիան միւսանգամ ևս նայելով պայմանագրի վերայ, ասաց ամենեցուն լսելի ձայնով. «— Ա՛յո, Եբրայեցի, դու ունիս կատարեալ իրաւունք դուրս կտրելու մի ֆունտ միս Անտոնիոյի սրտի տակից»: Բայց իսկոյն յաւելացրեց նա «ցաւակից եղիր, Շ՚ylքը, ամ արծաթը և թոյլ տուր ինձ պատառել պայմանագիրը»: Եբրայեցին համակրութեամբ իւր տանտիրոջ պահանջողութեան մէջ, ձայն արձակից. «Երդումեմ Հոգեովս, որ ոչքի ճարպաթը ինչուն կարող չէր համոզել ինձ փոխելու իմ պահանջողութիւնս»:

— «Եթէ այդպէս է», խօսքը յառաջ տարաւ Պօրկիան, — «ուրեմն, դու, Անտոնիո, պատրաստուիր դէպ ի դատարանի ներգործութիւնը սրտիդ տակ»:

Մինչդեռ Շրեան կատարութեամբ պրում էր երկայն դանակը, կարծեցած դատաւորը դարձաւ դէպ ի Անտոնիոն, հարցանելով, արդեօք չունի՞ նա որ և իցէ բան ասելու իւր անձի պաշտպանութեան համար: Անտոնիոն անիծ ով խաղաղութեամբ պատասխանեց, թէ ոչինչ չունի ասելու իւր պաշտպանութեան համար, թէ նա խոնարհուած բաղդի բերմանը և մտածումէ միայն առաջիկայ մահուան վերայ: «Տուր ինձ ձեռդ, Բասսանիո», խօսքը յառաջ տարաւ նա, «հրաժարական ողջոյն տանք միմեանց: Մի տրտմիր, որ ևս ենթարկուած եմ այսպիսի ձախորդութեան քո համար: Տուր իմ վերջին ողջոյնը քո ամուսնուն, որ ևս պատմումեմ և աւանց տեսանելու նորան. պատմիր նորան, թէ ո՛րքան սիրել եմ ևս քեզ:» Բասսանիոն խորին ցաւի մէջ պատասխանեց. — «Անտոնիո, ևս ամուսնացած եմ մի կնոջ հետ, որ ինձ աւելի սիրելի է քան թէ իմ կեանքը. բայց ևս պատրաստ եմ զոհել և իմ կեանքը,

և իմ ամուսինը, և ամենայն բան աշխարհիս վերայ, միայն թէ կա-
րողանայի փրկել քեզ այդ դևի ձեռներից»:

Պօրկիան, լսելով այս բառերս, թէպետև չվերաւորուեցաւ, բայց և չկարողացաւ զսպել իւր ամօթը, որ չասէր. «եթէ ձեր կինը այս տեղ լինէր, նա չէր լինելու ձեզ հնարհակալ այդպիսի ըղհա-
բերութեան համար:» Իսկ Գրաթիանոս, որ սիրուէր ամենայն բանի մէջ նմանիլ իւր ախրոջը, հարկաւոր համարեց և իւր կողմից ասել նոյնպիսի ճառ, և պատասխանեց. «ես էս ունիմ կին, որ շատ սիրելի է ինձ, բայց ես կ'ցանկայի որ նա այս րոպէիս երկնքում լինէր և աղաչէր ամենաբարձրեալ զօրութիւնքը, մեղմել այս հրէայ շան սիրտը:» — «Լաւ է, որ դու նորա քառկում ես կանգնած», ասաց Ներիտան, ասպա թէ ոչ, վատ կ'լինէր քեզ նորանից»: — «Մեք ի վեր կորուստանումնք ժամանակը», կոչեց Հրեան անհամբերութեամբ. «բատարակեցէք պատուիրը»: Խոլորեքեանք լուեցին և հարցասիրութեամբ սպասումին ինչպէս սիրտի վերջանայ Ընտանիքի գործը:

Հարցանելով Հրէայից, թէ պատրաստ էր կշռիը, միսը կշռելու համար, Պօրկիան յաւելացրեց. «Հրէայ, քեզ պէտք է հրապարձու լինել, որ այդ գործի մէջ լինի մի վերաբերմունք, ապա թէ ոչ դժբախտը կարող է մեռանել արիւնահոսութենից:» Հրէայը, որ և գոհան ցանկանում էր, այսինքն Ընտանիքի մեռանելը արիւնահոսութեամբ, պատասխանեց. «Հրդեհի բան աստծ չկայ պայմանի մէջ:» — «Ճշմարիտ է, այդպիսի բան չկայ պայմանի մէջ», պատասխանեց Պօրկիան, — «բայց դու մարդասիրութեան պատճառով պարտական ես հոգալ այդ մասին:» Սակայն Հրէայը պատասխանեց կամակորութեամբ. «Իմ ինչ գործս է, պայմանի մէջ չկայ այդ:»

— «Թուին չէ կարելի վիճել քո հետ», խօսքը յառաջ տարաւ Պօրկիան, «Ահա կալ Ընտանիքից մի ֆունտ միս. դատաստանը այդ ընդունում քեզ օրէնքով: Թողիր սրտի տակից, դատաստանը այդ ընդունում քեզ օրէնքով:»

Այս Հրեան սկսաւ ձայն արձակել. «Ով ամենիմաստ, մեծ դատաւոր: Ահա, ինքն Դանիէլը դատաւոր է նստած առենում:» Յետոյ վերտաին սրելով դանակը և արիւնածարաւ աչքով նայելով Ընտանիքի վերայ, շշնջուն կիսաձայն. «Հուռ արա, պատրաստ-
ուիր:»

—«Պապասիր, Հրեայ դու, — մի բառ ևս ունիմ ասելու քեզ» ձայն տուեց Պօրկիան. պայմանի մէջ ասած է մի ֆունտ միս, բայց ոչինչ ասած չէ արիւնի մասին. ուրեմն զգուշացիր, որ արիւն չթափես: Եթէ դու կ'թափես թէև մի կաթիլ քրիստոնէի արիւն, ապա քո բոլոր գոյքը, օրէնքով մնանելու է տէրութեան գանձարանը:»

Հասկանալի է, որ անհնարին էր Հ՚Եյլօքին կտրել մի ֆունտ միս, առանց թափելու մի կաթիլ արիւն, և այսպէս Պորկիայի խոլրամիտ ատացուածը, որ հիմնած էր պայմանի ճիշդ զօրութեան վերայ, ազատեց Անտօնիօյի կեանքը: Ամենքեան զարմանութեին դատաւորի խորամուխ և հնարագէտ հանճարի վերայ. ամենայն կողմից արձակուեցան ծափահարութիւնք, իսկ Գրաթիանօն նմանելով այն բառերին, որ սակաւ ինչ յառաջ ասել էր Եբրայեցին, բացագանչեց. «Ով իմաստուն և արդար դատաւոր: Տես ահա, ով Հրեայ, ինքն Դանիէլը դատաւոր է նստել:»

Հ՚Եյլօքը տեսանելով, որ նորա չար խորհուրդը գլուխ չէ գալնիս, առաց տրտմութեամբ. «Եթէ այդպէս է, ուրեմն տուէք իմ արծաթիս:» Բասսանիօն անչափ ուրախանալով Անտօնիօյի անսահմանական ազատութեան վերայ, բացագանչեց.— «Ահա արծաթդ:»

Բայց Պօրկիան դադարեցրեց նորան ասելով.— «Պապասիր, մի շտապիր վճարել. Հրէան չունի առանալու ոչինչ, բայ ի նորանից, ինչ որ պայմանաւ է դաշնադրութեամբ: «Հ՚Եյլօք», շարունակեց նա, «պատրաստուիր կտրել միսը, բայց շղունշացիր, որ չթափես և ոչ մի կաթիլ արիւն, այլև տես, որ մի ֆունտից ոչ աւելի կտրես և ոչ պակաս. եթէ դու մի դարեհատի կամ մի մազի ծանրութեան չափ կ'սխալուիս, վ՚ենետկի օրէնքով, դու կը պատժվիս մահով, իսկ քո գոյքը կը դառնայ տէրութեան սեփականութիւն:—«Տուէք ինձ իմ արծաթը և արձակեցէք ինձ,» ասուվ Հրէան:— «Ահա քեզ, ահա քեզ, — և գործը վերջացած է,» պատասխանեց Անտօնիօն:

Հ՚Եյլօքը կամեցաւ արդէն ձեռքը մեկնել դէպ ի արծաթը, բայց Պորկիան դարձեալ դադարեցրեց նորան.

—«Պապասիր, Հրեայ,— վ՚ենետկի օրէնքով, քո գոյքը պիտի սեփականուի տէրութեան գանձարանին, որովհետև դու խնդրել ես մի վենետկեան քաղաքացու կեանք. նոյն իսկ օրէնքով և քո սեփական կեանքը այժմ պատժի ձեռքումն է. ծունր խոնարհեցրու նորա առաջև և աղաչիր ներողութիւն:

Ա՛յնուհետև ասաց Պօժը Հ՛եյլօքին. «Որպէս զի դու կարո՛ղանայիր հասու լինել թէ ինչ խորութիւն կայ քո կրօնի և մեր քրիստոնէական հաւատի մէջ, ես ընծայումեմ քեզ քո կեանքը, յառա՛ջ քան թէ դու խնդրել էիր ողորմութիւն. բայց դոյքիդ մա՛սին, ուզեմ քեզ ասելու, որ նորա կէսը կը հատուցանուի Ընտօ՛նիոյին, իսկ միւս կէսը կը մտանէ տէրութեան գանձատունը:»

Ա՛հ Հանձն Ընտօնիոն պատասխանեց սորա ընդդէմ, թէ նա յօժարութեամբ հրաժարվումէ իւր բաժնից այն պայմանով, որ Հ՛եյլօքը կտակէ այդ ալծաթը որպէս իւր մահուց յետոյ հատա՛նելի մանն իւր աղջկայ և նորա ամուսնու: Բայց պիտոյ է ասել, որ Ընտօնիոն գիտէր, որ Ֆ՛րէան մի աղջիկ ունի, որ սակաւ ինչ յառա՛ջ ընդդէմ նորա կամքին ամուսնացել էր մի քրիստոնեայ երիտասարդի հետ Լ՛օրէնցօ անուն, իսկ Հ՛եյլօքը այս պատճառով զրկել էր նորան ժառանգութենից:

Ֆ՛րէան հաւանեցաւ այս պայմանին, և այսպէս զրկուած լինելով թէ կարողութենից ձեռասել իւր թշնամուն, և թէ իւր բո՛ղը գոյքից, ասաց. «Ես պղտումեմ անձնս վատառողջ և կամիմ տուն գնալ. ինքնանքդ զրեցէք կտակը և ուղարկեցէք ինձ, ես տանը կ'ստորագրեմ:»

—«Գնա՛», ասաց Պօժը. «Տանը դու կ'ստորագրես կտակը. իսկ եթէ դու կ'ղջաս քո խստասրտութեան վերայ և կ'ընդունես քրիստոնէական հաւատս, ես կ'դարձուցանեմ քեզ գոյքիդ և միւս կէսը:»

Ա՛յնուհետև Պօժը հրամայեց ազատել Ընտօնիոն և արձակեց տանը: Յետոյ սկսաւ դովաբանել մանուկ դատաւորի իմաստուն հնարագիտութիւնը և հրաւիրեց իւր մօտ ճաշելու: Պորկիան, մտադիր լինելով իւր ամուսնուց յառա՛ջ հատանել Ռէնօնա, պատասխանեց. «Հ՛նորհակալ եմ քեզ, տէր, բայց ես ժամանակ չունիմ այս տեղ մնալու:» Պօժը ցաւեցաւ, որ չէր կարող անցուցանել այն օրը այնպիսի խելացի մարդու հետ միասին, և յաւելցրեց, դառնալով դէպ ի Ընտօնիոն. «Վարձատրեցէք այս դատաւորը, դուք նորան շատ ու շատ շնորհապարտ եք:

Պօժի և առենակալների հեռանալուց յետոյ, Բասսանիոն ասաց Պօրկիային. «Ազժանաւոր պարոն, ես և իմ ընկեր Ընտօնիոն, ազատուեցանք մի ահարկու պահանջողութենից ձեր իմաստութեան շնորհովը. ուրեմն ընդունեցէք մեզանից իրրև ընծայ

այն երկիք հազար ոսկին, որք պիտի հասանէին Հրէային։»— «Դու մեք այնու ամենայնի մեր անձը յաւիտեան պարտական կը համարինք ձեզ» յաւելացուց Ընտանիսն։

Պօրկիան հրաժարուեցաւ արծաթէից, և երբ որ Ռասսանիսն սոխպաղին ազաչումէր, որ դատաւորը ընդունէ դրամ որպիսի և իցէ ընծայ, ասաց նա. տուէք ինձ ձեր ձեռնոցները. ես կ'կրեմ դրանց իբրև յիշատակ ձեզմէից։ Ռասսանիսն հանից ձեռնոցները, և Պօրկիան տեսաւ նորա ձեռի վերայ նոյն մատանին, որ ինքը ընծայել էր նորան Հարսանիքէից յառաջ։ Ըյս տեղ մոռաբերից նա խնդրել նորանից այս մատանին, որ յետոյ նիւթ ունենար ծիծաղելու իւր ամուսնու վերայ։ Ռասսանիսն շատ ցաւումէր, որ դատաւորին հատանելի թուեցաւ սոյն այս մատանին. նա ասաց, թէ չէ կարող բաժանուիլ այդ մատանուց, որ նորան ընծայել է իւր կինը և որից երդուել է չբաժանուիլ։ Նա առաջարկեց, թէ պատրաստ էր դատաւորի համար, նորա յատուկ ընտրութեամբ, գնել առաւել մեծագին մատանին, որ միայն կ'գտանուէր Վենետկում։ Պօրկիան կեղծաւորուեցաւ իբրև թէ բարկանումէր այս խօսքի վերայ, և ասաց, թողնելով ժողովը. «Դուք ինձ տալիս էք զեղեցիկ օրինակ, թէ ինչպէս պէտք էր գլուխ թափել խնդրողներից։»

—«Ի՛մ Ռասսանիո,» ասաց Ընտանիսն, տուր նորան այդ մատանիդ. վասն իմ սիրոյ, և այն շնորհի փոխարէն, որ նա ցոյց տուեց մեզ այսօր, յանձն առ այն թոպէական տհաճութիւնը, որ կ'ցուցանէ քեզ ամուսինդ, իմանալով որ դու բաժանուիլ ես նորա ընծայած մատանուց։»

Ռասսանիսն ամօթի համարելով անշնորհակալ գտանուիլ դէպի ի իւր բարեկամը, Գրաթիանոյի ձեռով ուղարկեց մատանին յանձնելու դատաւորին որ արդէն հեռանումէր։ Ընդհետև Ներիսան ևս, որ նոյնպէս հարսանիքից յառաջ ընծայել էր մի մատանի Գրաթիանոյին, խնդրեց որ նա բաշխէ սորան մատանին որպէս վարձատրութիւն փոխարէն դրագրի աշխատութեան։ Գրաթիանոն, չկամելով մեծահոգութեամբ յետ ծնալ իւր պարտքից, տուեց մատանին կարծեցած դրագրին։

Հասս ծիծաղուէին իւրեանց մէջ այս երկու կանայքը այն բանի վերայ, թէ ինչպէս զուարճանալու էին խաղ առնելով իւրեանց տղամարդերի հետ, երբ որ վերադարձած դէպ ի տուն հարց-

ուժորձ կ'առնէին նոցանից, թէ ոչխարի կտաւից ընծայել էին նա-քա իւրեանց մատանիքը:

Պօղկիան դառնալով դէպ ի տուն, գտանելումէր այն երանելի հոգեխառնութեան մէջ, որ միշտ սիրուած մարդուն, երբ նա մտա-ծումէր թէ ի բարի գործ է գործել: Նորան մի առանձին կերպով քաղցր ու սիրելի էր ամենայն բան, որ ինչ հանդիպումէր նորա աչքին ճանապարհի վերայ: Նորան թվումէր, թէ լուսինը երբէք այնպիսի շքեղ պայծառութեամբ փայլած չէր, ինչպէս այս երե-կոյիս. իսկ երբ որ լուսինը ծածկուեցաւ ամպերի քամակում, և Պօղկիան մերձենալով իւր ամրոցին լոյս տեսաւ իւր պատուհան-ներում, զմայլուած այս տեսարանով, ասաց Ներսէսային. «Տես, իմ հնձալանումս մոմ է վառուում. կարծեմ, մեծ չէ նորա բոցը, բայց ինչպէս հետի տարածվումէն նորա ճառագայթները. ահա այսպէս էս բարի գործը դէպ ի հետի լուսատու է մեր մեղաւոր աշխարհում:»

Նա ահա վերջապէս հասան նոքա ամրոցին, հազան իւրեանց սովորական հանդերձը և սպասումէին իւրեանց ամուսնակիցների վերադարձին: Սոքա չդադարեցին դալ. նոցա հետ էր և Ընտօնիոն:

Լսելու թէ Բասսանիոն հանդիպեցուցել էր Պօրկիային իւր ազատուած բարեկամը, և ահա նոցա փոխադարձ ողջունաւոր-թիւնքը ընդհատուեցան մի բարձրաձայն հակաճառութեամբ սե-նեկի անկիւնում: Ներիսսան մի բանի վերայ սաստիկ բորբոքուած վիճումէր իւր տղամարդի հետ:

«Ընդէն և կռիւ. ինչ բանի վերայ է վէճը, հարցրեց Պօր-կիան:

«Դատարկ բանի վերայ, մի ոսկեջրած մատանու վերայ, որ ընծայել էր ինձ Ներիսսան. նորա վերայ կար մի շատ ծիծաղաշարժ մակագիր. «Սիրիր ինձ և մի մեկնուիր ինձանից:»

—«Ինձ ինչ պէտք է մատանու մակագիրը և արժէքը,» ա-սումէր Ներիսսան. «Դու ինձ երդուեցիր, երբէք չհանել նորան մատիդդ, իսկ այժմ ասումես, որ տուել ես մի գրագրի, բայց ես հաստատ գիտեմ, որ դու ընծայել ես մի կին մարդու:»

— Երդվումեմ քեզ իմ այրական աջովս, որ մատանին տուել եմ մի տղայի, մի սիրելի, խորամանդ տղայի, որ գրագրի պաշտօն է լցուցանում երիտասարդ դատաւորի մօտ, որ ազատեց պարոն Ընտօնիոի կեանքը: Այդ մանուկ խորամանդ տղան, չէր հետա-

նում ինձանից, խնդրում էր, որ ես տամ նորան մատանիս իբրև վարձ նորա աշխատութեան. ես չկարողացայ մերժել նորա խնդիրը, ուրեմն և տուեցի:

«Դու վատ ես վարուել, Կրսթոֆիանոս, հրաժարուելով քո հնոջ առաջին ընծայից,» ասաց Պօրիկիան. «ես էս ընծայեցի իմ Ռասասանիօին մի մատանի, և հաւատացի եմ, որ նա ոչնչ բանի հետ աշխատհրամայ չէր փոխելու նորան:»

Կրսթոֆիանօն ցանկալով արդարանալ, ասաց. — «Այդ պատրոն Ռասասանիօն առաջինն եղաւ, որ տուեց մատանին գատաւորին, այնուհետև գլադիէրն էս սկսաւ աղաչել ինձ, որ ես տայի նորան իմն:»

Այս խօսքի մէջ Պօրիկիան ձևացաւ շատ բարկացած և սկսաւ յանդիմանել Ռասասանիօյի անհատատարմութիւնը. «Դա դիտեմ,» ասում էր նա, «որ իմ մատանիս ընծայած է:» Ռասասանիօն զգուշութիւն էր անձը բոլորովին անպաշտպան, որ սոխակուած էր եղած ցաւերից իւր նպատակի ամուսինը: — «Երդուում եմ իմ պարծանքով,» ասում էր նա. «ես ընծայեցի մատանիս մի ազնիւ օրիորդի մարդու, որ չկամեցաւ ընդունել ինձանից երեք հազար ոսկի, և խնդրում էր միայն մատանին. երբ որ ես մերժեցի նորա խնդիրը, հեռացաւ նա վերատորուած: Ուրեմն ինչ պէտք էր ինձ առնել, իմ նպատակի պօլակիա. ինձ այնպէս ամօթալի էր անշնորհակալ երևել, որ ես ստիպուած էի ընծայ ուղարկել նորան մատանիս: Վերջը ինձ, իմ բարի ամուսին. եթէ դու լինէիր այն տեղ, ինչ կ'անդրէիր ինձանից ընծայել մատանին այն ազնիւ դատաւորին:»

«Ո՛հ, ձայն տուեց Անտօնիօն, ինչպէս ցաւում եմ, որ ես առիթ տուեցի այս վէճիս:»

Պօրկիան սկսաւ համոզել Անտօնիօյին չվշտանալ այս բանով, որովհետև նա այնու ամենայնիւ, ասում էր Պօրկիան, մի սիրելի հիւր է իւր տան մէջ: Անտօնիօն պատասխանեց. «Դա մի ժամանակ երաշխաւոր էի լինում իմ մարմնով Ռասասանիօյի համար, և կ'հրաժարուէի կեանքիցս, եթէ չլինէր նա, որին ձեր ամուսինը ընծայեց մատանին: Այժմ ես հոգուս երաշխաւոր եմ, որ ձեր ամուսինը երբէք չէ քակտելու այն ուխտը, որ ուխտել է ձեզ:»

«Ընդ, եթէ դուք ինքնանքդ յօժարութեամբ երաշխաւոր լինել նորա համար», պատասխանեց Պօրկիան, «ուրեմն տուէք նո-

բան այս մատանին և ասացէք, որ նա աւելի լաւ պահէ դորան, ոչ այնպէս, ինչպէս յառաջ։»

Բասսանիօն նայելով իւրեան տուած մատանու վերայ, շատ զարմացաւ, որ այն — ահ և նոյն էր, որ ինքը տուել էր դատաւորին։ Այնուհետև Պորկիան պատմեց նորան, թէ ինչպէս նա հագել էր դատաւորի հանդերձ, իսկ Ներիսան զրադրի, և Բասսանիօն շատ ու շատ ուրախացաւ տեղեկանալով որ նորա մեծիմաբանական կեանքը ազատուած էր իւր նաղելի ամուսնու աղնիւ վըստահութեամբ և ճարտարամտութեամբ։

Եզրափակելով բանը, Պորկիան ցոյց տուեց Անտօնիօին այն նամակը, որ պատահմամբ ընկել էր նորա ձեռքը, որոյ մէջ ասած կար, թէ նորա նաւերը ամենևին չեն կործանուել, թէ այս բոլորը սուտ համբաւ էր, թէ նորա բարկացողք հասել են նաւահանգիստ։ Այսպէս վենետկեցի վաճառականի պատմութեան ախուր, տրտգիական սկիզբը մեռացուեցաւ ամենեցուն միասին ուրախութեան մէջ։ Փոքր չէր ծիծաղը այն կատակաւոր անցքի վերայ որ պատահել էր մատանիներին, և նորա վերայ, թէ ինչպէս այր մարդիկը չէին ճանաչել իւրեանց կանայքը։

(Подснѣжникъ 1858. № 4.)

Ե. Բ.

ԲԱՐՈՅԱԿԱՆՔ·

ՍԷՐ ԵՒ ԸՄՌՍՆՈՒԹԻՒՆ·

(Շարունակութիւն.)

ՅՕԳՈՒԱՆ 7·

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ ԿԱՆԱՑԻ ՍԵՌԻ ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆ ՎԵՐԱՑ·

Նա, սիրելի ընթերցող, մի նախընթաց յօդուածի մէջ ա-մուսնակից կնոջ ընտրութեան մասին, ասել եմ, թէ բաւի էր, և թէ տղամարդը ընտրումէ իւր համար մի գեղեցիկ, գոնէ մի ախորժելի, սիրուն և հեզ կին. այս պատճառով կամիմ և այժմ մասնաւորել քեզ իմ կարծիքը գեղեցկութեան մասին ընդհանրապէս, որպէս և կանացի գեղեցկութեան մասին առանձնապէս։ — Նա որոշումեմ նէրէն և սրտոտէն գեղեցկութիւն։ Առաջինը է առաւել պատուականը. նա է հոգու գեղեցկութիւնը, ուրիմն մի անվախճան, միշտնջենաւոր գեղեցկութիւն. — դա յայտնվումէ այն բոլոր գեղեցիկ քրիստոնէական առաքինութեամբք, որ մարդս կարողացանումեն առաւել աստուածանմանին։ Հեզսրտութիւն, համբերութիւն, սրտի տպղրութիւն, Մաքուր բարի և անխարդախ հոգի, անիւղձութիւն, հաւատարմութիւն, արդարութիւն, ուղիղ և բարեմասնութիւն են այն բանները որով յատկանումեն նոքա։ Բարեյաղթութիւն և ճշմարտութիւն են այն սահմանքը որ աստուածային հոգին մարդուս մէջ, դրել է որպէս առաջին և ամենավերին օրէնք այն մարդկային կրթութեան որ օրէ օր յառաջադէմ է դէպ ի առաւել բարձրը։ Ամենայն լաւութիւն

գրած է ձշմարտութեան եւ բարեբարոյութեան մէջ, որոնց դուռները է հոգեկան գեղեցկութիւնը. եւ ողջախոհութիւնը անբաժանելի է նորանից։ — Այս նեղքին գեղեցկութիւնը անեղծանելի է, նա հնաբաւոր է եւ մարմնի արտաքին տպեղութեան մէջ, — նա ժամանակի երկարութեամբ աւելի գրաւիչ է, քան թէ մի գեղեցիկ դէմք, քան թէ մի գեղեցիկ մարմին։ — Դուք, իմ նաղելիք, որ կացուցանում եք գեղեցիկ կանացի սեռը, պահպանեցէք այդ նեղքին գեղեցկութիւնը, որով կարող էք հաստատել ձեր ամուսնական տղամարդի եւ ձեր յաւուրց կենսական բաղդաւորութիւնը։ Դորան ունիք դուք ձեր ձեռքում։ Այս նեղքին գեղեցկութիւնը յիշեցինք արդէն վերեւում։ ուրեմն այժմ մնում է խօսելու կանացի մարմնի գեղեցկութեան վերայ։

Թէ ինչ է գեղեցկութեան էութիւնը, դժուար է սահմանել, ինչպէս արդէն ուղիղ ասել է Վինքելմանը [1]*։ Ամենք փիլիսոփայք այնպէս են ընդունել, թէ չկան ոչինչ սահմանաւոր ղու-*

---

[1]) Ո՛վ է այս Վինքելմանը։ Չկայ Եւրոպացում ոչ մի գրականութիւն, որի մէջ յայտնի չլիներ այս մարդու անունը։ Ամենայն տեղ, ուր հին աշխարհի ճարտարութեան վերայ խօսք է լինում, կը լսեիր դու Վինքելմանի անունը, և այդ անունի հետ միասին կրթեալ Եւրոպացու մտքում խառն զարթնում են մեծագործական յիշատակներ, Վինքելմանի արդիւնաբերութեան մասին։ Ասենք մեր Հային. այս Վինքելմանը ազգով Գերմանացի էր, Պրուսսիայի Սաենդալ քաղաքից, ծնած 1717 ին. Բերլինի գիմնազիայում աւարտելով իւր ուսման ընթացքը, 20 տարուն մնաւ Համալսարան, բայց աղքատութեան պատճառով ստիպուած եր դուրս գալ և պաշտօն յանձն առնուլ։ 1748 թուականին կոմս Բրիւնաւի մօտ Դրեզդենի մօտակայքում, գրադիր գարձաւ նորա մատենադարանի մէջ։ Դրեզդենի մօտաւորութիւնը իւր ճոխ ճարտարապետական գանձերով հաւյրեց նորան մեծ օգուտ և ծանօթութիւնք երեւելի գիանականների հետ. ապա պաշտօն ստացաւ նա Հռոմի մէջ Վատիկանու մատենադարանում. 1755 գնաց նա Հռոմ, ուր պաշտպանների և բարեկամների ձեռնով քաջալերուած և պահպանուած, կրակոտ սիրով և եռանդոտութեամբ խորամուխ եղաւ կլասիկական (Յունաց և Հռոմէացոց) հնութեան ճարտարապետական յիշատակարանների ուսումնասիրութեան մէջ, և 1763 թուականին գարձաւ գերապետն վերակացու լոլոր հնութենների, Հռոմի մէջ։ 1768 թուականին Ճանապարհորդելով Վերմանիայում քանդակագործ Կավաչէպպիու հետ, գարձաւ դեպ ի Վիեննա, որ այս տեղից Թրիեստի վերայով վերադառնայ դէպ ի Խտալիա։ Թրիեստում ընկերանում նորա հետ մի ամբաստիլ մարդ Արքանդելի անունով, դուրս է որսում նորանից նորա գաղտնիքը, և ստահութեամբ հրապուրելով սրամահ է առնում պարզամիտ, անկասկած Վինքելմանին, որ 7 ժամից յետոյ աւանդում հոգին։ — Վինքելմանը շատ ու շատ ազգել է իւր և ապագայ ժամանակի կրթութեան վերայ, նա պատրաստել է այժմեան ճաղկափիթիի վիճակը ճարտարութեան և գիտութեան և յատկ է բերել հիմնական կանոններ, որ մեր ժամանակներում փիլիսոփայական մտահայեցողութեան խորութեամբ գարձեալ գտանուած են։ Նորա «Monumenti inediti», և «Ճարտարութեան պատմութիւնը» միշտ անմահ կը պահեն այս ականաւոր տղամարդի յիշատակը։ Գերմանագէտ Հայերին առաջարկում ենք կարդալ Գեօթէի պատուական գրուածը Վինքելմանի վերայ «Winkelmann und sein Jahrhundert» Գեօթէի արձակ գրուածների մէջ։

գաւառութիւնք ձևերի և տպաւորութեանների, որոնց վերայ անդադրելի հաստատուած լինէր գեղեցկութեան ըմբռնումը, որով հետև այդ ըմբռնումը փոփոխվում էր ըստ ազանազանութեան ազգերի, ըստ բարքերի և սովորութեանների և այլն։ Այսրինի ազգերի մէջ շատ անգամ գեղեցիկ են համարվում մարմնի կրճատութիւնքը, և կրթեալ ազգերի մէջ իսկ, կարծիքը գեղեցկութեան վերայ շատ անգամ չափվում էն երկրորդական բաներով։ Ոսկերահաս, ֆիզիսական փիլիսոփան, նախապատիւ էր համարում շլակն կանոյք, քան թէ կատարեալ գեղեցկութիւնը, որովհետև նորա առաջին սիրելի կինը շատ շիլ էր. և այդպիսի օրինակներ շատ կան։ — Այդ, եթէ քննենք կարևոր պայմանները, որով գեղեցիկ բանի տպաւորութիւնը պիտի սահմանուի, և հեռացնենք դիտաւոր պարագայքը որ հակառակումն ուղղութեանը մեր կարծիքի և դատողութեանների, գեղեցկութեան վերայ. այնուհետև գտանելու ենք, որ այն փիլիսոփայքը սխալուած են։ — Ոչ ամեն մարդ մեզանից կարող է ուղիղ դատել գեղեցկութեան ճշմարիտ յատկութիւնքը։ Միայն առողջ մարմնով և պատկանաւոր խոհեմական կրթութեամբ, ուղիղ կրթուած ճաշակով և խիստ անաչառութեամբ և ազատ ամենայն մասնաւոր պատճառից, կարող ենք ուղիղ դատել գեղեցկութիւնը։ Պիտոյ չէ, որ մեր երևակայութիւնը չափից դուրս կենդանի լինէր. ապա թէ ոչ, կը խաբէր մեզ և կը մոլորեցնէր ուղիղ ճանապարհից։ — Տգիտութիւն, կանխամտութ կարծիք և վաղուց արած սովորութիւնները, այս և այն երկրորդական գաղափարների միջամտութ լինելը, ախորժ չիշատակներ կանացի ընկերների, վաղ ժամանակից, նոյնպէս խափանարար են, երբ որ կամենք ուղիղ դատողութիւն դործել։ Ծէ կոպիտ և կիսակիրթ ազգերը չունին ոչինչ ըմբռնողութիւն գեղեցկութեան մասին, բաւական յայտնի է մեզ ճանապարհորդ մարդկերի գրուածներից։

Մի գեղեցիկ եւրոպական կին ընկած էր վայրենի կանանց հասարակութեան մէջ։ Նա զարհուրելով և յետ փախչելով տեսաւ այդ կերպ կերպ զարշելի կերպարանքները որ մօտենում էին նորան։ Ինչ ազեղ է դա, ձայն տուեց մի կարմրագղնձ երեսով աներևակայելի կին դէպ ի իւր ընկերակիցքը, և մատով ցոյց տուեց գեղեցիկ, սպիտակադէմ եւրոպացի կինը. արդեօք դորա մորթը այնպէս չէ, ինչպէս եված միս, նորա շէկ մազը նման չէ մի գոմշապոչի կեղտոտուած մազի. նորա կապոյտ աչքը չէ՞ աներևակին նման

մէր բաղերի աչքին: Բայց որ նա առ հասարակ մազեր ունի, ինչպէս գարշելի բան է, խօսեց մի հիւսիսային ամերիկացի կին: Յօդ նա գոնեայ իւր յօնքը դուրս փետէր, և ամաչէր, որ իւր կամեցած նման սպիտակ առոյգները չէր ներկել սև, ասաց մի Նափոնացի կին: Սև կամ սպիտակ առոյգներ, շշնջեց մի կին Տրինիդադից, երկուքն էլ միապէս տգեղ են. նորան պիտոյ էր իւր առոյգները սղոցել մինչև ընաքերը (առոյգնամիսը), այնուհետև չէր լինելու դարշելի: — Դամ թէ, յաւելացրեց մի Հարաւածովեան կղզեսպնակ կին, եթէ իւր մազերը նարընջի գունով ներկէր և ոտերը փոքրացնէր, ոտի մատերը դէպ ի ցած թեքելով գարշապարի տակ: — Ա՛յօ, կարելի է, ասաց մի Տահիթեան կին, որ այդ եւրոպացին մի աննշան տոհմից է, ապա թէ ոչ, թողած կը լինէր մատերի եղունգները աճելու: — Մ՛ի թէ կարելի էր այդպէս անհոգ գտանուիլ, ասաց Հաւաչելով մի հասակաւոր կին Պօրտ Ջ՛աքսոնի հիւսիսային եղերից. մինչև անգամ փոքրիկ մատերի երկու առաջակողմեան խատերը չեն կրած թելով: — Ո՜հ, ինչպէս շնորհակալ եմ ես իմ սիրելի ծնողներից, ձայն տուեց դանդաչելով մի մաւրիտանացի կին, որ նոքա ծեծ տալով ստիպեցին ինձ ալիւրի խիւսով և ուղտի կաթով պարարտացնել իմ մարմինը, այնպէս որ ես չեմ նուազ ու բարակ, ինչպէս այս այլանդակ կերպարանքը: — Ա՛յ, խնդրեմ նայել այդ եւրոպացի կնոջ բովանդակ կերպարանքի վերայ, ձայն տուեց դարձեալ առաջինն հիւսիսային Ամերիկայից. արդեօք ունէր դա մի լայն, տափակ երես, փոքրիկ աչքեր, դուրս ցցուած թշոսկրներ, մի նեղս սեղմած ճակատ, մի մեծ, լայն կզակ, մի հաստ ուռուցաւոր քիթ, մի թուխ մորթ և սրինք որ ցած կախուէին մինչև դէպ ի գօտին: Սոցանից ոչ մինը չկայ նորա վերայ, և դոցանով միայն լինում է մի կնամարդ գեղեցիկ և արժանաւոր: — Ա՛յ, դու սխալւում ես, խօսեց մի կովկասեցի կին. կարճ բարձք, փոքրիկ ոտեր և փայլուն թխակարմիր մազեր պիտոյ էր ունենալ նորան, եթէ կամէր գրաւել գեղեցկութեան պարծանքը:

Այս առասպելից, որ պատմում էր մի մատենագիր, կարելի է փոքր ի շատէ տեսանել, ինչպէս զանազան է ճաշակը կանանց գեղեցկութեան մասին: Բայց այս բանս ոչինչ ապացոյց չէ ընդդէմ գեղեցկութեան տուղութեանը. թէև այն դատողութիւնքը դորա վերայ քաղաքաշէն ազգերի մէջ նոյնքան էս բաղմերիսակ և միմեանցից տարբեր էին: Ո՛րջինս յառաջանում մանաւանդ պակասու-

թենից պատկանաւոր յատկութիւններին, որ առաջնորդումեն դէպի մի ուղիղ դատողութիւն, նոյնպէս այս և այն երկրորդական հանգամանքից: Ակներեւ ահա բացայայտ է, որ մեզանում յառաջուց արած սովորութիւնքը և մի քանի քնքուշ յիշատակներ շատ ձեռնտու են լինում, այս կամ այն անձի մարմինը նախապատիւ համարել քան թէ միւսինը, ըստ որում այս տեղ ներկայ ապացոյցը թիւնքը խառնվումեն անցած օրերի ախտերի հետ: — Մի երդ, մի պարախաղութիւն կամ մի ծաղիկ, շատ անգամ մի ամենևին հասարակ իր, եթէ միայն նորոգումէր դա մեր մէջ մի սիրելի անձնի յիշատակ և այդպէս զարթեցնումէր քաղցր շարժողութիւնք և տխրամիտ յիշողութիւնք, շատ անգամ նախապատիւ ենք համարում քան թէ մի աւելի գեղեցիկ նուագածութիւն և այս կամ այն աւելի գեղեցիկ առարկայքը բնութեան և ճարտարութեան: Պատանի մարդիկ, ասումէ Վ. Ինքելմանը, շատ սակաւ կարող էին դատել ստոյգ գեղեցկութիւնը, որովհետև նոքա չափից դուրս յաղթուած էին իւրեանց ախտերից և խառնիճ ապաւորութիւններից: Նոքա համարումեն գեղեցիկ այս կամ այն կինը որ միայն ունի զուարթ դէմպրութիւնք երեսի, որ ընդումէ կարօտութիւն, հիւանդախտութիւն և կաթոգին սէր: Նոքա շատ անգամ նախապատիւ են առնում շատ հասարակ կերպարանքը ամենամեծ գեղեցկութենից, եթէ այդ կերպարանքը ունի միայն որոշեալ ձևեր և դէմպրութիւնք որ զարթեցնումեն ցանկութիւն, յոյս, ախորժանք և սէր. ձևեր որ ակնարկումեն դէպի ի հիւանդախտութիւն: — Բայց ճշմարիտ գեղեցկութիւնը կարող է միայն յատկացնել միաքը, նա երբէք կարող և պատրաստ չէ յառաջացնել ախտաւոր շարժողութիւնք. դորա մէջ ինքներս խաբելու էինք մեզ, մեր երևակայական զօրութիւնը կը մոլորեցնէր մեր դատողութիւնը և կը փակէր բանականութեան ճանապարհը:

Օտարի կարծիքը իւր համար առաջնորդ ընտրել, տեղիք տալ և ընդհանուր տրամադրութեանը սրտերի, նոյնպէս վտանգաւոր է: Այն մեծ դիտունը ճարտարութեան, Վ. Ինքելմանը, թողել է մեզ մի խորամիտ և պայծառ դատողութիւն մեդիչեան Վ. Ենոսի վերայ Ցլօրենտում: «Նա նմանումէ մի վարդի — ասումէ յիշեալ Վ. Ինքելմանը — մի վարդի որ գեղեցիկ առաւօտեան արշալոյսից յետոյ, արևածագին բացվումէ, որ և դուրս է գալիս այն հասակից, որ, ինչպէս պտուղքը իւրեանց կատարելապէս հա-

անելուց յառաջ, կոշտ ու տոհմիկ է, որպէս ցուցանում նորա լանջքը որ երևում սրպէն աւելի լայն, քան թէ քնքուշ աղջկայ մէջ: Նորա աչքերը լի են հեղամտութեամբ և նորա հայեացքը կաթողին և սիրալիր, առանց լինելու հեշտախտական: Նորա կերպարանքը նկատելով, պատկերացնում եմ այն չքնաղ Լայսը, որ դաստիարակում Ասիլլէսին սիրելու մէջ, և ես նկարագրում եմ նորան մտքով այնպէս, ինչպէս նա առաջին անգամը պարտ էր մերկանալ ձարտարապետի աչքի առաջև:»

Գեղեցկութեան ընդհանուր պատկանելի բաների շարքում դնում ենք այն ամենայն, որ յարակցութիւն ունի մարմնի կացութեան, հաստատութեան, մեծութեան և զուգաչափութեան հետ, շարժուածքի, դունի, երեսի կենդանախօսութեան, կարճ ասեմ, գեղեցկութեան բոլոր յատկութիւնների և արմատական մասների հետ, որ յառաջանում ամբողջութենից աւելի քան թէ առանձին մասներից, որ և ուրեմն առաւելապէս հաստատուած է բոլոր մարմնի դաշնակաւոր չափակցութեան մէջ: Մենք այս տեղ որիշ որիշ քննութիւնք յիշեալ պատկանելիքդ գեղեցկութեան:

Կացութիւնը յառաջացնում ամենամեծ նկատողութիւն. պէտք չէ, որ լինի նա ուղղահայեաց դէպ ի ցած, ուղղորդ և անշարժելի, այլ պիտոյ է ցուցանէ մի թեթև շարժողութիւն, մի քաղցր տեղատուութիւն, մի մեղմ փախիւթիւն և վայելչութիւն: Այս պատճառով, պատկերահանքը, մի առնելի միակերպութենից փախչելու համար, նկարում են մի կեղեցիկ կին 3 քառորդաչափ երեսակողմով (պրօֆիլով) և գլուխը մի փոքր դէպ ի շեղ: Միքէլէանգելոյ Վ. ենուսը, օրինակը գերազոյն գեղեցկութեան, ունի մի տարբերուն կացութիւն, թեթև շեղութեամբ: — Միայն սովորութեամբ, մանկութեան օրերից, սղատ ու անարգել, և ոչ թէ ձեռնշողական հագուստներով սահմանափակած շարժողութեամբ բոլոր մարմնի, բայց մանաւանդ պարսկաղութեամբ և վենուշարժութեամբ կարող են աղջիկ ու տղայ ստանալ մի գեղեցիկ կացութիւն և հաստատութիւն մարմնի: Շատ ձեռնտու կը լինէր մանուկ մարդերին աշխատել նմանիլ կացութեանը ձարտարապետական արձանների և պատկերաժողովների որ ինչ ինչ թեատրոնների մէջ տեսանելումեն որպէս կենդանի պատկերը (Tableaux):

Մարմնի դեմքը է մի կարէս արմատական մասն գեղեցկութեան. պատճառ, սա միայն ցուցանում մի լրացած կերպա-

բանագործութիւն և կազմակերպութիւն ձևի: Գեղեցիկ կերպա-
րանքների մէջ, որոնց հասակը աւելի բարձր է սովորական երկայ-
նութենից, մէջքը շատ նուրբ և թեթև է, մանաւանդ թէ վեղը
և անդամները, որոնց դիրքը և կացութիւնը շատ պատճառ են կա-
տարեալ վայելչութիւնը և դեղեցկութիւնը, աւելի երկայն են
սովորականից: Այժմեան սովորութիւնը կանանց, իւրեանց դէմա-
քը կրելու մեծ բազմօրինակութիւն շարժուածների մէջ, բայց նորանց
կարելի չէ համել երկրաչափական ճշդութեամբ, որ դորանով
նըշանակութիւն առնէինք գեղեցկութեան մասին: Այլև նոքա
փոփոխական են ըստ օրական ժամերի. պատճառ, մարդս առաւօ-
տան, երբ որ նա մի կազդուրիչ քնով նորոգել է իւր կարողու-
թիւնքը և ամրացել է; աւելի մեծ է, քան թէ երեկոյին, աշխա-
տութիւններից յետոյ: Մեծ բնագիտին Ֆրանկլին ասում է. «Եթէ
մի մարդկային մարմին համեմատելով միւսի հետ, կամ թէ ատու-
գանէս չափելով շատ մարդերի մարմինք, վերահասու են հղած
զննողութիւններին, այլ նորանով, որ աշխատել են ճշդու-
թեամբ նմանել բնութեանը և օրինակել նորան: Դիակաբութեան
արուեստին պարտական ենք, ինչ որ գիտենք այս մասին, և ըն-
նդութիւն ու ճաշակը միայն յառաջացուցել են, ինչ որ կարող
չէր արդիւնաւորել մեքենաբանութիւնը: Կտրել են քանանը և
կարկինը և ընտրել են իւր համար առանձնորդ աչքի չափը. մար-
մարիոնի մէջ իրատրել են ամենայն կերպարանք և ամենայն մաս-
ների շրջանագիծքը, և հասկացել են բնութիւնը պատկերահա-
նութեամբ, աւելի բարւոք, քան թէ նոյն իսկ բնութեան մէջ:
Երբ որ արդէն ունէին պատկերարձանք, ուսել են աւելի ուղիղ
դատել բնութեան կատարելութիւնը, հաւատալով նորան, քան
թէ չափերով:»

Ըստ ձևարուեստագիտներից, ինչպէս յայտնի է, աւել են մեղ
առաւել կատարեալ պատկերարձանքը, որ միտքերան քարոզվում են
որպէս մի ճիշդ պատկերացոյց մարդկային մարմնի նորա կատարե-
լութեամբ, և թէպէտ նոքա են լոկ ուրուական պատկերք, այնու
ամենայնիւ դարձել են նախատիպք, որովհետև ձևացուցած էին,

հետևելով առաւել բովանդակ, ճիշդ նկատած և ուղիղ գնահատած մարդկային սեռին առհասարակ, քան թէ այս կամ այն գիղեցիկ կենդանի կերպարանքին: Ըստ պատճառով ևս ոչ մի անձն գտած չեն, որի մարմինը ցոյց տար այնպիսի գիղեցիկ ըստացուածք, որպէս այս պատկերագրածները: Եւ այսպէս, մարդուս մարմնի չափերը ընդունած են, հետևելով այս օրինակներին:

Կանացի մարմնի մէջ, բնութիւնը շատ աւելի փոքր մտահոգուած այն սահմանաւոր չափակցութիւններին որ մեք նկատեցինք Յունաց քանդակագործների ճարտարութեան օրինակների վերայ, քան թէ այրական մարմնի մէջ: Ա՛յսչափ մեծ կնոջ մէջ փոքրագոյն լայնութիւնը համեմատուած նորա խորութեան հետ, ինչպէս 11½ը 7½ի հետ: Մարմնի կիսամասը համեմատ չէ; ինչպէս տղամարդի մէջ, այն տեղին ուր վերջանում է իրանի ստորին մասը, այլ ընկնում մի փոքր աւելի բարձր. այս պատճառով վերնամասը կանացի մարմնի (la taille) աւելի երկար է, աւելի նուրբ և աւելի թեթև: — Ա՛նջքը նոյնպէս աւելի երկար է, և նորա վերին մասը աւելի բարձրացած, այնպէս որ նորա գոգաւորութիւնը կանանց մէջ դէպ ի կողմերը աւելի նեղ է, բայց տղամարդերի մէջ աւելի արձակ: Իրեսի չափակցութիւնը երկու սեռի մէջ հաւասար են միմեանց: Ամենագեղեցիկ կանանց ու տղամարդերի մէջ դրած են աչքերը մի գծի վերայ, որ բաժանում է երեսը երկու հաւասար մասը, և քիթը ունի երրորդ մասը երեսի երկայնութեան: Պիի և Ճոկատի ուղղահայեաց գիծը երկու աչքի վերայից գնացող հորիզոնական գծի հետ միասին, կերպաւորում է մի կանոնաւոր խաչ, ինչպէս գիտէ այս բանը ամենայն պատկերահան:

Կանացի մարմնի ջոկը թէպէտ չէ նոյն իսկ գեղեցկութեան դայաթուիչ մասը, բայց անչափ պանծալի է կացուցանում նորան, և որովհետև մեք զննաբանութենից, որի մէջ Նիւտոնը և Գեօթէն այնքան մեծապէս սրդիւնաւորուած են եղել, գիտենք, որ սպիտակ գոյնը բացատրակում է և ցրվում առաւել շատ լուսաճառագայթք, ապա սա միայն կարող է տալ գեղեցկութեանը ամենավերին դրաւիչ վայելչութիւն, ըստ որում ընծայում է նորան մի տեսակ մեծութիւն որ կերպարանքի ազնուութիւնը և արժանաւորութիւնը բարձրացնում է: Կակուղ կանացի սեռի մէջ պարզ սպիտակութիւնը մերթի լինելու էր չափից դուրս միատեսակ. այս պատճառով բնութիւնը աշխատել է մերթի վայլողութեամբ և

յաջողապէս խառնելով սպիտակը կարմրի հետ ամենայն ելևէջքով, յառաջացնել մի անվերջ բազմերևոյթութիւն գուների, և այսպէս առաւելութիւն տալ մանների գեղեցկութեանը: Երիւնի կարմիր գոյնը մի նուրբ և քնքուշ մորթի մէջ, տեսակ տեսակ կերպարանքով մամի նուրբ վերնամաշկով, Ընակինկալ դիպուածք, շարժողութիւն երկիւղից, ամօթուց, սիրուց և ուրախութենից յառաջացնում են առաւել փոփոխութիւնք այս նուրբ, ծիրանի, սպիտակ, դէղին և կապոյտ գուների ելևէջքի մէջ, և տալիս են գեղեցկութեանը մի շատ յաջող աղդողականութիւն, որ մեք տղամարդկս այնքան հոդեպայծառութեամբ նկատումենք գեղեցիկ կանանց մէջ: Ամենագեղեցիկ և ամենահրապուրիչ գոյն մարմնի ունին, ինչպէս յայտնի է, շիկամազ քան թէ թխամազ կանայքը:

Մի գեղեցիկ էնդանախօսութիւն երեսի նոյնպէս տալիս է գերօրիւնակ առաւելութիւն կանացի գեղեցկութեանը: Եւ որովհետև կենդանախօսութիւնը դուրսից նշանակումէ ներքին ծածուկ աղդեցութիւնքը մտածութեան, ձգտողութիւնների և ախտերի, որովհետև մեք մարդս երեսի վերայ շատ անգամ կարող ենք դուշակել բոլոր ներքին որպիսութիւնքը, այս պատճառով բնական է, որ պայծառ հասկացողութեամբ, հեզամիտ և բարեսիրտ կանայք միայն, կարճ ասեմ, առաքինի հոգիքը կարող են միայն ունել մի ճշմարիտապէս գեղեցիկ կենդանախօս երես: Այս կարող է միայն ստուգապէս ցուցանել բարեացակամ, քնքուշ ախտեր և հոգու վերին խաղաղութիւնը, որ մեք նկատումենք աստուածնների պատկերների մէջ: Ամենայն սաստիկ, ախտաւոր շարժողութիւն, կատաղութիւն, բարկութիւն, չախալանց ուրախութիւն, այս պատճառով ընասումեն մարմնի գեղեցկութեանը: Եւ Լաւատերը, այն մեծ դիտունը խորագիմայութեան (ՓՈՐԻՕՐՈՄՈՒՔ) սխալվում չէ ասելով, թէ այս բանիս մէջ հոգեղէն գեղեցկութիւնը համեմատ է մարմնաւորին: — Ստածեցէք, դուք գեղեցկիներդ, այս բանս միշտ, և որոճացէք ձեր սրտի մէջ այն ճշմարիտ հիմնական խօսքը, որ միայն առաքինութիւնը և մի մեղմ բնաւորութիւն կարող է տալ ձեր մարմնի գեղեցիկ ձևերին և ձեր երեսի կենդանախօսութեանը մի գերագոյն գեղեցկութիւն և մի երանելի վայելչութիւն, որ անպատմելի կերպով կը գրաւէր տղամարդը: Ուրեմն, սիրելով գեղեցկութիւնը, շրջեցէք և դուք առաքինութեան շաւղի վերայ, որ մեր Փրկիչը ցոյց է տուել մեզ այնքան գեղեցիկ կերպով:

Ա՛յս տեղ պիտոյ է ինձ տակաւին մի ծանօթութիւն առնել, որ կանանց մէջ մանաւանդ 15 իւ մինչև 20 տարեկան հասակում, երբեմն երևում է մի նեղքին հոգեկան շարժողութիւն, որ յաճախ ոտիզացնում է ամենագեղեցիկ երևոյթ. այսինքն ջ-ոյծ-ոէ-ոն-ե բոլոր հնչմունքն ձէձ-ողվ Սովորութիւնը այսպիսի յայտնողականութեան, որ է մի կծկողական շարժողութիւն երեսի մկնականների, տալիս է ա-մենասիրուն երեսին անմեռութեան և յիմարութեան տպաւորոյթ, որովհետև երկու աչքի անկիւնների մէջ յառաջացնում է երկու շեղ գիծեր, որ ասես թէ երկու վիսկաների մէջ փակուած բերան: Ա՛յս վատ սովորութիւնը պիտոյ է մեզ միշտ, հաստատութեամբ և սկզբում բանաւոր պատճառներով անհետ կացուցանել:

ՅՕԳՈՒԱԾ 8.

Մ՛ենք տակաւին խօսումենք պատաքին դեղեցկութեան վերայ, որ թէև շատ յետադաս է ներքին կամ հոգեկան դեղեցկութենից, սակայն ունի մեծ կշիռ և յարդ աշխարհիս մէջ, նախ այն պատ-ճառով, որ առ հասարակ մարդերի մեծ մասը ուշադիր է պատա-քին քան թէ ներքին բաներին, և երկրորդ, այն պատճառով, որ մարմնաւոր դեղեցկութիւնը, առհասարակ դեղեցիկ կերպարանքը, սովոր է զարթեցնել մեր մէջ և դեղեցկի գաղափարը որ մի ստոյգ հոգեղէն բան է և այս պատճառով ուղղեցուցած է դէպ ի ան-վախճանը: Շ՛ատ ճաշակագէտներ այս պատճառով անուանումեն այս գաղափարը դեղեցիկ, ուստի իսկապէս կերպարանադործվումէ միայն այն բանը որ սովումէ բաղկանալ մարդուս, մի գաղափար վերհամբարձ մարով, և ինչպէս բոլոր վերհամբարձ գաղափարները պայծառացնումեն մարդու հոգին և յափշտակումեն նորա միտքը, նոյնպէս և պատահումէ այս տեղ, ուր մեք միջապէս, եղբայրնի գաղափարը վերաբերումենք դէպ ի աննեղրականը:

Եթէ կամենինք խօսել կանացի դեղեցկութեան գոյացուցիչ մասների վերայ, յիշելով նորա առանձին մասները, ապա հար-կաւոր է այս տեղ, որպէս և առ հասարակ միտ դնելով մարդկային դեղեցկութեանը, նախ և յառաջ քննել գլխի կերպարանքը և ձևաւորութիւնը: Գլո-խը բաժանումենք ուղեղի տան, կամ թէ մաղապատ մասը և Երես: Ուղեղի տանը պէտք է պատշաճապէս կամարաձև լինի, ինչպէս և ճակատը. պատճառ, ներա սեղմած

սկսաւաւակը գլխի և տափակ ձակատը ցուցանումեն յիմարութիւն այլ և թուլամտութիւն, և երկուքն ևս, ինչպէս յայտնի է, գեղեցիկ չեն։ — Երեսը, գեղեցիկ մարդերի մէջ, ունի փոքրիկ տատրածութիւն. ինչքան որ նա փոքր է, համեմատելով գլխի մնացած պատ մասնի հետ, նոյնքան ևս գեղեցիկ է, և այնքան ևս, ինչպէս ուղիղ ասում Ալեվիէ բնագնիրը, կարող ենք եզրակացնել նորա նիզ մի խնամական գերազանցութիւն։ Ճակատը պիտոյ է մի մեղմ շեշտած գիծով կապակցուի քթի հետ, որից յառաջանում յուրնական երեսակողմը (պրօֆիլը), որ մեզ շատ յաճախ հանդիպում հարուստը, աւելի սակաւ հիւսիսում։ Մի նեղ, կծկած, տափակ կամ շատ լայն ճակատ տգեղացնում և ամենագեղեցիկ գլուխը։ Այս մասը մանաւանդ կնամարդու մէջ պիտի ունենայ մի ուղիղ չափ, այսինքն երրորդաչափը բոլոր երեսի երկայնութեան (հաշուելով ճակատի վերնամասնից մինչև կզակը)։ Եթէ ճակատը շատ բարձր է և չափից դուրս ազատ, ապա ցուցանում նա յանդգնութիւն և համարձակութիւն. բայց նա պատ էր բացայայտել միայն մեղմ զգացողութիւնք, բարեացակամ հակամիտութիւնք և արժանաւորութիւն առանց հպարտութեան։ — Մի գեղեցիկ դէմք պարտ է լինել ձուաձև կերպարանուած, և մազերը ճակատի չորս կողմով, ինչպէս պահանջում գեղեցկագէտ Վինքելմանը, պարտ են բոլորակաձև յառաջ խաղալ մինչև քունքի վերայով։

Քիթը, ասում Լեոդէսը, որպէս թէ միաւորելով երեսի բոլոր մասները, կերպաւորում մի մասնով մի բաժանող բլուր երկու ձորի մէջ։ Եթէ նա չափից դուրս երկայն կամ հաստ է, տափակ կամ թէ կծկած, դուրս է ցցվում առանց վայելչութեան և կենդանախօսութեան, այս բոլորս են պակասաւոր կերպաւորութիւնք։ Ամենագեղեցիկ ձևը քթի է այն, որին ասում են արծուաքիթ, ինչպէս կարող ենք տեսանել դորան գեղեցկութեան գաղափարի վերայ։ — Թէպէտ դորան հաւան չէին ոմանք տղամարդեր, դոյա աւելի հաճոյ էր տեսանել կանանց վերայ մի ուղիղ, այո մի ախորժելի ասած բթաքիթ. բայց դա ապացուցանում միայն, թէ տղամարդերի ճաշակը զանազան է և ոչ միշտ կիրթ ըստ բաւականին, և թէ գեղեցկութիւն ու ախորժելի քաղցրութիւն չեն մի և նոյն. գեղեցկութիւնը պատ է հաճոյանալ մեզ, անմիջապէս, առանց երկրորդական նպատակների։ Ամենայն գեղեցիկ բան հաճոյ է մեզ, բայց ոչ ամենայն հաճոյ բան գեղեցիկ է։

Ահա այս հայելին հոգու, ձեռնտու լինելու դեղեցկութեանը, պարտ է հնամարդու մէջ ցուցանել ուշադրութեան արժանի յատկութիւններ շատ: Գոյնի մասին պիտոյ է ասել, որ թէ կապոյտ և թէ սեաւ աչքերը առաւել դեղեցիկ են: Երինադոյն կապոյտ, կապտաճաղկի պէս և ամենևին սև աչքերը հաւասարապէս դեղեցիկ են, և ոչ մինը դոյնիից նախապատիւ չէ քան թէ միւսը (Թէպէտ մեր Հայերի մտանաւոր ճաշակին սիրելի չեն կապոյտ աչքերը): Ի֊ւֆօն բնագիտը ասումէ. «Սովորական գոյները աչքի, են կապոյտ և նարնջագեղին. բայց առաւել յաճախ պատահումեն երկուքը միասին մի աչքի մէջ: Այն աչքը, որին ասումեն սև, են միայն դեղնագոյն թուխ կամ թէ թուխ նարնջագեղին: Այդ բանին վերահասու լինելու համար, պիտոյ էր միայն քննել նորանոյ մօտից. պատճառ, եթէ նկատումենք նորանոյ փոքը ինչ հեռուից, և նոքա լուսից դարձուցած էին ի բաց, ապա երևումեն սև, որովհետև դեղնաթուխ գոյնը այնպէս աստիճան որոշվումէ սպիտակից աչքումը, որ դա շատ հեշտ կարող էր սև համարուիլ: Կան նոյնպէս դեղին և բաց դեղին աչքեր, բայց սոքա չեն երևում սև, որովհետև այս գոյները չեն այնքան մուգ, որ ստուերի մէջ չքանայլին: Շատ սովորական է տեսանել մի և նոյն աչքի մէջ զանազան չափով խառնուրդ նարնջագունի, որ զարկումէ երբեմն դեղնի, երբեմն գորշի և երբեմն կապտաւի: Երբ որ խառնվումէ աչքի մէջ կապոյտ, ապա, թէև դա լինէր շատ ու շատ սակաւ, դառնումէ գլխաւոր գոյնը. այնուհետև կապոյտը երևումէ նուրբ թելերով ծիածանի թաղանթի (իրիսի մէջ) բոլոր տարածութեան մէջ, և նարնջագոյն դեղինը որպէս բիծեր, փոքր ինչ հեռաւորութեամբ, աչքի աստղի չորս կողմով. կապոյտը այնպէս անհետ է կացուցանում դեղինը, որ աչքը երևումէ ամենևին կապոյտ, և նարնջագունի խառնուրդը նկատվումէ այն ժամանակ միայն, երբ որ նորան քննուելս մօտից:» Եւ Ի֊ւֆօնի կարծիքը այնպէս է, որ ամենագեղեցիկ աչքերը են սևերը և կապոյտները: Կենդանութիւնը և կրակը որ կացուցանումեն գլխաւոր յատկութիւնը աչքի, ասելի ճառագայթումեն թուխ քան թէ միջակային գոյների մէջ. այս պատճառով սև աչքերը ունին ասելի կենդանախօսութիւն և փայլողութիւն, բայց կապոյտ աչքերի մէջ դրած է ասելի մեղմութիւն և գուշե ասելի նրբութիւն: Նոքա փայլատակումեն հաւասարակերպ կրակով, որովհետև նոցա միագոյն յատակը ամենայն տեղ բացատ-

ձակուամբ միատեսակ շառավիղներ, բայց դորա հակառակ, կապույտ աչքերի մէջ որոշումներ եղևէջք լուսի, ըստ որում ունին նոքա զանազան երանգներ որ և տալիս են զանազան գոյացութիւնք: Ա՛յո, ձիշդ, սեփական քննողութիւնք ուսուցել են մեզ, որ կապտորեակ կապույտ աչքերը, երբ որ պարզ է երկնակամարը, աւելի պայծառ ու դեղեցիկ են, քան թէ նոքա երեսումն պղտոր եղանակում; և այդ պատճառով ամենից առաւել արտայայտումն սրտի արամադրութիւնը, ըստ որում, ինչպէս յայտնի է, եղանակը այնքան մեծ ազդեցութիւն ունի այդ բանի վերայ, մանաւանդ դիւրազգած կանանց մէջ:

Ա՛յլանդակ կերպարանվումն աչքը մի անհաւասար ուղղութեամբ հայեացքի, շլութեամբ, մի սաստիկ մօտաւորութեամբ, կամ թէ չափից դուրս հեռաւորութեամբ միւս աչքից: Այս հասա, դուրս ցցուած աչքերը աւերումն դեղեցկութիւնը, վնասելով երեսի ձուաձև բոլորակութեանը: Ամենադեղեցիկ կերպաւորութիւն ցուցանումն մեծ աչքեր, որոնց շրջանակը այնպէս է կազմած, որ նշանակումն հայեացքի նրբութիւնը և մեղմութիւնը, առանց վնասելու նորա զուարթութեանը: Աչքի մեծութիւնը և երկայնացած ձևը աւելի ձեռնտու է դեղեցկութեանը քան թէ դոյնը: Գլխաւորեան ա՛ն է նուսի աչքերի մէջ, ստորին սրտևանունքի բարձրանալը տալիս է հայեացքին մի անպատմելի սիրահրապոյր և կաթոգին տպաւորութիւն:

Յ՚ծ՚ե (Ունքերը) պարտ են, դեղեցիկ լինելու համար, բաղկացած նուրբ և սև մազերից, որ քթի վերայով չեին միախառնվում միմեանց հետ. ապա թէ ոչ, հայեացքը խոժռվումէր դորանով: Պէտք է, լինէին նորա բարձր և դեղեցիկ կամարակապ, և նոցա մազերը, պէտք չէ, լինէին շատ նուազ. ապա թէ ոչ թուլացնումն աչքի կենդանագործութիւնը: Աչքերի արտևանունքը պարտ են ունել մի մեղմ շեղութիւն և մեռաքսի նման երկայն թերթեւթուվներ, դորանով լինում աչքը աւելի դեղեցիկ և հայեացքը աւելի մեղմ:

Ռնէրանը, մի կարևոր մասը կանացի երեսի պիտոյ է լինի փոքրիկ և նորա բացուածքը ոչ շատ երկայն, քան թէ քթի լայնութիւնը. — ստորին շուրթը պիտոյ է լինի աւելի բոլորակ և լիք քան թէ վերինը. այդպէս ցուցանելու է նա ամենադեղեցիկ յայտնողականութիւն և շատ առաւել քաղցրութիւն: Ատամ շրթունք և մի

մեծ բերան չեն գեղեցիկ, դոքա ցուցանումեն կոպիտ յանկուրթիւնք, որ ոչինչ յարակցութիւնք չունին հոգեղէնի հետ: Ի գիրէնեան ականի կիսափակ շրթունքը բացայայտումեն կարօտութիւն և զգալի հիշտութիւն: Մի քնքուշ գեղեցիկ բերան տալիս է սիրուն ամենամեծ հրապուրիչ զօրութիւն. պատճառ, ոչ պիսի հրաշալի կենդանախօսութիւն դրած է բերանի մէջ: Վերին շրթունքը նշանակում ճաշակը, հակակիրութիւնքը, ցանկութիւնքը, ախորժը սիրոյ: Ատելութիւնը և բարկութիւնը կծկում նորան, նրբութիւնը սրացնում նորան, գութը բոլորակում նորան, անառակութիւնը թուլացնում նորան: Վերին շրթի կորաձևութիւնը սպասաւորում էր հին աղգերի ճարտարապետների մէջ որպէս օրինակ սիրոյ աղեղի, և աւելի ուղիղ կարող չէին նոքա ընտրել:

Մի գեղեցիկ կէտ պիտոյ է լինի, հաւասար և առանց փոսի լինի, պէտք չէ, ունենայ մի դուրս ցցուած ծայր, այլ պիտոյ է առ փոքր փոքր և մեղմովին բոլորակուի. ապա թէ ոչ, ցուցանելու է ամբարտաւանութիւն և կոշտութիւն բնաւորութեան, որով կին մարդը շատ սիրելի չէ մեր աչքում: — Ատամները պիտի լինին մանր, հաւասարատեսակ, մեղմ բոլորակ և գեղեցկապէս սպիտակ, այնու հետև շատ և շատ վայելչացնումեն մի գեղեցիկ բերանի կենդանախօսութիւն:

Նոյնպէս ատամները պիտոյ չէր մոռանալ, եթէ քննումենք մի ըստ միոջէ գեղեցկութիւնը: Պէտք չէ, որ լինին նոքա չափից դուրս մեծ, այլ պիտոյ է ունենան մի պատշաճաւոր ձևաբոլորակ ձև և հաւասարակերպ շրջանակ, այլև անարժան է տգեղացնել նորանց ծանր ծանր օղերով: Շատ փոքր է պատահում որ մի մարդու երկու ականջները լինէին հաւասարապէս գեղեցիկ. ըստ մեծի մասին, մին աւելի գեղեցիկ էքան թէ միւսը, — Աչքերէ մասին կամենում ենք այսքան ասել, որ նոքա վայելչացնումեն երեսի գեղեցկութիւնը, ազդեցութիւն տալով ընդհանուր տպաւորութեանը. և եթէ թուխ են, ապա վայելչացնումեն մորթի սպիտակութիւնը: Այս պատճառով սիրումենք և թուխ մարը, բայց սորա հակառակ հին ճարտարապետները նախապատիւ են համարել պայծառ դեղնագոյն մազը: Une belle jeune femme à la magnifique chevelure, մի գեղեցիկ կին մարդ փառաւոր մազերով, գալձել է առակ Զրանսիացոց մէջ, և վայելչութիւնը գեղեցիկ գլխամազերի որ խազումեն վզի և թիկունքի վերայ, գիտէ ամենայն կին մարդ:

Ձանձարեղ Ա. Նըրկէս անուն ուսումնականը, գլխի և նորա

մանների գեղեցկութեան վերայ խօսում այսպէս. «Գեղեցկութեան պատկերների մէջ, բանաստեղծները սէրն աչողակ են գտանում, երբ պիտոյ էր նկարագրել աչքի և բերանի կատարելութիւնը, քան թէ կզակի և քթի, որովհետև չգիտէին ինքեանց այնքան ճիշդ հաշիւ ու համար տալ այն ազդեցութեան մասին, որ այս մասները յառաջացնում են կամ ոգեղացնելով, կամ թէ գեղեցկացնելով երեսը: Եթէ սոքա չլինէին և ոչինչ կերպով ձևնտու երեսի կենդանախօսութեանը, այնու ամենայնիւ ծառայում են նոքա երեսի գծագիրների կատարելութեանը և կանոնաւորութեանը: Կզակը սահմանաւորում և պահպանում երեսի ձուաձև բոլորակութիւնը. ուրեմն պլօճիլը պարտական է նորան իւր գեղեցկութեան մի բաժինը: Ասց ի սորանից, կզակը է մի յատկացուցիչ նշան մարդու համար, որովհետև ոչ մի անասունի մէջ չկայ դա: Քթի մասին կամինք ասել, որ եթէ նա չէ այնպէս յայտնի կացուցանում իմացականութիւնը, ինչպէս աչքը, սրտի որպիսութիւնը, ինչպէս բերանը, այնու ամենայնիւ, սոցանից աւելի ձևնտու է երեսի գեղեցկութեանը: Քիթը իւր երկայն, բարակ ձևով է առաջ դուրս երևեցող երեսագիծը և նորա առաւել յայտնի նշանագոյցը: ԵՒա է այն ամբոր կէտը, որի չորս կողմով բոլոր միւս մասները հաւաքվում են և համակարգվում են, և մի մտքով նոցա կառավարիչը, այնպէս որ շատ ճարտարապետներ իւրեանց պատկերների չափակցութիւնքը սահմանում են, հետևելով քթին: Ըստ պատճառով նորա ձևը պիտի լինի ուղիղ և պարզ. պէտք է, նա իւր հիմնական մասկարդակի հետ կերպարանքի մի հեշտ նկատելի, յայտնապէս որոշած անկիւն: Եթէ նա մի խոր գոգաւորութեամբ բաժանուած է ճակատից, եթէ նա լայն ու երկայն է և բերանից առանձնացած, ապա հարկաւոր չէ քեզ այլ տեղ որոնել մի անվայելուչ, վատթար երես: Ախտաւոր ցանկութեան, բարկութեան և կատաղութեան մէջ ուռչում են քթի ծակերը — զրկեթէ մի հատ շարժողութիւնը, որին ընդունակ է քիթը, բայց նորա վերին մասը միւսմէ դորանից ազատ: ԵՒորա անշարժականութիւնը ախտերի խառնութեան մէջ շինում նորան մի յայտարար նշան, թէ ինչքան փոփոխվում միւս դիծերը երեսի: ԵՒա տալիս է մեզ նկատել բերանի բացողութիւնը ցաւի և երկիւղի ազատակի մէջ և այդ շատ շարժուն գործարանի զանազան պաշտօնների մէջ: Ըստ նա նշանաւոր է կացուցանում արտահանութեի բարձրանալը և իջանելը. վերջապէս նա

ձեռնտու է ճշդութեամբ սահմանելու շարժողութիւնքը ուրախութեան, տրտմութեան, երկիւղի, զարմացքի, կատաղութեան և այլն։ Ծո՛ղ այս բոլորս. որպէս ապացոյց թէ ինչքան մեծ չափով մանուկից էր նա զեղեցկութեանը, յայտնի է, որ քթի կորուստը մեծապէս պղանդակումէ երեսը։ Վրնի մէջ փակվումեն աչքերը և կորսանումեն իւրեանց կենդանախօսութիւնը, պղէ կարող են նոքա, ինչպէս բերանը, ցաւով տզեղանալ. բայց այս տեսակ տեսակ փոփոխութիւնքը, որ տալիս են երեսին մի այլ կերպարանք, չեն խանգարում զեղեցկութիւնը. բայց երբ որ քիթը խանգարուած է, երեսը կորսանումէ իւր բոլոր սպասարկութիւնը։ Ինաւ կարելի չէ քաղցր հաճութեամբ քննել մի պատկերարուեստի որի վերայ պակաս է այդ մասը, որ այնու առնոյնիւ գրաւումէ մեր հիացքը, թէև նորա աչքերը չունէին ոչինչ աստեղափայլութիւն, և նորա շրթունքը ոչինչ դուստազարդութիւն։ Եթէ կամիմք մի մազ այնպէս յատկացնել, որ նա առանց տեսանելի լինելու, քթի ծայրը մի փոքր բարձրացնէր կամ ցածացնէր, իսկոյն կը վիպէր մեր սիրտը, թէ ինչքան տգեղանումէր բոլոր երեսի ձևը մի այդպիսի փոփոխութեամբ քթի։»

Վրիքը է առաւել ուշադրութեան արժանի մասը երեսի, և մի առակ է դարձել բոլոր ազգերի մէջ. Եթէ քիթս կորչի, կը խայտառակիմ երեսս։ Ասյս պատճառով, թէ վայրենի և թէ աշխարհաշէն ազգերի մէջ, վաղ ժամանակներից աշխատած են կորցրած քիթը փոխարինել մի արուեստական քթով. և մեր ժամանակում վիրաբոյժերը յաջող փորձեր են արել մի նոր քիթ կերպարանել մարդու բազուկից կամ թէ մի կտոր ճակատամորից. այս հնարագործութիւնը ասվում բժշկականութեան մէջ Ռինոպլաստիկ (քթաքանդակութիւն) և Լոնդոն քաղաքի մէջ Դրէկֆէ և Դիֆֆենբախ դեքտօրների ձեռքով կատարած է յաջողութեամբ։ Մանաւանդ Դիֆֆենբախը արդիւնակատար է գտանուել կազմելով նոր ականջներ, շրթունք, արտևանունք և այլն, որով կորուսած զեղեցկութիւնը շատ անգամ բարւոքապէս փոխարինուած է։ Ասյս բառերիս դրողը ականատես է և այն նորաշէն քթերին, որ ռուս Պիրագով պրօֆեսսորը հագցրել էր քթից զրկուած աղջիկների և շինականների երեսի վերայ Պօլտաւում, բայց կարող չէ դովել դորանց. գոնեայ ոմանք այդպիսի արուեստական քթերից փախցան և վայր ընկան, միւսերը բաւական տգեղ ու պղանդակ էին, այո՛, հաղիւ թէ քթի նման։

Ա՛րդուս քիթը է մի այնքան մեծակշիռ մասն գեղեցկութեան, որ սկսեալ վաղ ժամանակից ցուցել են դորան շատ մեծ ուշադրութիւն, և այս պատճառով արդար և արժանի էր, որ մի մասնագիր աշխատասիրէր մի պատմագիրք քթի վերայ: Հին ազգերի մեծագոյն մասը շատ կշիռ են տուած գեղեցիկ քիթերին: Պղատոն և Պլուտարքոս յոյնքը ասում են, թէ Պարսիկները մի վայելչայարմար քթի մէջ տեսանում էին իշխանավայել յատկութիւնների նշանը. նոցա առաջին թագաւոր Կիւրոսը ունէր արծուի քիթ: Ով որ Ներսէսեցոյ մէջ ունէր մի այլանդակ քիթ, կարող չէր հասանել քահանայական պատուի: Հայոցս ևս բարկութեան օրէնքները դնում էին այս գործարանի մէջ: Եգիպտացիք կտրում էին շնացող կանանց քիթը, և Հռչակիկ մարգարէն Երուսաղէմի բնակիչներին, որոնց մէջ ներս էին մտել կորստական բարք ու վարք, ահ էր տալիս այսպիսի պատժով: Անգլիայի թագուհի Հղիսաբէթը ազգային խորհրդարանի օրինքով հրամայեց կտրել ամեն մարդու քիթ, որ կը համարձակուէր պախարակել նորան և նորա կառավարութիւնը: 1291 թուականին, աբբայութիւնը սուրբ Պիւր մենաստանի Մարսիլիայում, և կուսանքը Ա.ր քաղաքի մէջ կտրեցին իւրեանց քիթերը, որ պահպանեն իւրեանց պարկեշտութիւնը, և իւրեանց անձը ազատեն իգասէր հալածողներից: Ամենայն բանաստեղծք արհամարհութեամբ խօսում են քթի պակասութեան վերայ: Քթի զանազան ձևերի մասին, իմացիր այսքան. մեք որոշումենք. 1) Ընձուռանման էն, որ երկայն է, մի փոքր սրածայր և դէպ ի ցած շեղուած. դորան դասանում ենք մանաւանդ կովկասեան կամ թէ արևելական ու եւրոպական ազգերի ցեղի մէջ, ուրեմն Ֆրանսիայի, Գերմանիայի, Անգլիայի, Իտալիայի, Իսպրեստանի, Սոլիստանի, Յունաստանի, այս և Հաբեշստանի մէջ: 2) Ռնդայլ կամ պոչուկ էն, որ արմատի մօտ նեղս է ձնշած, բայց նստուածքի մօտ լայն է. դա սեփական է սև ամորթ ազգերի ցեղին և հիւսիսաբնակ ազգերին: Դորանց նկատումենք առաւել յաճախ Լապլանդիայում, Թաթարստանում, Նօվայա Զեմլիայի մէջ, Սամոյեդների, Գրենլանդացոց, Էսկիմոների, Կամչադալների, Գալմուխների, Նոր Ֆաունդլանդացոց մէջ: 3) Դէպ է վեր ցցուած քիթ, որի ծայրը դուրս է երևում և սուր է շատ կամ փոքր: Դա սեփական է սիրեալս Մալայներին, Թիբետացոց և Չինեաց ազգին, բայց այդպիսի քիթեր հանդիպումեն յաճախ և Եւրոպայի

մէջ։ Թէ արծուանման քիթը միայն գեղեցիկ է, ասացինք արդէն վերեւում։ բայց թէ քթի դիւրքը առհասարակ և քթաձակերի ուղղութիւնը ապացոյցք են, որ մարդս ստեղծուած է կանգուն գնացքի համար, դա չէ անհաւանական առաջարկութիւն, որ նոր ժամանակներում մէջ է բերել ֆրանսիական բժիշկը Իսոլետ Կերբէտ անուն։ — Շատ փոքր է պատահում, որ երեխայք ծնանէին անքիթ, և Ռօբէլ ֆրանսիացին պատմում է թէ մի ատաղձագործ Նորմանդիայում ունեցել է երկու քիթ, որ բաւական յաճախ պատահում է որսկան շների մէջ։ Բայց եթէ ֆրանսիացի Նէվիճն պնդում է, թէ քիթը շարժվում միայն բարկութեան և կատաղութեան միջոցին, սխալվում է։ Երբէն սարսափման և տհաճութեան մէջ ծռումենք քիթը, արհամարհութեան ժամանակին նորա թեւերը վեր են քաշվում, ինչպէս վերնաշուրթը, երկիւղի և զարմանքի մէջ նեղանում և բարականում նա, և երկայնանում։ Ծռմայեցիք մի երկայն քթից ճանաչում էին մի արհամարհոտ, մի երդիճաբան մարդ. մի փոքրիկ բարձրութիւն քթի վերնամասի վերայ ցուցանում վատահութիւն, և մի քիթ վերևից սուտիկ կորացած, ոլոխի, զոլ օրինակ, ունեցել է Պատիլինա հւոմայիցին, որպէս թէ նշան է ձեռնարկու հոգու։

Վերջապէս դնենք այս տեղ մի ծանօթութիւն. ոմանք մարդիկ շատ հեշտ ստանում են մի ծուռ քիթ, եթէ նորա միշտ մի ձեռնով, մանաւանդ թէ ձախովը սրբում են նորան, որից այս պատճառով պիտոյ էր հրաժարուիլ։ Սոյնպէս մի ձախլիկ մարդ կարելի էր հեշտ ճանաչել, միտ դնելով նորա քթին։

(Շարունակութիւնը յետոյ.)

Ս. Նազարեանց։

ԹԸՆԱԽՕՍՈՒՄՆ

ՀԻՒՍԻՍԱՓԱՑԼԻ ՊԱՏՈՒԵԼԻ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ·

Հրատարակիչը արագ քայլերով մօտենում է ահա իւր տա-
րեկան ընթացքի նպատակին, Աստուծոյ ամենակալի յաջողելով
այս չորրորդ անգամն սկսանելով և աւարտելով իւր շրջանառու-
թիւնը: Հրատարակողը անպատշաճ է համարում մի ըստ միոջէ
կրկնել այսօր այն տեսակ տեսակ անախորժութիւնքը որոնց ան-
պատճառ պարտ էր հանդիպել նա մատենագրութեան հրապա-
րակի մէջ, պատերազմելով իւր ազգի կանխամտուտ կարծիքների
ընդդէմ, սպասաւորելով մեր ժամանակի լուսաւոր գաղափարնե-
րին, պաշտելով ճշմարտութիւնը, ինչքան որ ինքը դորան վերա-
հասու էր եղել, աշակերտուելով եւրոպական դիտութեանը: Հրա-
տարակողը կարծում չէ տեղիք ունենալ գանգատելու իւր ազգի
վերայ, որ նորա գաղափարները ամենևին նոր և անսովոր լինելով
հայկական մարդկերին, շատ տեղ չեն հասկացուած, շատ տեղ
միայն կիսով չափ, միւս տեղ ամենևին դէպ ի ներհակ կողմը, մի
այլ տեղ կամաւ և դիտութեամբ թիւրած ու աղաւաղած, պատ-
ճառ են տուել ցաւելի մոլորութիւններին. շատ բնական, մանաւանդ
մի ասիական ժողովրդի մէջ, որ դարաւոր ժամանակներ ապրած
լինելով ֆիզիքական և հոգևական ծառայութեան տակ, կորուսել է
և ամենայն ազատ մտածողութիւն, առողջ հայեացք իւր և մարդ-
կութեան վերայ, և իւր ներկայ անկրթութեան մէջ ոչինչ ընկե-
րական խնդրի վերայ չունի այլ տեսութիւն, քան թէ մի խառ-
նաւնդող, վայր ի վերոյ և վայրենի: Յաւելացրու սորա վերայ և
այն իրողութիւնը, որ Հայոց ժողովուրդը բաղկանում միայն վա-
ճառական մարդկերից և արուեստաւորներից, որ պարապած են լոկ

վաստակարարութեամբ և նիւթական շահաստացութեամբ, ամենևին հետի և կտրած մարդուս իմացական և բարոյական կեանքի խնդիրների քննողութենից։ Հայոց մէջ չկայ ազգային ուսումնական հաստատութիւն, և մի քանի կիսատ թերատ գրագէտ մարդիկ աւելի վնասակար են ազգին, քան թէ օգտակար։ Այնու ամենայնիւ, Հիսիսափայլի հրատարակողը կարող է այսօր խոստովանել հրապարակով — և շատ, բարեմիտ մարդիկ կը հաճանայնին նորան սրտի վկայութեամբ —, թէ այս չորս տարու միջոցում ոմանք մարդիկ, որ յառաջուց մի հայկերէն դիրք առած չէին իւրեանց ձեռք, շրջելով Հիսիսափայլի վայելչատիպ թերթերը, փոքր ի շատէ ստացել են սխորժակ ընթերցանութեան, ուսել են մտածել մի բանական խորհուրդ, դուշակել իւրեանց մարգկային կոչումը, իւրեանց յարակցութիւնը Աստուածութեան հետ բանականութեան և խոհականութեան միջնորդով։ Հիսիսափայլի հրատարակողը կարող է ասել, թէ ոմանք հոգիք և սիրտեր Հայերի մէջ դարձել են դէպ ի ճշմարտութեան լոյսը, ոմանք մարդիկ զգաստացած սկսել են ամենևին այլ աչքով նայել իւրեանց և ընկերի վերայ, ուսել են յարգել իւրեանց անձը, իւրեանց անձնական օգուտը միաւորել հասարակաց օգտի հետ, մինչև զրկանք ևս յանձն առնուլ դորա համար. մի առաքինութիւն, որ մինչև այժմ անօրինակ բան է եղած Հայերի մէջ։ Վկաղոր է Հրատարակողին այս պիսի խօսքեր յառաջ բերել այս տեղ իբրև փորձական իրողութիւնք որ մօտից ու հեռուից ծանօթ են նորան։ Այլ թէ տակաւին բաւական մեծ տարածութիւն հայկական կեանքից գտանվում է խաւարի հրամայող իշխանութեան տակ, շատ մարդիկ մանուկ չափ երկնչելով ճշմարտութեան լուսից և մանուկ չափ ատելով դորան, ոչինչ աւելի հարկաւոր բան ու գործ չունին, բայց միայն խնայագասութեամբ այս կողմ ու այն կողմ վազել, իւրեանց չար սրտի թունով ապականել ընկերի սիրտը, բամբասել և ամբաստանել ճշմարտութիւնը, գոնեայ բանականութեամբ շինուցանել մի լուսատու ճրագ, եթէ լոգիկական պատճառներով կարելի չէր նանմացնել դորան.— այդ բոլորը շատ լաւ գիտէ Հրատարակողը, առանց կորուսանելու իւր հոգու խաղաղութիւնը։ Մանչպես ամենայն Հայի, որ տեղեակ է համաշխարհական պատմութեանը, նոյնպէս ևս նորան քաջայայտ է, որ Եւրոպայի մէջ երեք հարիւր տարի յառաջ նոյն խաւար սխտերը կատաղած են մարդկութեան մէջ, նոյն

փոթորիկները բարձրացած են այլապէս քարողներուն վերայ, քան թէ ժողովուրդը մինչև այն ժամանակ լսել էր իւր խաբեբայ ուսուցիչներից և նոցա կամքի թշնամի սպասաւորներից։ Իւսիափայլի հրատարակողը կարող է միայն ցաւիլ այդ տխուր անցքի վերայ որ մեր օրերում և այոց մէջ կրկնվում են, բայց մի բոլէ ևս կարող չէ յողդողդուիլ իւր պինդ ու ամուր հաւատի մէջ դէպ ի ճշմարտութեան ամենայաղթող զօրութիւնը։ Ա յո՛, 1800 տարի յառաջ, հրէական մոլեկրօն ազգի քահանայապետքը աշխարհի լոյսը, կեանքը և փրկիչը անմտութեամբ մատնեցին օտար հռոմէական իշխանութեանը, և այն արդարն ու անարատ սպանվելի չարագործութեամբ բևեռեցին աւազակների խաչափայտի վերայ, բայց մի թէ մեռուցին ճշմարտութիւնը, և ոչ երբէք։ Կողգոթայի աստուածեղէն նահատակի հայհոյուած ճշմարտութիւնը, իրով ու սրով հալածուած ուսումը երկք հարիւր տարի յետոյ թագաւորական փառքով բազմումէ աթոռի վերայ, փլատակումէ բոլոր հեթանոսութեան հին աշխարհը և դառնումէ այնու հետև բոլոր քրիստոնեայ ազգերի քաղաքական կարգերի հիմք, կանոն և օրինակ ընկերական կեցութեան մէջ, թող մի քանի հեթանոսական ծեացողդք, ազգերի տկարամտութիւնը և անպատրաստութիւնը, դեռ ևս երկար ժամանակ խափանարկու լինէին ամենևին անպղտոր ըմբռնողութեանը և հասկացողութեանը քրիստոնէական կրօնի։ Երկք հարիւր տարի, աւելի ևս է, որ եւրոպական մարդկութիւնը վստահութեամբ ոտք կոխելով գիտնական քննողութեան ասպարէզի մէջ, ինքնին վերահասութիւն գործելով ճշմարտութեանը թէ կրօնի և թէ գիտութեան մէջ, մերժելով հին լսականական լեզուն, որով խօսումէր ազգերի հետ թէ գիտութիւնը և թէ եկեղեցին, և ճանապարհ տալով մատենագրութեանը ազգերի հարազատ լեզուներով, վերանորոգել է բոլոր Եւրոպայի կեանքը և յառաջացուցել է այսօրեան հոյակապ ճարտարապետական շինուածը եւրոպական բազմամասնեայ գիտութեան և ճարտարութեան։ Եւրոպացիք այդքան դարեր խոտ չեն կերել, այլ ամենայն ազնութեամբ աշխատել են և վաստակներ են վաստակել բոլոր մարդկութեան համար։ Կոտյա մի բաժինը պատկանումէ և մեզ՝ այնիկա իբրև արդև հասարակաց մարդկութեան սեղանից։ Իսատարակողը իբրև աշակերտ ուսական կրթութեան դպրոցի մեր օրերում, մի այնպիսի դպրոցի որ ամենայն օր յառաջադէմ է իւր ուսման ընթաց-

քի մէջ, եւրոպական գիտութեան ճրագը լուսատու լինելով նոցան, ։ բատարակողը իրրեւ բաղդատու ականատես մեր այժմեան Ռուսաստանի իմացական ու բարոյական վերանորոգութեանը, ստիպուած է ասել ոմանց մարդերի մեր ։ այդ միջից, թէ մեր օրերումն սրով ու բրով յարձակուիլ ճշմարտութեան վերայ, զուր և անօգուտ ջանք է, ակնյայտնի ապացոյց հակառակորդի ամենեւին տկարութեանը: Նրթէ ։ այերը ինքեանք չունին քաղաքական օրէնք, որովհետեւ բարոյական օրէնքից իւրեանց կեանքի մէջ զուրկ են, ապա թող մտածեն, որ նոքա հպատակ են մի տէրութեան, ուր ամենայն պարտաւորութիւնք գտտովումէ սրդարութեան դատաստանով, քննութեամբ և վերահասութեամբ, և ոչ թէ այն ասիական օրէնքով, որ իսկոյն հրամայումէ «Օ՜տրկեցէք գլխին:» ։ իւսիատիայլն հրատարակողը իրրեւ մարդ և մատենագիր կարող է այս և այն պատճառով չլինել այս և այն ։ ային սիրելի, որպէս և նոցան սիրելի չէ այս և այն ։ այը այս կամ այն պատճառով, բայց այսպիսի անձնական անսիրելութիւնը իւր համար նիւթ և պատճառ առնուլ և մատնել իւր հայրենակից եղբայրը մի այլազգի տէրութեան մեծաւորների, — մի այդպիսի գործ թէ ինչ անուն տայ ։ բատարակողը, չգիտեմ. բայց մի այդպիսի ընթացք երեւումէ նոցան մի աւելեւին խանգարումն բարոյականութեան, մի աւելեւին վերացումն անձայարգութեան, որ ամօթալից բան է իւր ազգի պատերի մէջ անգամ, ուր ծնայ, մի օտարազգի տէրութեան հրապարակի մէջ: ։ իւսիատիայլն Թշնամիքը արդարև կարող են այսօր ինչպէս միանգամ ։ րէից անմիտ ամբոխը, ձայն տալ. «Խաչ հան զդա, խաչ հան զդա.» բայց թող չմոռանան դոքա, որ այս մեր 19 դարու ռուսական ատենի դատաւորը չէ Թուլամիտ սրնտացի Պիղատոսը, այլ քաջամիտ, արդարասէր, բանագէտ Նդէբսանդր Նիկոլայեվիչը: Նւ այսպիսի դատաւոր ունելով իւր վերայ ։ բատաբակիչը, կարող է, իւր մաքուր խղճի բարձր գլխի տակ դրած, հանգստանալ խաղաղութեամբ, և ձայն տալ ։ այերին, իւր աւենասիրելի բարեմիտ եղբայրը, Թէ ։ իւսիատիայլ օրագիրը աւարտելով իւր չորեքամեայ ընթացքի շրջանը, մի քանի րոպէ շունչ կ'առնու, կը ժողովէ իւր զօրութիւնքը, որ դալոց 1862 տարու շրջանը սկսանէ դարձեալ:

։ իւսիատիայլը յառաջ կը տարուի և այսու հետեւ, նա յաղթութեամբ ոտք կը կոխէ 1862 Թուականի մէջ, ինչքան ևս ըսց

և ողջ առնէին նորա թշնամիքը, կոծելով իւրեանց կուրծքը: Աս-
տուած այդպէս է պատժում՝ չարախնդացներին, այրելով և տան-
ջելով դոցա սիրտերը իւրեանց յաստուկ նախանձու և ատելութեան
դժոխային կրակի մէջ: Հշմարտութիւնը կարող չէ մեռանել, նա
անմահ է, որպէս Աստուած, և ՝իւսիսափայլը կենդանի կը մնայ,
որչափ ՝այդց ազգի լուսաւոր հայրենասէր անդամքը կամէին նորան
պահպանել իւրեանց իմաստուն հոգաբարձութեամբ, և այդ լու-
սաւոր, հայրենասէր ՝այրն են, որոնց հետ ՝իւսիսափայլն հրա-
տարակողը ունի այս րոպէիս խօսելու մի քանի ուշադրութեան
արժանի խօսքեր: ՝իատարակողը ամենայն յօժարութեամբ պատ-
րաստ է յառաջ տանել իւր մատենագրական վաստակը ազգային
օգտի և պարծանքի համար Ռուսաստանի մէջ. բայց և ազգը պար-
տական է տեղեկանալով գործի հանդամանքին, գործակից լինել
իւր օգտին ու պարծանքին, մի փոքր ուշի վերհանձն և աւաքինի
կերպով, քան թէ մինչև այժմ եղած է: ՝իւսիսափայլն բոլոր աշ-
խատութիւնը թէ մատուցը և թէ նուիրելիանք, այս չորս տարու
միջոցում, կրել են համոզման թէ մի հատ մարդու ուսեր, որոնց
համար շատ ու շատ ծանր է եղած այդպիսի բեռն. այսուհետև
նոյն կարդով յառաջ տանել այդ մատենագրական ձեռնարկու-
թիւնը, անկարելի է, կամ թէ պիտոյ էր մեզ ամենևին զոհել մեր
անձը և անպիտանանալ միանգամայն: ՝իւսիսափայլն հրատա-
րակութեան գործը թէպէտ և, համեմատելով Ռուսաց ստուար-
թերթի օրագրերի հետ, չէ մի շատ երևելի բան, այնու ամենայնիւ
դորան յաղթել բաւական չէն մի մարդու ոյժ և կարողութիւն,
ոչինչ ազգի, և ոչինչ մատենագրութեան մէջ: Ընդհակառակն հար-
կաւոր է բաժանել աշխատութեան ծանրութիւնը շատս և հինգ
մարդու մէջ, որոնց միտը լինելու էր նուիրական աշխատութեանը
յանձնառու: Ընդպիսի կարգով ընթանալու համար, հրատարա-
կողը պարտ է ունենալ իւր համար օրինաւոր տեղական աշխա-
տակիցք, որոնց հետ ունէր պայմանագիր լինել ատենաւոր նոցա-
նից այս կամ այն գիտութեան բաժնից այսքան կամ այնքան թերթ
գրուած և ոյշեալ հատուցմամբ. ղոր օրինակ 18 մանեթ ընդիր
թարգմանութեան համար և 25 մինչև 30 մանեթ ինքնաշխատ
գրուածների համար: Ընդս բանս հնարաւորելու համար, ՝իրա-
տարակողը կարօտ է այլ ձեռնտուութեան, ՝այդց հատարակու-
թեան կողմից, քան թէ որպիսի մինչև այժմ դուել է. ամենևին

հասկանալի բան է, որ նա կարող չէ իւր աշխատակիցներին ար-
ծաթի խոստանալ, ուրեմն և ոչ աշխատակիցը գտանել իւր համար,
եթէ չէ տանում այնքան արծաթ որ հարկաւոր էր տպագրու-
թեան ծախքի և աշխատաւորների վարձատրութեան համար:
Այժ հրատարակողը մինչև այժմ տացել է տպագրութեան ծախ-
քը միայն, բայց և այս, այնպիսի անկանոն և անկալպ կերպով,
որ մեծ դժուարութեամբ և անախորժութեամբ միայն ամեն տարի
սկսել է օրագրի տպագրութիւնը: Օր որ օրինակ, տարին աւարտ-
ուել է, պէտք էր յառաջուց պատրաստել տպելիքը, պայմանա-
խոս լինել աշխատակիցների հետ, բայց մի կօպեկ արծաթ չկայ
Հրատարակչի գանձարանում: Ուր մնաց, որ տպագրութեան պի-
տոյքը տարու սկզբում, երբեմն յառաջագոյն վճարը տպարանին,
պահանջուէն ապահովութիւն արծաթի կողմից. բայց Հրատա-
րակչը իւր գործակատարներից զանազան քաղաքների մէջ, փո-
խանակ արծաթի տանում էր տեղական ապրանքների ցուցակներ, որպէս
վճարի մուրհակներ, որ ի հարկէ չունին ոչնչ նշանակութիւն. իսկ
արծաթ յետոյ կ'ուղարկեն, կամ ամենևին ոչ. որպէս թէ Հրա-
տարակողը տարու գործակատարութեան մէջ, ժամանակ ունէր
նամակագրութիւն առնել սորա և նորա հետ, պարտք հատուցնելու,
թէպէտ այդպիսի պարտք շատ անգամ և կորել են, վնասելով
Հրատարակողին. ամենևին ասել, որ ունինք և հատատ գտանե-
լով մեզանից, խաբել են մեզ: Պահպանած ենք ասել այս տեղ, որ
շատ Հայեր խնդրում են մեզանից ընդհ ցուցանել իւրեանց, բայց
ինքեանք անվոյթ են, նոյն ընդհը ցուցանել մեզ: Ամենայն գործ
հեշտանում կարգապահութեամբ, բայց մեր Հայերը ամենայն
գործ դժուարացնում են իւրեանց անկարգութեամբ. և մի անկար-
գութիւն, ինչպէս ասվոյ է պատահել, յառաջացնում միւս շատ
անկարգութիւնք, այնպէս որ լաբիւրինթոսից դուրս գալ կարելի
չէ լինում: Ուան Հայերի մէջ և այնպիսի մարդիկ, որ պահանջու-
մեն Հրատարակողից կարգ, բայց ինքեանք վարվում են ամենևին
անկարգութեամբ: Այս ծանօթութիւնքը դնելով այս տեղ, իրրև
իրողութիւնք, որ կը վկայէ ամենայն արդարամիտ Հայ, որ փոքր
ի շատէ տեղեկացել էր Հայսիասփյրի գործին, Հրատարակողը
խնդրում իւր աղեխ Հայերից, որ ուշադրութիւն ընծայելով
այս բաներիս, թեթևացնեն նորա աշխատութիւնը և տան նորան
ժամանակ նոցա իսկական օգտի վերայ աշխատելու, և ոչ թէ տրա-

լելով, սղոցելով անպիտանայնեն նորան դէպ ի ամենայն խելացի գործ։ Դարձ և յառաջ հարկաւոր է համարում Հրատարակողը ծանօթութիւն տալ պատուելի Հայոց հասարակութեանը, որ օրագրի տպագրութիւնը, միա դնելով վերոյիշեալ հանգամանքին, կարօտ է գոնեայ 500 ընկերագիր սահագողների, օրագրի վճարը մնալով մի և նոյն, այսինքն $9\frac{1}{2}$ արտաքոյ Մոսկուայի և 8 մանէթ Մոսկուայի մէջ. և արծաթը անուանների հետ միասին մինչև նոյեմբեր 1861 ի դեկտեմբերի 15 ը պիտի ամբողջապէս հասուցանուի Հրատարակողին, որ այնուհետև օրագրի առաջին համարի հետ կ'ուղարկէ սահագողներին վճարման տոմսակներ, վկայուած իւր յատուկ ստորագրութեամբ [1]։ Որպէս այսուհետև կը վերջանայ այն անկարգութիւնը, վճարման տոմսակներ Հրատարակողը ստորագրութեամբ ցրուել այս տեղ ու այն տեղ առանց ստացման արծաթի, ինչպէս մինչև այսօրս եղել է, որ մի ամենևին անխորհուրդ գործ է, թող թէ աղբիւր շատ անկարգութեանների, ինչպէս երևեցաւ։ Հիւսիսափայլի հրատարակութիւնը ստորագրելով խելացի կարգերի և կանոնների տակ, յոյս ունի Հրատարակողը աւելի կատարեալ և վայելուչ կերպով յառաջ տանել օրագիրը։ Երբ որ կ'ունենայ նա բաւական արծաթ, բանագէտ աշխատակիցներ գրաւելու և վարձատրելու, երբ որ աշխատութիւնը պատշաճապէս կը բաժանուէր զանազան մարդկերի մէջ, այնուհետև կարելի է տալ օրագրին և առաւել բազմօրինակութիւն, մանաւանդ թէ լցուցանելով այն բաժինքը Հիւսիսափայլի, որ մինչև այժմ մնացել են պակասաւոր, ըստ որում մի մարդ ամենայն բան առնել անբաւական է։ Հիւսիսափայլին հարկաւոր են և արտաքոյ նամակագիրք զանազան տեղերում, և այդպիսի մարդիկ պահպանել առանց վարձատրութեան կարելի չէ։ Այլ մի օրագիր յառաջ տանել այնպիսի խախուտ հիմքի վերայ, որ անխափիր ինչ որ պատահեց, ընդունէ իւր մէջ, նպաստ առնելով իւրեան ընթերցողների տգիտութիւնը, դորան մեք յանձնառու չենք, որովհետև այդպիսի մատե-

---

[1]) Հիւսիսափայլի հասուցման վճարքը մի քաղաքից, կարելի էր, փոխանակ առանձին առանձին ուղարկելոյ Հրատարակողին, ժողովել մի տեղ և անուանների հետ միասին հասուցանել միանգամայն Հրատարակողին, այսպէս կը հեշտանայ գործը և ուղարկողների և ստացողի համար։ Ամենայն հայաբնակ քաղաքում կը գտանուի այնպիսի արժանաւոր Հայ, որին օրագիրը ստացողքը կարող էին յանձնել իւրեանց արծաթը, և Հայէն, ուղարկելոյ Հրատարակողին, և այդպէս աւելի շահաւէտ կը լիներ նոյն իսկ հասարակութեանը, քան թէ առանձին առանձին ուղարկելով։

նպատուԹիւն ամենևին ընդդէմ է մեր ախոյժակին և մեր սովորուԹեանը. Թող ազգը լինի տգէտ, բայց նա ծնունդ մեզ միշտ յարդելի, և մեր պարտականուԹիւնն է ուսուցանել նորան, բայց ոչ մոլորեցնել նորան, և կերակուր տալ նորա տգիտուԹեանը: Էհսահսափայլն հրատարակողը չունի նիւԹի պակասուԹիւն, մանաւանդ Թէ մի զեղուն, ԹաԹաղուն առատուԹիւն, միայն Թէ բանդէտ աշխատաւորք պակաս են նորան. մի ընդհանուր ԹշուառուԹիւն է մեր ազգի մէջ, եւրոպական լեզուներ գիտեցող մարդերի ամենևին պակասուԹիւնը, և ի՞նչ կարելի է մեր օրերում մի լեզուով միայն դործ կատարել, այսինքն լոկ ռուսերէնով, Թէպէտ արդարև և այս մեծ բան է մեր Էայերի մէջ, միայն Թէ լինէին ընտիր Թարդմանիչք այդ լեզուի մէջ եղած ականաւոր բաներին: Կրիտիկական բաժինը Էհսահսափայլի — շատ ցաւելով ասում Էրատարակիչը այս խօսքս — յետ է մնացել մինչև այսօր նոյնպէս անձեռնհասուԹեան պատճառով, և այս մեծ կորուստ է ազգի համար, որովհետև կրիտիկայի պակասուԹեամբ շատ ու շատ դըրուածք, շատ ու շատ անհիմն և կամամատածական կարծիք երևելի խնդիրների վերայ անխորհ մարդերի գլխից արձակ համարձակ լոդ են տալիս մատենագրուԹեան մէջ, և ոչ ոք դոյա ձանապարհը փակում չէ, բանագիտուԹեամբ և լոդիկական վերլուծուԹեամբ:

Էհսահսափայլի հրատարակողը այս մտածուԹիւնքը դնելով պատուելի Էայոց հատարակուԹեան առաջև, և օրագրի պահպանուԹիւնը վերոյիշեալ պայմանների վերայ յանձնելով նոցա հայրենասէր հոգաբարձուԹեանը, յայտնում իւր հոգով չափ պատրաստուԹիւնը և այսուհետև աշխատելու իբրև մատենագիր իւր ազգի համար, եԹէ կամի սա ձեռք և ոտք տալ նորան մի փոքր ազատուԹեամբ աշխատելու, քան Թէ մինչև այժմ եղած է: Այսպէս արժան էր լևս, եԹէ մի մտաւորապաշխատող մարդ պիտի պահպանէր իւր հոգու զուարԹուԹիւնը և ոչ Թէ դառնար մի կատաղեալ մեքենայ:

Ս. Նալբեանց:

1 ին Հոկտեմբերի 1861 Թուականի.

ՄՈՍԿՈՒԱ:

ԸՐԴՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՈՂ ՀԻՒՍԻՍԱՓԱՅԼԻ·

Հետևեալ նամակս Ալմիայից բովանդակելով իւր մէջ հայոց սահմանց և դիտութեան արժանի տեղեկութիւնք շատ; Պարսկաստանի մէջ գտանուած քրիստոնեայ ազգերի, Ասորոց և մի մասամբ ևս մեր Հայոց կրօնական ոգեվիճակութեան վերայ, արժան համարեցի ուղարկել Ձեզ դորան, պիտանի կացուցանելու մեր սիրելի ազգին Ձեր Հիւսիսափայլի միջնորդով, եթէ պատշաճաւոր կը դատէք· ողջ լերուք,

Ամենայն Հայոց, բարեացակամ

Ձեր

ԾՈՎՀԱՆՆԷՍ ՔԱԹԱՆԵԱՆՑ·

20 Յն. Յուլիսի 1861 ամի.

ՍՏԱԻՐՈՊՈԼ·

ԸՐԳՈՅ ՌԱՐԵԿԱՑ,

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՔԱԹԱՆԵԱՆՑ.

Ձեր վերջին նամակը, որ գրուած էր մարտի 7 ին կարդացի կարի ուրախութեամբ: Հ՚նորհակալ եմ. աշխատել էք հասցնելու «Ազիաանպայ ա՚անքը» մեր մի հատուած բանը Մոսկուա պատուելի Նազարեանցին, որ կարդացի Հւսկսատիայի թերթերու մէջ: Դարձեալ շնորհակալ եմ պարոն Նազարեանցէն առաւել յոյժ. պատճառ, պատուել է մեր գրուածքը, տպելով իւր պատուական օրագրի մէջ, մանաւանդ ճշակելով նորա թերութիւնքը:

Այս նամակի ծոցումը կ՚ստանաք մի քանի ոտանաւոր բաներ, որոնք մեր սեպհական աշխատութեանց պտուղներն են: Սուրբ գիրքը կարդալու ժամանակ, տեսնելով, շատ յարաբերութիւն ունին դոքա մեր ազգի այժմեան վիճակի հետ, մանաւանդ, կարող են փոքր ի շատէ ներգործել ազգել նորա բթացած, թմրած, մարմին դարձած հոգու վերայ — ախորժել եմ աշխարհաբառ թարգմանել, ոտանաւոր ձևով: Կ՚ենդրուամեմ, այս ոտանաւորները նոյնպէս անկրնաւսա հասուցանել պարոն Նազարեանցի ձեռքը. թէ կամի, կարող է տպել իւր օրագրի մէջ (չկարծեմ որ նորա օրագրի ախորժակին ընդդէմ գտանուին): Ոտանաւորներու հետ անպատշաճ չեմ համարում յուղարկել պարոն Նազարեանցին այս իմ առ Ձեզ գրուած նամակը. պատճառ, նա կարող էր տեղեկութիւն ստանալ այն խօսքերէն, որ ես գրած եմ, Աստպատականի Միսիոնարներու մասին:

Երդէն — 61 Յունականի 5րդ տպիան է. բայց Հւսկսատիայի տետրակները տակաւին հասած չեն ինձ. կասկածումեմ, չկոչէ թէ

Օրագիրը դադարած լինի։ Եթէ այս տարի նոյնպէս բաժանուիլ եմ դրուած, կարող էք դրկել պարոն Նազարեանցին, որ ինձ հասանելի ամաւեարակները Թաբրիզ յուղարկէ ազգ Գալուստ Երմազանեանի տեղապահների հետ. կամ թէ իմ անուամբ ուղղակի Թաբրիզու նամակատունը. այն տեղից դերասխմնան Յովհէփ Խանը, նամակատան մեծաւորը, անկորուստ ինձ կը հասուցանէ։

Դուք պահանջումէք ինձանից Աղուլատականի Միսիոնարներու մասին Չեզ տեղեկութիւն տալ. որով կը կատարեմ Ձեր խնդիրը։ — Ա,իժմ ես ո-ւմ-ո քաքաքուելն եմ։ այս տեղ է տէրութիւնն պրօտեստանտ Ամերիկացիներու և Հռոմէական Լազարիստեան միաբանութեանց բոլոր կսրողութեանց կենտրոնը։ Յիշեալ քարոզիչները, Ուրմիա քաղաքի արեւմտեան ափերում, գտան մի կրօած, վերջին ռամկութեան մէջ ընկած ազգ. ոչք վարմունքին մի խաւար նիւթական աստուածպաշտութեամբ, որ առաւել նսեմացած էր Նեստորի վարդապետութեամբ։ — դոքա էին Ասորիքը. — մի հին հոյակապ ազգի մնացորդք։ Յաջող միջոցները, այլև երկրի պատահ հանգամանքը շուտով ձեռնտու եղան նորին Ամերիկացիներուն առաւել հեշտութեամբ և առաւել սրընթաց յառաջ տանելու իւրեանց գործը։ — Դոքա էին — Ս. բարեխնամ Տէրութեան ազատ թոյլտուութիւնը. Ս. Ասորոց նիւթական անկարողութիւնը և իւրեանց իշխաններից ունեցած անտանելի բռնութիւնը — միւս կողմից եւրոպացի Ամերիկացիներու (մանաւանդ Անգլիացիներու) դրամացի և տէրութեան կողմից պաշտպանութիւնը. Գ. Ասորոց, իրրև մի երեսէ ընկած ազգի ստրկական փոխոխամտութիւնը, և նոցա խորին տգիտութիւնը իւրեանց առանձին դաւանութեան. Դ. Ազգի ընկնելը վերջին յուսահատութեան մէջ հալածանքի երեսից, և Եւրոպացի մարդիկը տերութենից մեծ պատիւ ունենալով և նոցա հետևողքը ամենայն մտասմբ պաշտպանուած լինելով և այլն և այլն.

Հռոմէական քահանաները, թէպէտ և յառաջ ոտք կոխեցեն Պարսկաստանի հողի վերայ (իրրև 35 տարի յառաջ). բայց յառաջադիմութեամբ կարի հետ մնացին Պրօտեստանտներէն։ Դոքա հազիւ թէ կարողացան Ուրմիոյ քաղաքի և դիւղերիից մէջ ձեռք բերել 200 տուն (գերդաստան) անունով կաթոլիկ պատրաստականներ. և Սալմաստ նահանգում մինչև 300 տուն։ Թէպէտ կարող էին աւելի յառաջադէմ դառնալ քան Պրօտեստանտները. պատ-

ձևաւ, կաթոլիկեան քարոզչութիւնը սուսեր յարմարութիւն ունէին ժողովրդի ընդունակութեան հետ. մինչ դորա հակառակ, պրօտեստանտներու քարոզչութիւնը միշտ նման ծակոտումներ ունէր սպասող ժողովրդի սիրտերը:

Լուսաւորութեան մասնաւոր հռոմէական քահանայքը ոչինչ օգուտ չտրցին բերել իւրեանց նոր կրօնափոխ ժողովրդին. միայն թէ ասոնք աղքի յառաջդէմ աստուածապրած մնացին տեղ տեղ սովորեցուցին պաշտել մի նոր աստուած, պապը: Այժմ կաթոլիկները, որպէս Ուկրիոմ, նոյնպէս և Սալմասում խոսրովից գիւղի մէջ ուսումնարաններ ունին երկու սեռ մանուկ մարդերի համար: — Որոց մինի մէջ ուսուցանումեն քահանայքը սարգսանդերին, իսկ միւսի մէջ Ֆրանսիայի կուսանք աղջկներուն: Այս մինչև այսօր, մի մասնաւոր կրթութիւն ունեցող մարդ չէ դուրս եկել նոցա վարժարաններից: Այն չեմ կարող ուրանալ, որ դուրս եկել են ախրացուներ, որք դիտեն անդիր մի քանի սերտած եկեղեցական աղօթք և մի քանի հատուկոտոր բառեր Ֆրանսիերէն: Եւ աստուածաբանութենից մի քանի թոյլ վարդեր. որով հաւատքի մէջ, կարող էին մի հայ տգէտ քահանայի դէմ, հաստատել պետրոսի դրնաւորութիւնը Եւսաբիանների վերայ, Սուրբ պապի, նորա յաջորդ լինելով, բոլոր քրիստոնէից վերայ այս աշխարհում աստուածանալու կարողութիւն ունենալը. մանաւանդ երկնքում արքայութեան դռնապան լինելը և դժոխքի մէջ Ներքերոսի պաշտօն կատարելը:

Յետին ժամանակներում, իբր 3 տարի յառաջ (ի հարկէ Հայերը կրօնափոխ առնելու համար) Վիեննայի սուրբ Վազարու միաբաններից Սալմաստ եկան երկու վարդապետներ — Հայր Մովսէսը և Հայր Պղեմէս Սիբիլեանը, ընթերցող հասարակութեան ծանօթ, հնագէտ և դրամագէտ անձն: Նոցա գալուստը, սկզբում խիթալի էր, շատ վտանգաւոր երևեցան հասկացող աչքերու. բայց վերջում համարեա բոլորովին անարդիւն եղան: Պատճառ, նոքա ոչ մի Հայ չկարողացան մոլորեցնել իւրեանց երևելի հայազգի և հայ կրօնաւորի անունով (որպէս սկզբում վարվում էին): Շուտով հեռացան նոցանից նոցա հետևող մի քանի թեթևամիտ դիւրազնիներ, երբ հասկացան նոցա չար դաւանագործութիւնը:

Սխալմունքները մինչև այսօր ոչ մի Հայ չեն կարողացել

Աղտպատակների մէջ կրօնական առնել։ Ես սեղ աւելորդ չեմ համարում ծանուցանել ձեզ պլխաւոր պատճառը. և դուք ընդունէք։ Առաջին. Հայերը Պարսկաստանի մէջ կոտրած չեն, պահպանում են իւրեանց ազգային իրաւունքը, ունենալով իւրեանց հոգևոր առաջնորդ սուրբ Էջմիածնայ աթոռից, որ մեծ պատիւ, մեծ իշխանութիւն ունի, թէ տէրութեան կողմից և թէ իւր վիճակաւոր ժողովրդի վերայ։ Երկրորդ, առաւել վճռական է այս տեղում Հայերի տգիտութիւնը. թէ ինչ է հայեց ուխտ պէտ էլեսոնեայ չէր։ Ինկլիզ, Ֆրանկ, կաթոլիկ անուններըը լսում են, որպէս հեթանոսների։ Հայ ազգանունը համարում են կրօնական անուն, որ մնայացած էր Վրիստոսից. ուխ հայ չէ, և էլեսոնեայ չէ. սո քեզ տգիտութեան կարծիք, որ առաւել օգտաւէտ դուռ է կատարում քան թէ դիտութիւնը այս տեղում։

Հայաքանս բաւական է կաթոլիկներու մասին. այժմ խօսենք Պրոտեստանտներու։ Ամերիկայի առաքեալներըը, այդ քրիստոսական հաւատքի ժրաջան մշակներըը, մեծ դուռ են բացել տգիտութեան մէջ են։ Պարծեմ, ոչ մի տեղում, ոչ մի ազգի մէջ, այդչափ սուղ ժամանակում, (20 տարու միջոցում) չկատարեցին այն հրաշալի յառաջադիմութիւնը, որպէս Ամերիկայի նահանգումը, ձեռք բերելով մինչև 2000 դերդաստան պրոտեստանտ ժողովուրդ, բայց ոչ պակիսի ժողովուրդ, — իւրեանց դաւանութեան մէջ կարի ուսեալ և կրթեալ ժողովուրդ։

Սըրտ սարի լանջացը վերայ (այս անունով գիւղի մէջ) այն, իւր դրութեամբ հիանալի ամարանոցումը, որ չէ Ամերիկա քաղաքից աւելի հեռի քան 10 վերստ, Պրոտեստանտները ունին իւրեանց պլխաւոր Ժեմարանը։ Ներս մէջ մտանում են այն աշակերտներըը, որք պիտղնու մտնուր վարժարաններում նախապատրաստուած էին։ Պլխաւոր Ժեմարանը Սըրտի պարտեզակում իւր մէջ այնքան ուսման ընթացք, որքան է մի եւրոպական գիմնազիոնի գիտութեանց ամբողջ կուրսը. միայն թէ այս տեղ աստուածաբանական և ձարտասանական մասին շատ հմտանում են աշակերտներըը որ այդպէս լինին ձարտարախօս քարոզիչք աստուծոյ բանին։ Ստանալով իւրեանց հին և նոր էլեսոնէ լեզուն, աւելի յարակցութիւն ունենալով աստուածաշունչի բնագրի լեզուի հետ, առաւել ծանոթանում են հին կտակարանին։ Այլ մի քանի աշակերտներ միայն, մինչև այսօր սովորել են անգլիարէն. թէպէտ շատերը ախոր-

ժակ ունին սովորելու, բայց չեն կամենում ուսուցանել Ամերիկացիքը. ըստ որում, այժմուս տերութիւնը մեծ կալօտութիւն ունելով եւրոպական լեզուների հմուտ անձների, շուտով թարգմանչի պաշտօն է տալիս այնպիսիներին, որք գիտեին մանաւանդ Ֆրանսերէն, անգլերէն կամ գերմաներէն եւ այլն: Եւ Անգլիացիք իւրեանց աշակերտները իւրեանց դործին պիտանի կացուցանելու համար, կրթուանն նորանց Ասորոց նոր բանասիրութեամբ: Ուսաղաքի մէջ է մի այլ դպրոց ձեռարան աղջկուներու համար, ուր ուսուցանուանն ամերիկացի կանայք: Նորա մէջ ընդունվուանն այնպիսի աղջկունք, որք նոյնպէս նախապատրաստուած էին գիւղերում մանաւանդ աղջկանց վարժարաններին մէջ: Աշակերտուհիքը, ուսանին սաարանելուց յետոյ, պսակվուանն Արբուի աշակերտներու յետ, այնուհետեւ կամ պաշտօն են ստանում գիւղերու մէջ վարժապետութեան եւ կամ քարոզչութեան:

Արբու քաղաքի մէջ, աղջկանց ձեռարանի մօտ, Ամերիկացիներ ունի տանում, է եւ մի փառաւոր տպարան ամենայն հարկաւոր պատրաստիքով. նորանում տպուել են մինչեւ այսօր սուրբ գրքի քանի քանի տեսակները եւ այլ զանազան գրուածք ասորոց աշխարհաբար լեզուաւ: Նորանում ամիսը միանգամ տպվուանն եւ մի օրագիր ասորերէն «Ջարիրդ բարայ» (լուսաւորութեան արշալոյս) անուանով:

Տարակոյս չը կայ, որ Ամերիկացիքը, մի փոքր ժամանակից յետոյ ձեռք կը բերեն բոլոր Ուրմիոյ նահանգի Ասորիքը. պատճառ, վերացել են նոցա հին կրօնքի պաշտպանողքը: Նոցա հին Պարբիները, բոլորիքեան այժմ Պրօտեստանտներից ոռճիկ են ստանում: Թէպէտ ազգի մի քանի հարուստները, գլուխը կտրած օձի մարմնի նման շարժվուանն. բայց նոքա եւս շուտով կը դադարին:

Այժմ սկսել են Պրօտեստանտները քարոզել Գ--ա--է, Ն--ա--ս, Դ--ե--է, Տ--է--է սարերում ճ--ը--ե--է, որք նոյնպէս ասորիք են լեռնաբնակ: Տարակոյս չկայ, որ շուտով կ'անցանեն եւ ճ--ը--ե--է, մինչեւ Մօսուլի բերանը:

Այժմ կայ այս տեղ իններ ամերիկացի միսսիոնարներու տուն, որոց մինը է ձիր բժիշկ եւ քարոզիչ, մինը տպագրապետ, միւսերը վարժապետ եւ քարոզիչ: Կայ ի դորանից 2 տուն վարժապետուհիք, որք դաստիարակուանն աղջկունքը:

Ա՛հելոյդ չե՛մ համարում, մի քանի խօսք դրել Ասորոց այժմեան կաթուղիկոսի վերայ։ — Ասորոց այժմեան կաթուղիկոսը է Մա՛ր Շի՛մոնը (Տէր Սիմոնը)· դա նստում է այժմ Կո՛ճանէ՝ գիւղում, Տիար — Տըխուր նահանգի մէջ· որից կազմվում է Նըհէ գետի հովիտը։ Մա՛ր Շի՛մոնը 10 տարի յառաջ, քանի Օսմանցիք չէին սիւրպետել այն կողմերին (Ռուդվերի անկախութեան ժամանակ) իւր քաջ ձո՛ւլ ցեղի օգնութեամբ, բայց ի իւր կաթուղիկոսութեան աթոռը հաստատուն պահելուց, պաշտպանում է և իւր ազգի անկախութիւնը· որով էր հոգևոր և մարմնաւոր առաջնորդ իւր ցեղի համար։ (Դուցէ ժամանակի շատ խորին հնութիւնից մինչև 10 տարի յառաջ այս օրինակ կառավարվում էին վայրենի Քո՛ւրդերը իւրեանց հոգևոր առաջնորդներու ձեռքով)։ Բայց երբ Օսմանցիք նուաճեցին Ռուդիստանու տիրող ա՛ղթամներըն (իշխանները), չհնազանդող Մա՛ր Շ՛իմոնը պատերազմեցաւ Բաբէնանցիի հետ, և յաղթուեցաւ, թշնամին կողոպտեց կաթուղիկոսի տունը և նորա ցեղը։ Մա՛ր Շ՛իմոնը, յուսահատած, Ուրմի եկաւ, իւր ազգից չգտաւ այն առաջին պատիւը։ Պրօտեստանտեան հոգին ոչ միայն Մա՛ր Շ՛իմոնին, այլև նոյն ինքն մեծ Նեստորին մոռացման մէջ էր ձգել։ Ա՛ւ ժամանակ Ուրմի միսիոնից չկայ, բոլորովին յուսահատած, կրկին վերադարձաւ դէպ իւր երկիրը, այս մի քանի խօսքը ասելուց յետոյ «Ես ինդրում եմ ձեզանից, որ սրինդ կենաք ձեր առաջին դաւանութեան վերայ· բայց երբ կամիք կրօնափոխ լինել, մի լինիք պրօտեստանտ· կամ Հայ եղէք կամ Ֆրանկ և կամ Ռուս»։ Բայց Լուտերի հոգին չյաղթող է· նորա կտակը չհաստատուեցաւ։ Մա՛ր Շ՛իմոնը այժմ կենդանի է· բայց Օսմանցոց հպատակ իւր ցեղովը հանդերձ, վերջին յուսահատութեան մէջ է· նա յօժար է իւր ազգի միացորդը կամ խառնել Հայոց հետ և կամ Ռուսաց։ Ասորւոց առաջնորդ հանգուցեալ Սահակ Եպիսկոպոս Սաթունեանի ձեռքով քանիցս անգամ այդ մասին նամակագրութիւնը են եղել դէպ ի Էջմիածնայ աթոռը· բայց ուր այդպիսի սրբազան ձգտողութիւն Հայերու կողմից··· Էջմիածնայ վարդապետները թմրած են զեղխութեան հրապոյրներով··· Բայց Ռուսերից քահանայք, եթէ գալու լինին այս կողմերս, քանի կենդանի է Մա՛ր Շ՛իմոնը — շատ շուտով կարող են իւրացնել բոլոր Ասորոց միացորդները· մանաւանդ որ ազգը շատ հակամիտ է դէպ ի Ռուսաց կողմը։

Այսքանս բաւական է. դուցէ դորանով կը բաւականանայ ձեր հարցասիրութիւնը: Ուրիշ ժամանակի եմ թողում ձեզ գրել, արդեօք Ազգապատականի Հայերը եւս մի ժամանակ կ'ենթարկուին Մխսիճներուց ազդեցութեանը, թէ միշտ կը պահպանեն իւրեանց հայկական կրօնը:

Մի բան, որ գրած եմք ձեր եղբօր մասին, չեմ կարող յանձնառու լինել. Ես ինքս ձանձրացել եմ այն առ և տուրից որ Թիֆլիզում կատարումենք. պատճառ, ունի նեղութիւն չափից դուրս, բայց վաստակ կարի սակաւ: Մտադիր եմ Պոլիս գնալ, որ Պոլսից դէպ ի Թարբիզ Եւրոպացւոց մանուֆակտուրիայի առուտուրը առնեմ:

Վրանից անգամ ձեզ գրած եմ, այժմ կրկնումեմ, որ մի քանի հատ ռուսերէն ընտիր Թարգմանութիւնք, մանաւանդ ռօմանս, իմ համար յուղարկէք. թէ Մոսկուա կամ Ս. Պետերբուրգ բարեկամ ունիք, կարող են առնուլ. իսկ նոցա գինը որքան և լինի, կը գրեմ Թիֆլիսուց, անյապաղ ձեզ հասուցանեն: Ես պահանջումեմ, որովհետև, կասկածումեմ, այս տեղում Ռուսաց լեզուն ամենևին անգործածութենից մոռանալ: Մնաք բարեաւ:

Ձեր Ց. Մ. Մելիք-Ցոխբեանց:

25 ին Ապրիլի 1861 Թուականի.

ՈՒՐՄԻԱ:

ԻՏԱԼԱՑԻ ԱՂՋԿԱՑ ԵՐԳ 1859 ԹՈՒԱԿԱՆԻՑ·

«Մեր հայրենիք, Թշուառ, անտէր,
Մեր Թշնամուց ոտնակոխ,
Իւր որդիքը արդ զանչումէ,
Հանել իւր վրէժ քէն ու ոխ։»

«Մեր հայրենիք շղթաներով
Այսքան տարի կապկապած,
Իւր քաջ որդոց սուրը արիւնով
Պիտի լինի ազատված։»

«Լ՚հա, եղբայր, քեզ մի դրօշ,
Որ իմ ձեռքով գործեցի,
Գիշերները ես քուն չեղայ,
Արտասուքով լուացի։»

«Կայմիր նորան, երիք գունով,
Նուիրական մեր Նշան,
Թող փողփողի Թշնամու դէմ,
Թող կործանվի Աւստրիան։»

«Ինչքան կին մարդ, մի Թոյլ էակ,
Պատերազմի գործերում
Կարէ օգնել իւր եղբօրը,
Զանց չարեցի քո սիրուն։»

«Լ՚հա իմ գործ, ահա դրօշ,
Շուտ ձի հեծ՚իր քաջի պէս,
Գնա փրկել մեր հայրենիք,
Պատերազմի վառ հանդէս։»

«Ա՛մենայն տեղ մահը մի է,
Արդ մի անգամ՝ պիտ՝ մեռնէ.
Բայց երանի՜, որ իւր ազգի
Աղատու թեան կը զոհվի։»

«Գնա, եղբայր, Աստուած քեզ յայս,
Ազգի սերը քաջալեր,
Գնա, թէև չեմ կարող գալ,
Բայց իմ հոգին քեզ ընկեր։»

«Գնա մեռիր դու քաջի պէս,
Թող չտեսնէ Թշնամին
Քո թիկունքը, թող նա չասէ
Թէ վատ է Իտալացին։»

Ա՛սաց. տուեց օրհոցը
Իւր եղբօրը մի գրօշ,
Մետաքսից էր, աղնիւ գործած,
Ուր երեք գոյն կան որոշ։

Եղբայրն առաւ և ողջունեց
Իւր սիրական քնքուշ քոյր,
Առաւ ղէնքը, սուր, հրացան,
Հեծաւ իւր ձին սևաթոյր։

— Գուրի՛կ, — դանչեց քաջ պատանին, —
Սենամս լարեաւ, սիրական,
Այս գրօշակին պիտի նայի
Ամբողջ բանակ Իտալեան։

Ձա սո՛ւրբ է ինձ, երբ մկրտված
Արտասուքով ու կնքած,
Դու յանձնեցիր ինձ յիշատակ,
Հայրենիքի նուիրված։

Ահ մեռանիմ, դու մի սգար,
Իմացիր որ տարեցի
Պէպ ի մահու ալքայութիւն,
Իմ հետ քանի Թշնամի։

Ա՛սաց. վազեց դէպ ի հանդէս
Ու ստրիացոց յանդիման,

Իւր արիւնով գնել յաւէժ,
Ազատութիւն Իտալեան։

Ա՛հ, իմ սիրտը կտրատվում
Տեսանելով այսպէս սէր,
Դէպ ի թշուառ մի հայրենիք,
Որ ոտնակոխ եղած էր։

Այրա կէսը, կէսի կէսը,
Գէթ երևէր մեր ազգում.
Բայց մեր կանայք.... ո՞ւր եղիշէ,
Ո՞ր մեր Քէնոյ Ֆոֆոսո՞ն։

Ա՛հ.... արտասուք ինձ խեղդումեն,
Ալ չեմ կարող բան խօսել.
Չէ.... թշուառ չէ Իտալիան,
Եթէ կանայք այսպէս են։

Կոմս Լ'Մանոել։

ՋՕԴԷՆ,
Մայնի վերայ Ֆրանկֆուրտի մօտ։

ՀՈՒՆԳԱՐԱՑԻՈՑ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵՆԻՑ ԱԲԱՅ։

1.

ԵՐԳ ՄԻ ԶՕՐԱԿԱՆԻ։

Խելքըս ու միաքըս արիւնաշաղախ
Օրեր կը սպասեն, որ գան անյապաղ.
Ա՛յս օրերն են որ աշխարհ կը քանդեն,
Ա՛յս օրերն են որ աշխարհ կը փրկեն։

Օ՛, էնքի շառաչիւնը թէ երկինք հասնէ,
Թայց մեր դրօշակը յաղթութիւն յայտնէ,
Հրճուանք ու պարծանք է այն իմ համար,
Ամեն ցանկութիւնըս կը ստանան կատար։

Սրընթաց ձիուս կողերը կը խթեմ,
Որ քաջերի մէջ շուտով հասանեմ.
Հայրենեացս համար չէ՛ ինչ իմ աչքում,
Ո՛չ վէրք և ոչ մահ և ոչ գերութիւն։

Թէ սուր թշնամւոյն սիրտըս թափանցէ,
Ունիմ ես մի ոք, որ խոցըս ծածկէ.
Ունիմ ես մի ոք, որոյ նուէրքը,
Հզօր քան բազում, կ'րուժեն իմ վէրքը։

Յակ թէ թշնամիք գերի ինձ առնուն,
Սը պայ կը գանէ նա ինձ մուխ բանտում.
Երկու գեղեցիկ աչունքը փայլուն
Կը լուսաւորեն խաւարիս անկիւն.

Թէ մահ հանդիպի պատերազմի մէջ,
Որ պայ իմ հրեշտակ կինըս սիրասիրէ.
Արիւնաթաթախ մարմինըս լուանալ
Իւր արտասուքով նա չի ձանձրանալ։

2.

ԴԻՊ Ի ԳԱՐՈՒՆԸ

Ձմեռան որդեկիկ, դու մատաղ գարուն,
Ցոյսերով լցված իմ ուրախութիւն.
Ո՞ր ես և ինչո՞ւ այդպէս ուշ կը գաս,
Բազմել քո գահը մի՛ թէ չը ցանկաս։

Ե՛կ դու, եկ գարուն, դէպ ի մեր երկիր,
Մերկացած բնութեան քաղցր աչքով նայիր,
կապուտ երկնքով, կանաչ ծառերով,
Այդ աստուածաստեղծ տաղաւարներով։

Ե՛կ դու բժշկել մեր արշալոյսը,
Որ քեզ է կապել միակ իւր յոյսը.
Այդ սիրուն դստրիկը ստեղծագործութեան
Հիւանդ է այժմ, առանց օգնութեան։

Ա՛յս նորէն կ՚օրհնէ մարդապետինքը,
Այն ինչ դու կ՚օրհնես կապուտ երկինքը.
Քեղնէ բժշկված նոր ուրախութեան
Արտասուք կը ջրէ երկիրըս հնամեայ։

Դու բեր իմ համար քո արտուտները,
Բանաստեղծի քաղցր տարփածուները.
Մանկական երգերս սոքա ուսուցին,
Ազատութեան գինը սոքա հասկացրին։

Ձը մոռանաս դու անոյշ ծաղիկներ,
կապիր նոցանէ գեղեցիկ փունջեր,
Ա՛ռ երկու ձեռքդդ, վազիր դէպ ի մեզ,
Որ ծարաւ սրտերս բուրմամբ զովացնես։

Մ՚ահու բանակն է սաստիկ տարածվել,
Ազատութեան սուրբ զոհերով լցվել.
Այս յետին օրերս շատ քաջեր անկան,
Ծաղիկ հասակում կեանքէ զրկվեցան։

Նոցա մարմինքը առանց պատանի
Պառկած են կարգով մէջ գերեզմանի.
Ծածկիր քո ձեռնով այդ սուրբ նշխարներ,
Ջոխ առատ սփռիր վարդ մանուշակներ։

Մ. Բռ–պաղէան։

ՑԵՍԻԼ·

Աշնան վերջերում, նոյեմբեր ամսին
Ցրտից ստիպուած իմ տանս միջին,
Հիւանդ, անկողնուն տրտմալից սրտով,
Մնացի ամբողջ, երեք օր, վերջին,

Եղյց ու գնացի մեր գիւղին մօտիկ
Գեղեցիկ մի դաշտ, դրուեցամբ փոքրիկ,
Որոյ սահմանը փակել են լերանք.
Տեսարան աչքի ուրախ, գեղեցիկ։

Հնութիւնն իւր ամեն գեղեցիկ ձիրքեր,
Զեղխօրէն այս տեղ անխնայ ցանել էր.
Ձմեռան ցուրտ շունչ թէև դեռ չկար,
Բայց պարզ նորա հետք երևելի էր։

Արևն երբ որ գեղեցիկ դէմքով
Հորիզոն ի վեր խաղումէ փառքով,
Առաջին իւր լոյս, կարծես թէ այս տեղ
Պիտի ամիսուէ ոսկեայ ճառագայթով։

Խակ լուսնի պայծառ լոյսը խաւարի,
Հեռերը անհետ առնէ գիշերի,
Եւ մի հոյակապ կրակի նման
Այս դաշտի վերայ վառ լուսով փայլի։

Մինչ այսպէս միայն կայի զարմացած,
Ասելով «մեծ է փառքդ, ո՛վ աստուած....»
Եւ ահա տեսայ մի մարդ հոյակապ,
Բլրի գագաթից իջանումէ ցած։

Արագ ու փայլուն դէմքով մօտեցաւ,
Անունս, աղգանունս իսկոյն հարց տուաւ.

Եւ երբ ճանաչեց Հայկազեան սերունդ,
Իւր սուրբ բերանը կրկին բաց արաւ.

«Ընուէնս է ոգի հայասէր մարդկան.
Ծնունդ եմ միակ սիրոյ մարդկութեան.
Սկզբից մինչև այժմ անարգ մարդու պէս,
Շրջումեմ անտուն և միշտ անկայան.

«Ումն ի Հայի չար վարք ու բարքեր,
Զարկեցին սրտիս բիւր հազար նետեր.
Իմ պաշտօն Թուեցաւ նոցա հակառակ
Երբ սփռումեի սուրբ սիրոյ սերմեր.

«Ախ իմ խօսքերին ընդդէմ ու ներհակ
Շինեցին նոքա մի չար ամբարտակ.
Դարձան Թշնամի անհաշտ ազգութեան,
Թաւիեցին արիւն Հայոց համարձակ.

«Ո՞ւր, որի՞ գործը, որ մարդու արարք,
Պատմեմ մի առ մի, պատանի Հայազգ.
Մեհրուժան, Վասակ, Նիկոլ, Կիրակոս,
Զանգագ, Վեստ Սարգիս, դիւածին Սուրմակ,

«Ընդան ազգութեան կործանիչ պատճառ,
Աւերման երկրի, գործողք անարգար.
Ազգութեան հիմքը, նաև հաւատքի
Խախտեցին նոքա մինչ ցայսօր իսպառ.

Սոցա գործերը չէր մեզ բաւական.
Սատանայ բնութեամբ, մի մարդ անպիտան
Սողաց դժոխքից, ինչ կայծակ զարկեց,
Թաւիեց արիւնը....ծերի պատուական.

«Հայազգի սիրտը ի սուգ համակեց,
Նորա խորհուրդները հիմնովին քանդեց.
Ազգի վէրքերի թարախը սրբելու
Փոխանակ, կրկին վէրքերը բացեց.

«Այդ և արժանի, այսօր ահա նա,
Հազար, բիւր տանջանք պիտի ստանայ.
Թէ այս տեղ, թէ անդ, Աստուծոյ ձեռնից.
Ցաւիտեան ի հուր գեհենին կը ձգայ.»

Ա՛յսպէս ասելով գնացինք միասին,
կանգնեցինք բլրի մաքուր պագաթին.
Անտի տեղից ցոյց տուեց մի վանք հոյակապ,
Շքեղ զարդարած պարսպով ահագին։

«Այս տեղից ահա ես եկայ քո մօտ,
պատմելու մի անցք, որ այս առաւօտ
Անցաւ իմ ու միւս մարդկան առաջև,
Ահա պարունակ անցքին համառօտ։

«Պաշտօնեա անուամբ գնացէք այն տեղ,
Մտայ վանքի մէջ, զարդարած շքեղ,
Սենեկից սենեակ անցայ, և միւսում
Զանազան ալեօսք դրած են մէջ տեղ։

«Ջանայաւ մի րոպէ, և ահա եկան
Զանազան մարդիկ, իմ մօտ ներս մտան.
Ամէնն իւր համար պատրաստած տեղում
Կարգով, տխրութեամբ, կարծես բազմեցան։

«Վակ նոցա մէջ տեղ մի մարդ էր բազմած,
Պաշտօնին յարմար զգեստներ հագած,
Մօրուքն սպիտակ, փառահեղ, գունեղ,
Կարճիկ հասակով, սրբութեամբ վառուած։

«Ընդհէղ, սուրբ սիրոյ կայծը երեսին
Փայլատակէր, յստակ վերայ ճակատին
Կապել էր կամար շնորհք արարչի
Հարազատ պարգև հայապղի ոգին։

«Վերեզմանական լուսթիւն խորին
Պատել էր նստած մարդերի սրտին.
Մի մարդ սկսաւլուս հասակով միջակ
Ձորած էր անձայն ծերի առաջին։

«Լ՛ռանձ սկսանձ, աչքի մէջ արիւն....
Պարզաբար տեսայ, տեսիլ մտայլուն.
Դիմաց գծագիրն ինձի ցոյց տուեց,
Այս պարզ նշաններն, գիրսաս էր անուն։

«Փառահեղ դէմքը ծեր մարդոյ, ուրախ,
Սկսաւ բարբառել հոգով անխարդախ,

Որ ներէ յանցանք այն չքաճ մարդու
Որ մերկ դիմակով սատանայ խարդախ։

«Աչեց. ով Գիրսաս, ծառայ հաւատար,
Զկամիմ Թողուլ խորհուրդս անկատար,
Եւիր ու գնա կրկին քո տեղին,
Ուստի քո տիրոջ հրամանովն եկար։

«Հատ մարդիկ ինձի, երբեմն խօսքով,
Գանգատ տուեցին երբեմն գրով.
Բայց և բոլորի վատաբանութիւնք
Անպտուղ եղան քո պատճառներով....»

«Դուռ խօսքը կիսատ, դռները բացուեց,
Սև ագլուխ մի մարդ մեր ներս մօտ վազեց,
Կատաղի դէմքով նայեց չոքածին
Եւ նորա կողքին ինքն ևս չոքեց։

«Հայր իմ ալեզարդ, ծերունի Հայկազն.
Խիղճ իմ ստիպեց, որ ուղիղն ու պարզն
Ցայտնեմ ձեր առաջ, որ այսքան տարի
Պահել չկարացայ, գիտէ տէր Աստուածն....

«Հայց նախ խոստացիր, հայր իմ հայազգի,
Տալ իմ մարմինը կերակուր շների.
Կամ ի կախաղան, նշաւակ մարդկան,
Միայն թէ չտալ նուիրած հողի։

«Ծերունի մարդու....այս իմ պիղծ ձեռներ
Թաթաւեց արեամբ այս չոքած ընկեր.
Վայ իմ տարաբաղդ գլխին յաւիտեան.
Չկան ինձ ոչ այս, ոչ այն տեղ յոյսեր։

«Ծոյն խառնած նռան հետ կարմիր ջրի
Նորա խորհրդով սուրբ ծերին տուի....
Նա միւս առաւօտ չկար երկրումս....
Նորան այն մահով մեծ վիրաւք հատուցի։

«Հայց, արձակ մեր մեղքն խոստովան եղայ,
Մեր դատաստանը ձեր կամացն կայ.
Տուէք երկուսիս արժանի պատիժ
Ինձ և Գիրսանին, ընուիճեամբ սատանայ։»

«Հետոյ դադարից. խորին լռութիւն
Տիրեց սրտերին, դիմաց ամենուն,
Ապա ալեզարդ ծերը բարկութեամբ
Գոչեց բարձրաձայն, յայտնի բոլորուն։

«Վա՜հ դու որդի....ա՛յ դու մարդասպան,
Անխիղճ, անհոգի, բաժին դիւական.
Ի՛նչպէս իշխեցիր ձեռներդ յուդայի
Թաթաւել մի մեծ մարդու մէջ արեան։»

«Այս խիստ ընթացքը յանկարծ հանդարտեց,
Ջերաջերմ արտօսր երեսին վազեց,
Իբրև մարգարիտ թաւխուեցաւ գետին.
Դարձեալ առաջին բարկութեամբ ասեց։

«Իմ արդար դատից, չէս երբէք պրծնիլ.
Զանազան կերպով հարկ է քեզ տանջուիլ.
Անիրաւ, անգութ, անխիղճ դիւածին,
Քանի կենդան եմ, ինձնից չէս փրկուիլ։

«Իսկ այն աշխարհում ծերունու....և քո,
Դատաստանն կայ ձեռին Աստուծոյ.
Նզովեալ լինիս, դաւաճան ազգի....
Կայեն, Մէհրուժան, դահիճ արդարոյ....»

Ա Զ Դ.

Խանաստեղծ մարդու կեանքը շատ ծանր է.
Ամեն վատ համբաւ խիստ դառն ցաւ է.
Ցաւին համբերիլ մի դժուար գործ է.
Բերան բաց անել զուր, անարժան է։

Ինքնար մարդու հետ խօսելն է կրակ.
Զարժէ բերանին տալ ընթացք արձակ.
Կամ դանդաղ քայլով գրիչը բարակ
Տանել ու բերել, գործ անարժան է։

Ինքնաշօղ մարդուն իւր միտքը յայտնել,
Հազար թիւր փաստով ճշմարիտն ասել.
Սակայն նա իւրը կը ցանկայ գործել,
Այսպիսիներին, գիր անարժան է։

Ինչ նա որ գիտէ բարին ու չարը
Եւ դոցա բարի, չար հետեւանքը.
Գործումէ ներհակ, քարի տալ գլուխը.
Նորա հետ խօսել լինէ անարժան է։

Աշխարհիս միջում, որդիք բարութեան
Թշնամիք են միշտ որդւոց չարութեան.
Անհաստատ է ես տէր եմ ընութեան,
Այս տեղ յայտնելը զուր, անարժան է։

Պատանայ է նա, որ իւր լուն նախնեաց
Սուրբ կրօն և ծէս, պատուիրանք Թողած,
Կ'երթայ կշտացնել իւր փորը քաղցած,
Նա մարդու անուն կրել անարժան է։

Նորա աչքերը փառքի նշոյլներ,
Ջանազան խոստումնք, անարգ պարգևներ
Շլացնումեն — անճնաեկր ախտեր,
Անպիտան ապրել տալ անարժան է։

Ինչ մարդու միտքը, որ այս աշխարհում
Լաւ կեանք անցկացնել, փառքեր է ուզում.
Սեւիսկան գոյքից շուտով է զրկվում
Փրկչի Դոցա խօսք զուր, անարժան է։

Ինութեան կարգն է, ուր որ կայ ծաղիկ,
Հոտաւէտ մի վարդ տեսլեամբ գեղեցիկ.
Այն տեղ կ'լինի, գոնէ փուշ փոքրիկ.
Ամենքն գիտեն, ասելն արժան չէ։

Այդց աղգի մէջ եղան վասակներ,
Մեհրուժանք, Նիկոլք և վեստ Սարգիսներ.
Բայց նոցա յաղթող եղան վարդաններ,
Ամեն Հայ գիտէ, ասելն արժան չէ,

Ուանց խորհրդի, խօսելն է անկել,
Թուղթ անմտութեամբ Թանաքով ներկել.
Դու, Որսորդ, քո հետ լինէ հարկ չէ խօսել
Գեռ այս քան գրածս քեզ անարժան է։

Վահանէ։

1. Հիսիսափայլ օրագիրը ամիս ամիս դուրս գալով, պարունակելու ի իւր մէջ ճառեր ընդհանուր Երկրագիտութեան, ընդհանուր Պատմութեան և Աշխարհագրութեան, այլև մասնաւորապէս Հայրենական պատմութեան և աշխարհագիտութեան վերայ:

2. Ինագիտական ճառեր, այսինքն բնութեան օրէնքներէն և դոցա գործադրութեան վերայ մարդուս օգտի համար, ճառեր զանազան ֆիզիքական յայտնագործութիւններէն, հասարակաւոր Աստղաբաշխութեան, Քիմիայի, Հանքաբանութեան և Ֆիզիօլօգիայի վերայ. այլև բանաւոր սութիւն տունկերի, գիտութեան արժանի բոյսերի, նոցա տնկարկութեան և օգտի վերայ, վերջապէս կենցաղօգուտ գիւտերի և յայտնագործութիւնների մասին:

3. Խարոյական, գեղեցիկ բանասիրական ճառեր, առաւել ընտիր մտածութիւնք և ոչացողութիւնք թէ ոտանաւոր և թէ արձակ ոճով. թարգմանութիւնք հին հայկական, և հին ու նոր եւրոպական մատենագրութիւնից. այլև Կրիտիկայք (ուսումնական քննութիւնք) նորատիպ հայերէն գրուածների վերայ:

Ցանկացողքը ստանալ այս օրագիրը կարող են հասուցանել իւրեանց խնդիրը կամ ղղակի Հրատարակողին Մոսկվայի մէջ այսպէս. въ Редакцію Армянскаго Журнала «*Сѣверное Сіяніе*», въ Москвѣ, на Черногрязкѣ, въ домѣ Статскаго Совѣтника С. Назарьянца. կամ թէ Մոսկվայի նամակատանը այսպիսի հասցէով. въ Газетную Экспедицію Московскаго Почтамта.

Տարեկան 12 տետրակների գինը է 8 մանէթ Մոսկվայի մէջ, բայց ուրիշ քաղաքներէ համար $9\frac{1}{2}$ մանէթ:

Печатать позволяется. С. Петербургъ. 18 Сентября 1861 года.

Исправляющій должность Цензора

С. Загибенинъ.